² Հարությունյան Ս., Շուշիի ազատագրման պատմագրության հիմնահարցերը, «Միջազգային գիտաժողով՝ նվիրված «Մեսրոպ Մաշտոց» համալսարանի 10-ամյա գործունեությանն ու Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին». զեկուցումների հիմնադրույթներ, Ստեփանակերտ, 2007, էջ 12:

³ Հարությունյան Ս., Շուշիի ազատագրման պատմագրության հիմնարցերը// «Մեսրոպ Մաշտոց» համալսարանի «Լրատու» (Գիտական հոդվածների ժողովածու), Ստեփանակերտ, 2007 հմ.2, էջ 47-48:

⁴ Հասրաթյան Ս., Գոյամարտ, Ստեփանակերտ, 1998:

⁵ Հասրաթյան Ս., Ղարաբաղյան պատերազմ, Եր., 2001:

⁶ Մինասյան, Է., Արցախյան ազատամարտի պատմության ուսումնասիրության արդի վիճակն ու խնդիրները// «Լրաբեր Հասարակական Գիտությունների», 2005 հմ. 2 էջ 35:

հեղինակը ուշադրություն չի դարձրել: Այդ աշխատություններից որոշները օգտագործել ենք սույն հետազոտությունը կատարելիս¹:

Ս. Հասրաթյանը,² բացի վերոհիշյալ աշխատություններից, հրատարակել է նաև այլ ուսումնասիրություններ ևս:

Անդրադառնալով անառիկ բերդաքաղաք Շուշիի ազատագրմանը և հիմք ընդունելով միայն ադրբեջանցի հեղինակների աշխատությունները ու այս հանրապետության ռազմական գերատեսչության նախկին բարձրաստիճան պաշտոնյաների ցուցմունքները՝ Ս. Հասրաթյանը փորձել է այնպիսի տպավորություն թողնել, թե մինչ իրեն ոչ մի հեղինակ այդ թեմային չի անդրադարձել³: Ինչպես հայտնի է, դեռևս 2001թ. «Կոմսանդոս» չԿ-ի «Բարի օր» պաշտոնաթերթում (հմ. 9,10 2001թ.) Շուշիի ազատագրմանը նվիրված հոդվածների շարք է հրապարակել, օգտագործելով միայն ադրբեջանական աղբյուրներ⁴: Նման մի հոդված, ադրբեջանական ռազմական համակարգի մի շարք աշխատողների ցուցմունքների հիման վրա, ԱՀ ՊԲ պաշտոնաթերթում հրապարակել է պատմաբան Միեր Հարությունյանը⁵: Էլ չենք խոսում վերջինիս կողմից «Արցախյան պատերազմի սկիզբը և Շուշիի ազատագրումը» վերառությամբ մենագրությունում ադրբեջանական կողմի դիրքոշումներին առավել վաղ անդրադառնալու մասին⁶:

Բերդաքաղաք Շուշիի ազատագրմանն անդրադարձել են նաև Ադրբեջանի պետական քարոզչամեքենային հավատարմորեն ծառայող գրչակները, որոնք իրադարձությունները ներկայացրել են իրենց կեղծարարական ձեռագրին յուրահատուկ ոճով⁷: Վերջիններս իրենց աշխատություններում շրանառության մեջ են դնում հետևյալ ապագիտական թեզերը.

- 1992թ. մայիսի 8-ի գիշերը «հայկական ահաբեկչական խմբավորումները» նախկին խոհրդային միության «366-րդ մոտոհրաձգային գնդի մասնակցությամբ և 40 զրահամբենաների, հրետանային կրակի օժանդակությամբ»... «զավթեցին» Շուշին⁸: Նման ձևակերպումներ օգտագործում են նաև Իվանյանի (ադրբեջանական հորջորջմամբ՝ Խոջալուի) ազատագրման ու այնտեղ տեղի ունեցած իրադարձություններին նվիրված աշխատություններում⁹: Հարկ ենք համարում ընդգծել, որ դեռ 1992թ. մարտի 10-ին ԱՀ տարածքից դուրս բերվեց Ստեփանակերտում տեղակայված 366-րդ մոտոհրաձգային գունդը:
- Հաճախ էլ օգտագործում են «երրորդ ուժի ակտիվ մասնակցություն»¹⁰ եզրույթը. մեր կարծիքով՝ խոսքը ռուսական ուժային կառույցների մասին է, որը իրականության հետ որևէ աղերս չունի: Ամբողջ ազգային ազատագրական պայքարի ընթացում ոչ 366-րդ

¹ Հասրաթյան Ս., Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության բանակ, Եր., 2013, 324 էջ:

² Հասրաթյան Ս., Մարտանցում (ԿՊՇ մարտական ուղու պատմություն), Եր., 2002, նույնի՝ Գեներալ Իվանյան, Ստեփանակերտ, 2004, Գաղափարի զինվորը, Եր., 2006, 160 էջ ՊԲ պաշտպանական շրջանները Ղարաբաղյան պատերազմի գլխավոր ռազմաճակատներում, Ստեփանակերտ, 2008, Հաղթող բանակի զորահանդեսը, Եր., 2013, 176 էջ, (հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն լեզուներով):

³ Տես՝ Հասրաթյան Ս., Շուշիի «անկումը»// «Մարտիկ» հմ. 2006թ. 18 մայիս:

⁴ Հարությունյան Ս., Վերստին Շուշիի ազատագրման պատմագրության հիմնահարցերի մասին// «Կաճառ» (ԿԳԿ տարեգիրք): Գիրք 1 (10-22), Շուշիի «Կաճառ» գիտական կենտրոնի հրատ., 2008, 148-149:

⁵ Հարությունյան Ս., Շուշիում կոտրվեց Ադրբեջանի ռազմական մեքենայի ողնաշարը// «Մարտիկ» թիվ 20, 2004թ. Մայիս:

⁶ Առավել մանրամասն տես՝ Հարությունյան Ս., Արցախյան պատերազմի սկիզբը և Շուշիի ազատագրումը, Եր., 2000, էջ 9,154:

⁷ Пашаев А.А., Геноцид, депортации и территориальные претензии армян к азербайджанскому народу (XIX-XX вв.) Баку, 2013, стр.139. Ахмедова Ф., Шуша – культурный центр Азербайджана// «Наследие» № 6 (72), 2014, стр. 15-16, Dünyanın Qarabağ ağrısı, tört. ed. K.Səmədzadə; red. S.Məlikzadə; ix. red. və burax. məsul Ş.Qəmbərova; F.Köçərli adına Respublika Uşaq Kitabxanası.- Bakı, 2017, s 3, 12-13.

⁸ Şuşa-qədim Azərbaycan diyari, Layihənin rəhbəri “Azərbaycanda Miqrant və Məcburi Köçkünlərinin Hüquqlarının Müdafiəsi” İctimai Birliyinin icraçı direktoru Dəyanət Musayev, redaksiya heyəti: Professor Nədir Abdullayev, professor Camal Mustafayev, Qədir Nəsirov, Zəhid Abbasov, Svetlana Əsgərova, Samir Sadayev, s 13, Шуша - древний край Азербайджана, стр. 25, Shusha- old Azerbaijan land, Бақы, 2009, s 37.

⁹ Ровшан Мустафаев, Преступления армянских террористических и бандитских формирований против человечества (XIX-XXI вв.) Краткая хронологическая энциклопедия, Баку - ЭЛМ – 2002, с. 130, QAT (Qarabağ Azadlıq Təşkilatı). Xocalı soyqırımı. Bakı, 2015, s.4.

¹⁰ Иман Оглу И., Боль наша, Шуша//«Вышка» 4 мая 2007 г., стр. 7.

մոտոհրաձգային գունդը, ոչ էլ հետագայում Ռուսաստանի Դաշնության այլ ուժային կառույցներ հայկական զինված ուժերի կողմից չեն մասնակցել: Ընդհակառակը, դեռ 1991թ. ապրիլի 30-ին, խորհրդային զորքերի անմիջական մասնակցությամբ, կազմակերպվել է «Օղակ» ռազմագործողությունը, որի հետևանքով բռնազավթվեցին և հայաթափվեցին հայկական մի շարք բնակավայրեր:

Պատմագիտական ուսումնասիրություններից բացի Արցախյան ազատամարտը իր արտացոլումն է գտել նաև գրական-գեղարվեստական¹ ստեղծագործություններում:

Օբեկտիվ պատճառներով հնարավոր չէ մեկ հոդվածի շրջանակում անդրադառնալ խնդրո առարկա թեմային նվիրված ամբողջ հրապարակումներին: Դրանց կանդրադառնանք մեր հետագա ուսումնասիրությունների ընթացքում:

¹ Խանյան Ս., Ընտիր երկեր: Հատոր VII: Ազգային ճակատագիրը և հայ պոեզիան: Դասագիրք, Ստեփանակերտ, 2010, նույնի՝ «Մարտնչող գրականություն»: Գրականագիտական ուսումնասիրություններ և գիտական հոդվածներ, Ստեփանակերտ, 2012, տես նաև՝ Գրիգորյան Ա., Ազատամարտի Արցախյան պոեզիան, Ստեփանակերտ, 2015, նույնի՝ Ազատամարտի Արցախյան պոեզիան: Պատմական ուրվագիծ, Ստեփանակերտ, 2015:

УДК 94 (930.85:479.243)

Культурология
Арсен Аракелян
РАУ**КУЛЬТУРА КАК СРЕДСТВО ВЫЖИВАНИЯ**
(на примере Арцаха)

Народ - это носитель культуры, созданной им на всем протяжении существования. Культура определяет и статус развития на разных этапах человеческого бытия: чем больше развито общество и чем насыщеннее его мировоззрение, тем больше его вклад в развитие мировой культуры. Арцах - это место, где веками жили армяне, этому свидетельствует культурное наследие оставленное нашими предками, которое насчитывает века. Арцах был колыбелью национальной культуры и образования. Наследие дает характеристику народа, и задача поколений придерживаться истоков, дабы не потерять эксклюзивность (идентичность). В каждом народе есть генетический код, который составляет стержень несущего его представителя на неосознанном уровне и в этом коде обязательно присутствует раздел культуры восприятия и отдачи. Народ, не ценящий свою культуру, не защищающий ее, а также не развивающийся в соответствии с настоящими требованиями времени, не имеет будущего.

В статье доказывается тезис о том, что только понимание и достоверная оценка проблемы во временном объеме и контексте актуальности может стать достойной точкой опоры для рассмотрения задач образования и культуры как фактора международного гуманитарного сотрудничества.

Ключевые слова: культура, мировоззрение, культурное наследие, генетический код, образование.

Arsen Araqueyan
RAU**CULTURE AS A MEANS OF SURVIVAL**

The article isn't a leaflet of personal recipes though in my opinion it contains interesting observations and suggestions. The article invites the teachers of creative professions to joint research, analysis of already existing innovative practice, reforming traditional methods into effective, productive and constructive restart form of "student-teacher" communication.

Key words: culture, world outlook, cultural heritage, genetic code, education.

Արսեն Առաքելյան
Հայ-Ռուսական Համալսարան**ՄՇԱԿՈՒՅԹԸ ՈՐՊԵՍ ԳՈՅԱՏԵՍԱՆ ՄԻՋՈՑ ԱՐՑԱԽԻ ՕՐԴՆԱԿՈՎ**

Ժողովուրդը մշակույթի կրողն է: Մշակույթի զարգացվածությամբ է որոշվում տվյալ ժողովրդի աշխարհընկալումը այս կամ այն երևույթների կամ իրավիճակների վերաբերյալ: Մշակութային ժառանգության շնորհիվ է, որ ազգը ճանաչվում է միջազգային հանրության կողմից: Որքան զարգացած է երկրի մշակույթը, այնքան մեծ է նրա ներդրումը համաշխարհային մշակույթի մեջ: Արցախը մի վայր է, որտեղ դարերով հայերեն են ապրել: Դրա ապացույցն է մեր նախնիների թողած մշակութային ժառանգությունը: Արցախը միշտ գտնվել է մշակույթի և գիտության խաչփողանում: Ազր, որը ներկայում չի գնահատում, չի պաշտպանում և չի զարգացնում սեփական մշակույթը՝ ըստ ժամանակի պահանջների, չունի նաև ապագա:

Բանալի բառեր՝ մշակույթ, աշխարհայացք, մշակութային ժառանգություն, գենետիկ կոդ, կրթություն:

“В процессе своего развития мы достигли такого состояния, в котором мы обладаем огромным запасом знаний, но очень мало что понимаем. Вряд ли это положение послужило бы причиной для беспокойства, если бы огромные проблемы, с которыми столкнулось человечество, не нуждались в понимании, а требовали одного лишь знания.”

Манфред Макс-Нееф, лауреат Нобелевской премии, 1983 г.

Общеизвестно, что культура в своей классической интерпретации является *совокупностью материальных и духовных ценностей, созданных человеческим обществом и характеризующих определенный уровень развития общества*. По сохранившимся осколкам этих ценностей мы сегодня формируем свои представления о прошедших эпохах.

С древнейших времен руками художников, скульпторов, поэтов и писателей, писцов и архитекторов творились материальные и духовные ценности культурного наследия человечества, при этом сознательной и бессознательной мотивацией творцов были следующие основополагающие положения:

- человек смертен,
- есть потусторонний мир, куда устремляется душа умершего,
- человечество бессмертно посредством продолжения рода,
- природа вечна и ее ресурсы безграничны,
- за всем этим стоят бессмертные боги, олицетворяющие вечность, моральный кодекс человеческого общества, созидательные и карательные функции и общее руководство по управлению миром.

В 21-ом веке общественное сознание “цивилизованных” государств-лидеров и рвущихся вслед стран-сателитов потеряло центростремительную компоненту изложенных выше положений. Сегодня признается иная парадигма непреложных истин:

- да, действительно человек смертен,
- "там" - ничего нет,
- человечество смертно - по удлиняющемуся списку антропогенных причин конца света,
- природа не вечна, очень ограничена в ресурсах, беззащитна и стремительно приближается к точке невозврата, после которой последует мучительное умирание человечества,
- миром правят не справедливые “боги”, носители моральных начал, а золото, сила и фундаментальная тупость.

Возникает вопрос: откликнулись ли современные творцы культурных ценностей на кардинально изменившиеся культуuroобразующие факторы? Или они продолжают руководствоваться категориями давно ушедших эпох. А за ними и мы, проводники материальных и духовных ценностей в народные массы, пребываем в благостном дурмане средневековых пасторалей.

Давно уже стали привычными слова “глобализация”, “компьютеризация”, “мониторинг” и пара сотен подобных. Дети 21-го века сразу из пеленок оказываются у мониторов компьютеров. Сказки? Пожалуйста, вот тебе iPad, где есть все сказки мира. Родители же в это время спокойно могут заниматься своими онлайн и офлайн делами. Ученики, вооруженные последними достижениями науки и техники, заняты виртуально, а учительница надоедает какими-то скучными текстами. Блоги, твиттеры... и Жюль Верн с Майн Ридом также будут пылиться на полках. ВУЗ, бакалавриат, магистратура... Реферат? Нет проблем, - один клик и готово. Все стало легкодоступным, но то, что можно легко достичь, так же можно легко потерять... И при этом хуже всего, что ценнейший инструмент усвоения, осознания и понимания, то есть *получение полноценного образования* исчезает из пьедестала жизни. Да и нужен ли преподаватель вообще? Всегда можно перейти на дистанционное образование и довести контакт с педагогом до минимума...

Известно, что Сократ отказался от написания каких-либо трактатов, поэм, пьес и диалогов, и, конечно, не потому, что не владел письмом. Он был одним из самых образованных афинян своего времени. Больше того, он запретил ученикам и последователям записывать свои изречения и философские изыскания. Это делалось только лишь потому, что он считал живое общение, непосредственный научный или философский спор самым мощным фактором достижения истины. Слава Богу, что после смерти Платон нарушил запрет учителя.

По образованию я кинорежиссер. А также кандидат искусствоведения. На факультете культуры Ереванского педагогического университета преподаю журналистам режиссуру и монтаж. Казалось бы, зачем в учебную программу журналистов включены режиссура и монтаж. По всей вероятности руководители нашего института, когда создавали факультет культуры, уже были знакомы с легендой Сократа. Они понимали, что будущим деятелями разных видов искусств придется соприкасаться с сокровенной материей живого общения. Это в свою очередь требует целостного видения конечного продукта в самом начале творческого процесса. А это возможно, если владеешь мастерством оперативного анализа ситуации - по временной вертикали и горизонтали современности. В нашем случае журналист должен видеть еще в неотснятом материале конечный результат – отрежиссированный и смонтированный. А для этого необходимо глубокое понимание основ искусства и культуры общения, знание законов человеческой психологии, умение вовлечь собеседника в живой разговор.

Когда мне надо провести обсуждение по режиссуре и монтажу, я в силу моей основной профессии кинорежиссера останавливаюсь на нескольких культовых советских фильмах, как то: “Коммунист”, “Баллада о солдате”, “Летят журавли” и других. С моей точки зрения, они, кроме того, что являются

шедеврами киноискусства и не всегда известны студентам постсоветского времени, дают возможность с математической точностью отслеживать эмоциональную и монтажную инженерию режиссера.

Давайте рассмотрим фильм “Коммунист”. В процессе вводного просмотра я внимательно слежу за реакцией молодых людей, знакомых с Советским Союзом исключительно по рассказам родителей и не всегда взвешенными ретроспекциями средств массовой информации. Коммунистическая идея до них дошла в профанированном виде из уст ренегатов “оттуда” и неофитов новорожденных капиталистических идеологий “отсюда”. А уж о культуре коммунизма могли разве что случайно прочесть в завалившейся под диваном Программе КПСС: *“Культура коммунизма, вбирая в себя и развивая все лучшее, что создано мировой культурой, является новой, высшей ступенью в культурном развитии человечества.”* /Программа КПСС/ Благодаря творческому таланту режиссера Ю.Райзмана, студенты к середине фильма незаметно для себя попадают под гипноз игры Е.Урбанского, потому что это не агитка или “игра понарошку” в умирающего за коммунистические идеи актера. Они видят живого, настоящего, честного человека, который идет навстречу смерти, потому что “люди хлеба ждут”. Нет ни грамма пафоса в этих словах – герой обещал умирающим от голода людям привезти хлеб и должен сдерживать обещание, любой ценой. Это пример высоких человеческих отношений в гениальном исполнении артиста.

Фильм черно-белый, пленка – “Свема”, кинокамера – “Конвас”. Ни компьютеров, ни Долби звук, ни 3 и более D, а душа переворачивается. Еще до появления перечисленных “чудес” кинотехники Г.Козинцев написал: *“Кинематография с удивительной быстротой меняет свои черты. Техника преобразила экран. За сравнительно небольшой срок кино стало звуковым, цветным, широкоэкранным, открылись панорамные кинотеатры, циркорама. Всему этому можно только радоваться. Однако техника, даже самая совершенная, не становится искусством. На экране идет своеобразная борьба: техника побеждает, но и технику побеждают. Можно сказать иначе: технику одухотворяют, и только тогда вместо “живой фотографии” появляется киноискусство.”*¹

По свидетельству члена Римского клуба Клаудио Наранхо *“Гитлер сделал открытие, что с помощью контроля над образованием можно управлять обществом. Сколь бы чудовищной ни была его концепция, все же она в карикатурном виде отражает великую истину, и мы можем восстановить ее, поставив его утверждение с головы на ноги, ибо своей цели можно достичь не установлением “контроля”, а за счет внимания, таланта, сердечности и достинства. Воспитывая у молодежи человеческие качества, мы можем надеяться на создание лучшего мира”*. Эти слова были написаны видимо давно. Сегодня я бы откорректировал финал данной цитаты следующим образом: *“...мы можем надеяться на спасение нашего мира”*.²

Вот, на мой взгляд, те исходные позиции, с которых должен начинаться *новый* виток развития культуры *иного* качества и направленности. Проводники культурных традиций нового времени вынуждены будут отказаться от патриархальных методологий. Кроме всего этого процессам гуманизации препятствует поток хищных субкультур и лжекультур. Подобно тому, как трудно отличить истинного пророка в толпе лжепророков, так и простому человеку практически невозможно распознать созидательную, то есть “дарящую” культуру от стяжательской, хищной технологии духовного выхолащивания души человека.

Обыкновенные люди уже утратили иммунитет традиционного воспитания и блуждают в турбулентном вихре экзистенциальных неопределенностей. Мировое “зло”, свободное от моральных табу, наоборот, день ото дня наращивает арсенал деструктивного воздействия на душевный и духовный мир человека. К его услугам все новейшие достижения науки и техники, информационные технологии, методы психо-физических и нейро-лингвистических воздействий.

Исходя из сказанного выше, сформулируем цели и задачи, которыми должны руководствоваться деятели культуры уже сегодня.

Во-первых, культура, не утрачивая многообразия своей соотнесенности ко всем сферам человеческой деятельности, должна поменять акцент в сторону воспитательной функции.

Во-вторых, необходимо вернуть культуре консервативную составляющую, органически и генетически связанную с традиционными ценностями, “живущими” в душах людей. Это позволит им ориентироваться в лабиринте непонятого и стремящегося таковым оставаться авангарда.

В-третьих, поскольку культуре в обыденном понимании всегда приписывается образ вперёдсмотрящего, то ей более внимательно нужно взглянуть в сторону арьергарда, так как авангард, за которым нет арьергарда, обречен на неудачу.

В-четвертых, культура кроме ее первозданных функций должна стать средством выживания, поскольку я убежден, что в безмолвии забвения, в этом безумном потоке лжи умирает что-то очень важное и нужное для всех нас. “Нас” – это все “Мы”, человечество, которое в одночасье обнаружило, что

¹ Г.Козинцев, “Глубокий экран”, 1982 г.

² К. Наранхо. Агония патриархата. 1995 г.

Земля очень маленькая планета и не выдерживает человеческого насилия. И если мы, вот эти самые "мы", сегодня не поймем значимость происходящего, то потом придется заплатить слишком высокую цену.

Теперь набросаем основные задачи культуры как средства выживания.

1. Надо воспитывать нового человека. Эта фраза, независимо от своей вопиющей декларативности и частыми повторениями, низведенная до статуса "общего места" - единственный путь к 22-му веку. Не нужно искать иных путей спасения, нужно искать пути воплощения, осуществления этой доктрины..

2. Наша надежда – это наши дети. Процессы глобализации разнесли по всему свету столько мусора "религии потребительства", что этим вирусом заражены практически все. Но некоторые осознают ситуацию и готовы противостоять деструктивным процессам, а другие расслабленно несутся в потоке порочной идеологии обывателя – "что я могу сделать в одиночку?" или "как все, так и я". Есть еще прослойка плохо информированных оптимистов, которые считают, что все утрясется само собой, без их участия и труда. "Все будет хорошо", - говорят они, от всей души сопереживая героям сериалов.

3. Нет. Все не будет хорошо, если ничего не делать. Что делать. Эти слова, без вопросительного знака, принимают форму инструкции к действию. Во-первых, мы все должны, именно *должны* осознать, какая миссия возложена на наши с вами плечи, поскольку выбор профессии проводника культуры в массы – это наш личный выбор. Я хочу сделать несколько предложений, которые могут быть полезными для разработки плана наших совместных действий.

Мои предложения.

1. Проверить истинность собственных критериев оценки того или иного объекта культуры на предмет конструктивности.
2. Проверить список объектов культуры, включенных методологические материалы на предмет соответствия желаемым морально-психологическим параметрам.
3. Подобрать также примеры негативных направлений в сфере культурных процессов, чтобы привить обучаемому контингенту иммунитет к деструктивному и хищному.
4. Модернизировать форму преподавания, акцентировать эмоциональную составляющую, использовать созвучную современному обществу вербальную структуру, попутно избавиться от анахронизмов и штампов, обычно выживающих в методологических документах.
5. Обсуждать собственные разработки, мысли и идеи с коллегами, что может помочь достижению оптимума.
6. С целью консолидации сил и возможностей преподавателей факультетов и институтов культуры по всему постсоветскому пространству и по всему миру, создать "Ассоциацию преподавателей культуры" для более успешной реализации новых идей и проектов.
7. Использовать возможности "Ассоциации" для продвижения инновационных проектов в структуре образовательной системы и прочих департаментах государственной власти.
8. Активизировать связи с коллегами за пределами одного конкретного учебного заведения, что определенно расширит спектр преподавания и восприятия учебного материала.

Не сомневаюсь, что с вашей помощью этот список можно обогатить, потому что только сообща можно добиться реальных подвижек в деле воспитания и образования. Именно исходя из этого культура может стать реальным средством выживания, ведь именно культура дает возможность сохранять непреходящие ценности, такие как жизнь, земля, человек, семья и др. Защита этих ценностей и приводит человека к осознанию своей роли. Продемонстрируем сказанное на примере арцахской войны. Миру так и не понятен феномен победы наших воинов: как без оружия и военной подготовки (ведь участвовали на войне люди мирных профессий: художники, поэты, писатели, музыканты, физики и др) они смогли одержать победу? Трудно объяснить миру, что взятие "высоты" для воина-армянина, это - возврат своих культурных ценностей, а не приобретение клочка земли. Приведем несколько фотографий, безмолвно доказывающих нашу мысль

Есть расхожее мнение о том, что когда гремят пушки, музы молчат. Во время войны Черчиллю принесли на рассмотрение бюджет страны. Полистав документ, он спросил:

-А где же затраты на культуру?

-Так война же идет! Какая культура?

-Если нет культуры, так зачем мы тогда воюем? - удивился Черчилль.

Думаю, что арцахская война доказала мысль Черчиля. В нашем случае пушки гремели, но музы не молчали и искусство становилось тем средством, с помощью которого наши воины выживали физически, духовно, нравственно. На войне, как известно, самое главное - здоровый дух, а здоровье духа зависит от того, какая ценность защищается воином. Наши солдаты защищали свою землю, веру, свои хачкары, церкви, письмена, дом, мать, - все, что составляет культуру. След, оставленный нашими предками в виде древнейших памятников: Гандзасар, Тигранакерт, множество церквей, построенных начиная с 4 века, мотивирует действия каждого воина-армянина. Следовательно, **культура является мощнейшим средством выживания народа.**

ՀՏԴ 94(339.1:479.243)

Պատմություն
 Նեղի Բաղդասարյան,
 պ.գ.թ., դոցենտ,
 ԱրՊՀ պատմության ամբիոն

**ՇՈՒՇԻՆ 19-ԴԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻ ՂԱՐԱԲԱՂԻ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ
 ԵՎ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ**

Հոդվածում ներկայացվել է 19-րդ դարի 1-ին կեսին ռուսական տիրապետության շրջանում Ղարաբաղի գավառի կենտրոն Շուշի քաղաքի վարչատարածքային և առևտրական դերն ու նշանակությունը: 1822թ. ռուսական վարչակարգի մուտքն ուղեկցվել էր նրա կառավարման համակարգի վերակազմակերպմամբ: 19-րդ դարի առաջին կեսին Շուշին կարևոր դիրք և հեղինակություն ուներ Այսրկովկասի մյուս նշանավոր քաղաքների շարքում: Շուշիի հարուստ առևտրական տները, կուտակելով պատկառելի դրամազույժ, այն 19-րդ դարի երկրորդ կեսին ծառայեցրեցին ինչպես սեփական գործի ընդլայնմանն ու զարգացմանը, այնպես էլ քաղաքի մշակութային կյանքի զարգացմանը: Այս կարգավիճակը քաղաքը շարունակեց պահպանել 19-րդ դարի 2-րդ կեսին և 20-րդ դարի սկզբին:

Բանալի բառեր՝ Գյուլիստանի պայմանագիր, Ղարաբաղի գավառ, Ռուսաստան, Շուշի, Այսրկովկաս, Շամախիի նահանգ, Բաքվի նահանգ, Ելիզավետպոլի նահանգ, առևտուր

Нелли Багдасарян
 Кандидат исторических наук, доцент
 Кафедра истории Арцахского государственного университета

**ШУШИ - АДМИНИСТРАТИВНО-ТЕРРИТОРИАЛЬНЫЙ И ТОРГОВЫЙ ЦЕНТР КАРАБАХА В
 ПЕРВОЙ ПОЛОВИНЕ 19-ГО ВЕКА**

В статье представлена административная и торговая роль и значение города Шуши – центра Карабахской провинции в период российского господства в 1-ой половине 19-го века. Становление российского административного режима в 1822 г. сопровождалось реорганизацией его системы управления. В первой половине 19-го века Шуши занимал важное положение и имел авторитет среди других известных городов Закавказья. Шушинские богатые торговые дома, накопив солидный капитал, во второй половине 19-ого века вложили его как в расширение и развитие собственного дела, так и в развитие культурной жизни города. Этот статус город продолжал поддерживать во 2-ой половине 19-го века и в начале 20-ого века.

Ключевые слова Гюлистанский, договор, Карабахская провинция, Россия, Шуши, Закавказье, Бакинская губерния, Шемахинская губерния, Елизаветпольская губерния, торговля

Nelli Baghdasaryan,
 Candidate of Historical Sciences,
 Associate Professor, Artsakh State University History Department

**SHUSHI - THE ADMINISTRATIVE-TERRITORIAL AND THE TRADE CENTER IN KARABAKH IN
 THE FIRST HALF OF THE 19TH CENTURY**

The article presents the administrative and trade role and importance of Shushi as of the center of Karabakh province during the Russian domination period in the first half of XI century. The entrance of the 1822 Russian administrative regime was accompanied by the reorganization of its government system. In the first half of the 19th century Shushi had an important position and authority among the other famous cities in the Caucasus. Shushi rich trading houses, having accumulated a considerable capital, in the second half of the 19th century invested it in the expansion and development both of their own business and the development of the cultural life of the city. This status of the city was preserved in the 2nd half of the 19th century and early 20th century.

Keywords: *Gulistan treaty, Karabakh province, Russia, Shushi, Transcaucasia, Baku province, Shamakhi province, Elisavetpol province, trade*

1813 թ. հոկտեմբերի 12-ին Գյուլիստանի պայմանագրով Ղարաբաղն անցավ Ռուսաստանի տիրապետության տակ /այն փոխարինեց պարսկական տիրապետությանը/: Ղարաբաղն առանձին վարչաքաղաքական և իրավասուբյեկտային միավորի կարգավիճակով անցավ Ռուսաստանին՝ ինչպես ներկայիս Ադրբեջանը կազմող տարածքները, Դաղստանը և Վրաստանը:

1822 թ. Ղարաբաղի խանության վերացումն ուղեկցվեց նրա կառավարման համակարգի վերակազմավորմամբ: Խանական կարգը վերացվել էր 1822 թ. նոյեմբերին, իսկ 1823 թ. վերջից ցարական կառավարությունը ձեռնամուխ եղավ ինչպես միացված այլ տարածքներում, այնպես էլ Ղարաբաղում ռուսական վարչակարգ՝ օրենսդրություն, կառավարման տնտեսական և քաղաքական համակարգ մտցնելու գործին: Հատկանշական է, որ Ղարաբաղի գավառի միակ քաղաք Շուշին դիտարկվում էր որպես ոչ միայն Ղարաբաղի վարչատարածքային կենտրոն այլ նաև հարակից գավառներն ընդգրկող վարչական շրջանի կենտրոն: Մասնավորապես՝ 1823 թթ. ցարական դեպարտամենտի կողմից հաստատված որոշման համաձայն ստեղծվում էր ռազմական շրջան՝ կազմված Շաքիի, Շիրվանի և Ղարաբաղի գավառներից¹ /պրովինցիա/: Ըստ որոշման՝ ռազմական շրջանի կենտրոնը Շուշի քաղաքն էր: 1823 թ. «Անդրկովկասի կառավարման կազմակերպման» մասին ցարական հրամանագրից հետո Երմոլովը որոշում ընդունեց ստեղծել «Շուշի ամրոցի և նրա շրջանի քաղաքային դատարան»: Քաղաքային դատարանի՝ դիվանի կազմում կային 4 ատենակալներ՝ 2 բեկ և երկու քաղաքացի՝ հայ և թաթար: Նրանք նշանակվում էին պաշտոնավարման մեկ տարի ժամկետով²: Ռազմական շրջանի պետ է նշանակվում Վ. Մադաթովը: Մադաթովի հրաժարականից հետո 1827 թ. օգոստոսի 27-ին Շաքիի, Շիրվանի և Ղարաբաղի ռազմաշրջանային պետ է նշանակվում իշխան Ի. Աբխազովը, իսկ 1827 թ. նոյեմբերի 10-ին Ղարաբաղի պարետ է նշանակվում մայոր Կյուլի ֆոն Կյուլզենհաուն³:

1835 թ. կազմվեց «Անդրկովկասի մահմեդական գավառների կանոնադրության ընդհանուր նախագիծը», որի առաջին գլխում որոշակիացվում էր «Մահմեդական գավառներ»/պրովինցիա/ անվանումը. «Անդրկովկասի մահմեդական պրովինցիաներ անվան տակ պետք է հասկանալ նախկին խանությունները՝ Ղարաբաղի, Շաքիի, Շիրվանի, Թալիշի, Դերբենդի, Բաքվի և Ղուբայի խանությունները՝ Ղարա-դայթաղի և Թաբասարանի հետ»: Ցարիզմի վարչաքաղաքականության մեջ տեղ գտած այս փաստն այսօր մեծապես շահարկվում է ադրբեջանական պատմագիտության կողմից, Մասնավորապես՝ շահարկվում է ցարական կառավարության կողմից Ղարաբաղի գավառի արհեստական մոտքագրման փաստը, այսպես կոչված «մահմեդական գավառների» շարք: Իրականում անվան որոշման համար հիմք է ընդունվել ոչ պատմական, ոչ ազգագրական բաժանման, և ոչ էլ առավել ևս՝ էթնիկական նմանությունների սկզբունքը, այլ ուղղակի իրականացվել է աշխարհագրական բաժանման սինթեզ՝ զուգահեռվելով կառավարման հարմարության սկզբունքին, ինչի արդյունքում «մահմեդական գավառների» մեջ արհեստականորեն մտցվել էր Ղարաբաղի գավառը: Կառավարման հարմարության, միայն աշխարհագրական գործոններով առաջնորդվելու սկզբունքը, էթնիկ կենտրոնացումներից խուսափելու ցարական ավանդական քաղաքականության կրողը տվյալ դեպքում Ղարաբաղն էր⁴:

Նախագծի համաձայն՝ մահմեդական գավառները պետք է բաժանվեին 2 մարզի, որոնցից առաջինի մեջ էին Ղարաբաղի, Շաքիի, Շիրվանի նախկին խանությունները՝ կենտրոն ունենալով Շամախի քաղաքը: Մարզերն իրենց հերթին բաժանվելու էին շրջանների, որոնք ունենալու էին իրենց շրջանային քաղաքները: Ղարաբաղի շրջանային քաղաքն էր լինելու Շուշին⁵:

1837 թ. Ղարաբաղի գավառի հարցը շոշափվեց «Ենթադրություններ Անդրկովկասի բաժանման մասին» նախագծում, որի համաձայն՝ Ղարաբաղի, Շաքիի, Շիրվանի և Թալիշի

¹ Туния В., Политика самодержавия России в Закавказье XIX-нач. XX вв. Часть первая, 1800-1826 гг., Ереван, 2006, с. 120.

² Туния В., Административно-экономическая политика самодержавия России в Закавказье 1-й пол. XIX в., Ереван, 2005, с. 27.

³ ՀԱԱ, ֆ. 319, ց. 1, գ. 1, թ. 1:

⁴ Բաղդասարյան Ն., Վարչաքաղաքական և սոցիալ-տնտեսական կացությունը Ղարաբաղում 1813-1867 թթ., Երևան, 2015, էջ 100:

⁵ Туния В., Политика самодержавия России в Закавказье XIX-нач. XX вв. Часть вторая, 1826-1836 гг., Ереван, 2006, с. 146-147.

շրջանները մտնելու էին Կուրի, ապա՝ վերակազմավորված Ներքին Կուրի մարզի մեջ՝ Շուշի մարզային կենտրոնով: Ըստ նախագծի՝ Ղարաբաղի շրջանը կազմվելու էր 5 մահալներից¹, որն ընդգրկում էր Ղարաբաղի լեռնային մասը, Վարանդան, Դիզակը, Ջիվանշիրը, Իզիրմիդորդը: Նախագիծը քննադատվեց անմշակ լինելու պատճառով և չիրականացվեց²:

1838 թ. մայիսի 19-ին Անդրկովկասյան կոմիտեի սենատոր Պ. Գանը Կովկասի կառավարչապետին ներկայացրեց «Անդրկովկասի կառավարման կանոնադրությունը», ինչը կառավարչապետ Ե. Գոլովինի կողմից վերջնականորեն հաստատվեց 1838 թ. օգոստոսին: Ծրագրի վերամշակման աշխատանքների ժամանակ գաղափար հղացավ, բացի Վրացա-Իմերեթական նահանգից և Կասպիական մարզից, կազմավորել մեկ նահանգ ևս՝ Հայկական մարզի և Ղարաբաղի գավառի միավորման ճանապարհով: Գաղափարի հեղինակն էր Չիչագովը: Սակայն 2 նահանգների համար աստիճանավորների նախատեսվող քանակի անբավարարությունը, ձևաչափի հաղորդակցության դժվարությունները, կառավարման համակարգի ծախսերի մեծացումը, երրորդ նահանգի ստեղծումը վերապահեցին կառավարությանը³: Առաջ քաշված ծրագիրն այդպես էլ չընթացքավորվեց և, դժբախտաբար, մնաց թղթի վրա:

Վարչական բաժանման փոխարեն 1839 թ. դեկտեմբերին առաջ քաշվեց Ե. Գոլովինի նախագիծը՝ 10 միլիոն ռուբլի տրամադրելու Կովկասյան երկրամասի բարեկարգմանը: Նախագծի համաձայն՝ պետք է բարեկարգվեր նաև Շուշիի ամրոցը, հաղորդակցության ուղիներ ստեղծվեին Ղարաբաղի և Նախիջևանի գավառների միջև⁴:

1846 թ. դեկտեմբերի 14-ին ցարական կառավարությունը Անդրկովկասը նոր վարչական բաժանման է ենթարկում: Այս անգամ ստեղծվում են 4 նահանգներ՝ Թիֆլիսի, Քուրայիսի, Շամախիի և Դերբենդի: Զանգեզուրն ու Ղարաբաղը՝ Շուշի վարչական կենտրոնով մտնում են Շամախի նահանգի կազմի մեջ⁵: 1859 թ. մայիսի 30-ին Շամախիում տեղի ունեցած ավերիչ երկրաշարժի պատճառով Կովկասի փոխարքա Ա. Բարյատինսկու առաջարկով կենտրոնական նահանգային վարչությունը տեղափոխվում է Բաքու⁶: Այդպիսով 1859 թ. դեկտեմբերի 6-ին Ղարաբաղի գավառը մտնում է վերանվանված Բաքվի նահանգի մեջ:

1867 թ. դեկտեմբերի 9-ի՝ ցարական կառավարության ընդունած նոր օրենքով Անդրկովկասը բաժանվում է 5 նահանգների՝ Քուրայիսի, Թիֆլիսի, Երևանի, Ելիզավետպոլի և Բաքվի: Լեռնային Ղարաբաղը մտնում է Ելիզավետպոլի նահանգի կազմի մեջ: 1868 թ. Ելիզավետպոլի նահանգի կենտրոն ճանաչվեց Գանձակը, որն իր բնակչության թվով և քաղաքին բնորոշ մյուս գծերով զիջում էր Շուշիին:

Ղարաբաղի գավառական կենտրոններ հռչակվեցին Թարթառը՝ Ջիվանշիրի համար, որի մեջ ներառվեցին Գյուլիստանի, Ջրաբերդի նախկին մելիքությունների տարածքներն ամբողջապես և Խաչենի մի մասը, Ջեբրայիլը՝ համանուն գավառի համար, որի կազմում էին Դիզակի տարածքի մի մասը, և Շուշին, որի մեջ ներառվեց ամբողջ Վարանդան, Խաչենի և Դիզակի զգալի մասը⁷:

Լինելով Ղարաբաղի գավառի վարչատարածքային կենտրոն Շուշին ձեռք էր բերել կենտրոնին բնորոշ բոլոր հատկանիշները, մասնավորապես իրականացնելով առևտրական և մշակութային գործառնություններ: Ռուսական տիրապետության հաստատումից հետո Շուշին ապահովում էր Ղարաբաղի գավառի ներքին և արտաքին առևտրաշրջանառությունը: Այս կարգավիճակը քաղաքը շարունակեց պահպանել 19-րդ դարի 2-րդ կեսին և 20-րդ դարի սկզբին:

1805 թ. Քյուրակչայի դաշնագրի կնքումով փաստացի ռուսական տիրապետության տակ անցնելուց հետո ինչպես Անդրկովկասի մի շարք քաղաքներ, այնպես էլ Շուշին առևտրական

¹ Վարչաքաղաքական բաժանման համար հիմք էր ընդունել Ղարաբաղի շրջանային բաժանման 1835 թ. նախագիծը:

² Туныя В., Политика самодержавия России в Закавказье XIX-нач. XX вв. Часть третья, 1836-1844 гг., Ереван, 2006, с. 25.

³ Туныя В., Административно-экономическая политика самодержавия России в Закавказье 1-й пол. XIX в., с. 63.

⁴ Շուշիի հատակագիծը բարեկարգելու մասին ցարական իշխանությունների նախագծերի մասին տե՛ս Մկրտչյան Շ., Լեռնային Ղարաբաղի պատմա-ճարտարապետական հուշարձանները, Երևան, 1980, էջ 131, 155, Պետրոսյան Ս., Շուշիի քաղաքաշինական զարգացման և ռեաբիլիտացիայի խնդիրները, Ատենախոսության սեղմագիր, Երևան, 2006, էջ 12: Акты, собранные Кавказской Археологической Комиссией /АКАК/, т. IX, Тифлис, 1884, док. 20, с.17-19.

⁵ «Кавказский календарь» на 1849 г., Тифлис, 1848, с. 37-40. Саркисян М., Из истории градостроительства Шуши, Ереван, 1996, с. 15.

⁶ «Մեղու Հայաստանի», թիվ 316, 1860, էջ 17: Ստեփանյան Գ., Բաքվի նահանգի հայությունը XIX դարի երկրորդ կեսին /պատմաժողովրդագրական ուսումնասիրություն/, Երևան, 2010, էջ 52:

⁷ Բաղդասարյան Ն., նշվ. աշխ., էջ 105:

կապեր էր պահպանում Պարսկաստանի հետ: 1809 թ. մի զեկուցագրում նշվում է, որ Շուշիում արտադրվում էր ամենալավ տեսակի մետաքսի հումք՝ մինչև 4000 փուլ, տորոն՝ մինչև 10000 փուլ: Այդ ապրանքները, ինչպես նաև մեծ քանակությամբ գոմեշի կաշի, արտահանվում էին Պարսկաստանի և Ատրպատականի քաղաքներ: Շուշիում իրացվում էին Հնդկաստանից բերված մեծ քանակությամբ ներկեր, որոնք Անդրկովկաս էին ներմուծվում անգլիական Արևելահնդկական ընկերության միջոցով¹: Ռուս-պարսկական պատերազմի ընթացքում, ցարական կառավարության հրամանով Ղարաբաղից, Շաքիից և Դաղստանից Վրաստան ներմուծվող ապրանքներից մաքս չէր գանձվում²:

1813 թ. հոկտեմբերի 12-ին կնքված Գյուլիստանի պայմանագրի 5-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ հոդվածները վերաբերում էին ռուս-պարսկական առևտրական կապերին: Համաձայն պայմանագրի կետերի՝ պայմանավորվող կողմերը պետք է թույլ տային վաճառականների ազատ երթևեկությունը ցամաքային և ջրային ճանապարհներով: Կարգավորվում էր նաև մաքսային համակարգը: Նախկին տարատեսակ մաքսերի փոխարեն սահմանվում էր ընդհանուր մաքս՝ ապրանքի արժեքի 5%-ի չափով³:

1813 թ. դրությամբ Ղարաբաղն առևտուր էր կատարում Վրաստանի, Ռուսաստանի, Ելիզավետպոլի հետ⁴:

Ղարաբաղում առևտուրն ուներ իր առանձնահատկությունները. եթե արտաքին առևտուրը կենտրոնացված էր ժամանակի մեծահարուստների ձեռքում, որոնք ի վիճակի էին վճարելու բազմաքանակ տուրքերը, նույնը չի կարելի ասել ներքին ապրանքաշրջանառության մասին: Միևնույն ապրանքից գանձվող տարաբնույթ տուրքերը Ղարաբաղի գյուղացիներին հետ էր պահում իրենց ապրանքները քաղաքի շուկայում վաճառելուց: Այդ է պատճառը, որ Շուշիում այդ տարիներին երբեմն թարմ միս չկար կամ էլ ձեռք էր բերվում բավական բարձր գնով:

Վերոնշյալ բոլոր հանգամանքներով հանդերձ՝ Շուշին համարվում էր առևտրական կենտրոն՝ հետ չմնալով Թիֆլիսից, Երևանից և ժամանակի նշանավոր քաղաքներից: Շուշին ընկած էր Թիֆլիսը Կասպից ծովի ափերի հետ կապող առևտրական մայրուղու վրա⁵:

Ցարական կառավարությունը 1821 թ. հոկտեմբերի 8-ի օրենքով Անդրկովկաս ներմուծվող ապրանքների համար սահմանեց 5% մաքս, իսկ Պարսկաստան առաքվող ապրանքների համար հաստատվում էր անմաքս տրանզիտ: Մաքսային նման քաղաքականությունը խթան հանդիսացավ նաև Շուշիի առևտրականների աշխույժ գործունեության համար: Արդեն 19-րդ դարի 30-ական թթ. ցարական պաշտոնական աղբյուրները վկայում էին, որ հայ առևտրականներն իրենց ձեռքն էին առել «Թիֆլիսի և ամբողջ Անդրկովկասի առևտուրը»⁶:

Տարեկան մինչև 250000 ռուբլի շրջանառություն ունեցող առևտրականները հիմնականում հայեր էին: Դրանցից հայտնի էին Շուշիի մեծահարուստներ Հախումյանների և Թառումյանների ընտանիքները: Հախումյաններն իրենց առևտուրը զարգացնելու նպատակով զարգացնում էին առևտրական դասակարգն իրենց բազմաթիվ «չրաղների» (գործակատարների) միջոցով⁷:

Շուշին եռանդով վաճառականության ոգի էր տարածում Ղարաբաղի ազգաբնակչության մեջ: Գործակատարների թվաքանակի մեծությունը պատիվ էր յուրաքանչյուր վաճառականի համար: Գործակատարները «մարդ դառնալու» ճանապարհին մեծ դժվարություններ էին հաղթահարում: Տարիներ էին անցնում՝ մինչև «դուքանի աշակերտը» հասնում էր ծայրագույն երջանկության՝ սեփական գործ, խանութ ունենալուն⁸: Շուշիի վաճառականական հաջորդ տունը Թառումյանների տունն էր: Այս տան հարստության հիմնադիրն էր Բաբա Թառումյանը, որին 1808 թ. տրվել էր

¹ Մարկոսյան Ս., Ռուս-ֆրանսիական և ռուս-անգլիական հակամարտությունը Պարսկաստանում Անդրկովկասի նվաճման կապակցությամբ, Երևան, 1935, էջ 76

² АКАК, т. III, Тифлис, 1869, док. 82, с. 46.

³ Туныан В., Административно-экономическая политика самодержавия России в Закавказье 1-й пол. XIX в., с.137, Семенов Л., Россия и международные отношения на Среднем Востоке, Ленинград, 1963, с. 43-44.

⁴ АКАК, т. V, док. 265, Тифлис, 1873, с.199.

⁵ Присоединение Восточной Армении к России, сборник документов, т. II (1814-1830), Ереван, 1978, с. 112-113.

⁶ Դիլոյան Վ., Արևելյան Հայաստանը 19-րդ դարի առաջին երեսնամյակին և հայ-ռուսական հարաբերությունները, Երևան, 1989, էջ 114:

⁷ «Չրաղ» նշանակում է ճրագ: Գործակատարներին Շուշիում անվանում էին չրաղ:

⁸ Լեօ, Պատմութիւն Ղարաբաղի Հայոց Թեմական հոգևոր դպրոցի 1838-1913, էջ 68-69:

Բաքվի տուրքերը 4 տարով գանձելու իրավունքը¹, նրանց ձեռքին էր գտնվում նաև Կասպից ծովի նավթի, ձկան, աղի արտադրության կապալը:

Իր ուղեգրություններում Մ. Թադիադյանը գրում է. «Երկրորդ տունն էր Զոհրապալ և Մարկոսի Թառումեանց՝ յամենայնի վերագոյն: Վասն զի՝ սոքա ընդ իւրեամբք ունելով զամենայն արտոնութիւնս զծովուն Կասպից թէ զձկնորսական իրաւունս և թէ զնաւագնացութեան տեղեհարկս, բազմագունից պէտս ունէին գործավարաց յայն պաշտօն: Ուէր մնայ, զի և վաճառականութեանցն առնտուր ո՛չ ինչ նուազ քան զՀախումեանցն՝ ձգէր ի հեռաւոր ծագս աշխարհաց: Ճրագունք տան Թառումեանց գոլ մի մի շահապք շահաստանի, այնքան զարդարեալք և պաճուճեալք՝ թէ զգեստու, թէ տամբ, թէ հարստութեամբ, մինչ յառաջին տեսութեան իմում համարել զնոսա տեարս տերանցն իւրեանց Զոհրապալ և Մարկոսի: Առօրեական բաշխոյք ողորմութեանց տան այսմիկ առաւելոյր քան զոտրիս 500, թո՛ղ զմեծամեծ հասարակաց սեղանս, զոր տային ի տան անդ իւրեանց»²:

Այսպիսով՝ երեք վաճառական հայ ընտանիքներ /Զոհրապ Թառումյան, Մարկոս Թառումյան, Հախումյան-Ն. Բ./ Շուշիի սարահարթից հսկում էին մի մեծ առևտուր, որի միջոցով իրար էին կապվում աշխարհի չորս ծայրերը՝ Չինաստանից մինչև Արևմտյան Եվրոպա, Հնդկաստանից մինչև Ռուսաստան և Սկանդինավյան երկրներ:

19-րդ դարի առաջին երեսնամյակին Ղարաբաղի առևտրական կյանքի զարգացմանը դարձյալ խոչընդոտում էին բազմատեսակ տուրքերը, որոնք, իբրև թե, թեթևացել էին ռուսական վարչակարգի մուտքից հետո: Այս մասին 19-րդ դ. 30-ական թթ. 2-րդ կեսին ռուս պաշտոնյա Նեֆեդենը գրել է. «Շուշիի ամրոցի դարպասների մոտ օր ու գիշեր հսկում էին պարետի հսկիչները, որոնք քաղաք ներմուծվող և արտահանվող յուրաքանչյուր ապրանքից տուրք էին վերցնում»³:

Առևտրի զարգացմանը խանգարում էր նաև միասնական դրամական, չափ ու կշռի համակարգերի բացակայությունը, որոնք ոչ միայն անհարմար էին դարձնում ապրանքափոխանակությունը, այլև լայն հնարավորություններ էին ստեղծում մութ մեքենայությունների համար: Բազմատեսակ էին նաև Ղարաբաղի գավառի դրամական միավորները, որոնք ժառանգություն էին մնացել խանական շրջանից. գործածվում էր աբասին, հոլանդական չերվոնեցը, պարսկական ոսկե չերվոնեցը, թումանը, պոնձե դրամը՝ շահին, ռուսական ռուբլին և արծաթե դրամը⁴:

Չնայած վերոնշյալ արգելակող հանգամանքներին, 19-րդ դարի առաջին երեսնամյակին առևտուրը Ղարաբաղում շարունակում էր զարգանալ: Բավական է միայն նշել, որ Ղարաբաղի կենտրոն Շուշին, հատկապես արտաքին առևտրի առումով, կանգնած էր ժամանակի նշանավոր առևտրական կենտրոնների կողքին, իսկ Շուշիի առևտրականները մասնակցում էին Լայպցիգի ամենամյա տոնավաճառին⁵:

Ինչպես Անդրկովկասի, այնպես էլ Ղարաբաղի արտաքին առևտուրը որոշակիորեն տուժեց 1831 թվականի կանոնադրությամբ, որի համաձայն՝ Անդրկովկասը մտցվեց Նիկոլայ 1-ինի կառավարության հովանավորչական մաքսային քաղաքականության շրջագծի մեջ և դարձավ ռուսական արդյունաբերական արտադրանքի վաճառահանման ներքին շուկա: Կանոնադրության համաձայն՝ 5% մաքսային դրույքն ուժի մեջ թողնվեց միայն ասիական ապրանքների ներմուծման համար: Բարձր մաքսային սակագին էր սահմանվում Անդրկովկաս ներմուծվող եվրոպական ապրանքների համար: Արգելվում էր արտասահմանյան ապրանքների ներմուծումը Անդրկովկասի վրայով Ռուսաստան, բայց միաժամանակ թույլատրվում էր առանց մաքսի Անդրկովկասից արտահանել ռուսական և տեղական ապրանքներ⁶:

1831 թ. հունիսի 3-ին ցարը հաստատեց «Անդրկովկասի մաքսային կառավարման կանոնադրությունը», որի համաձայն՝ վերացվեցին ներքին մաքսերը՝ տարածաշրջանը

¹ Հայ ժողովրդի պատմություն, հ. 5, Երևան, 1974, էջ 268:

² Թադիադյանց Մ., Ճանապարհորդություն ի Հայս, հատոր առաջին, Կալկաթա, 1847, էջ 159:

³ Բաղդասարյան Ն., նշվ. աշխ., էջ 150:

⁴ Броневский С., Новейшие географические и исторические известия о Кавказе, ч. 2, Москва, 1823, с. 462-464.

⁵ Ստեփանյան Ս., Հայ առևտրական բուրժուազիան Իրանի տնտեսական կյանքում /XIX դարի վերջ XX դարի սկիզբ/, Երևան, 1992, էջ 70:

⁶ Բաղդասարյան Ն., նշվ. աշխ., էջ 151:

կազմակերպելով որպես առանձին մաքսային շրջան, որը ղեկավարվում էր Թիֆլիսից¹ : 1846 թ. նոյեմբերի 15-ին գերմանական «Ալգեմայնե ցայտունգ» թերթը գրել է. «Ղարաբաղի գլխավոր քաղաքը՝ Շուշին, առանց չափազանցության կարելի է համարել Կովկասյան Զիբրայթաքը»²:

Ինչպես Շուշի քաղաքը, այնպես էլ գավառը առևտրական կապեր ուներ Օրդուբադի հետ : Օրդուբադի ամենահարուստ կապիտալիստներից շատերն ապրում էին Շուշիում³ : Քաղաքում վաճառականական տների առկայությունն էլ նպաստում էր այն հանգամանքին, որ Շուշին ծաղկում ապրեր: «Մեղու Հայաստանի» հոդվածագրի խոսքերով՝ «Մեր Շուշվոյ քաղաքին պես քաղաքումը՝ որ փառք աստուծոյ համեմատած Կովկասի ուրիշ քաղաքների հետ՝ թէ ամենիցը չէ, գէթ շատերիցը՝ ճոխ է հարստութեամբ...»⁴: Շուշին որպես առևտրական կենտրոն է ներկայացվում նաև Կովկասի փոխարքա իշխան Միխայիլ Ռոմանովի 1862-1872 թթ. տարեկան հաշվետվության մեջ: Այստեղ կարդում ենք. «Շուշին, որտեղ ապրում են բավական նշանակալի քանակությամբ հարուստ հայ առևտրականներ»⁵: Շուշին ժամանակավոր հանգրվան էր ծառայում Ռուսաստանի և արտասահմանի շատ առևտրականների համար⁶:

«Կովկասյան տարեցույցում» գետեղված՝ Կոնստանտինովիչի ընդարձակ հոդվածի հաղորդած տեղեկությունների համաձայն՝ Շուշին շարունակում էր գլխավոր առևտուրը կատարել Պարսկաստանի, Ռուսաստանի, Վրաստանի: Առևտրի մեջ ներգրավված էին բացի արհեստավորներից և ազնվական բեկերից, Շուշիի համարյա թե բոլոր բնակիչները: Կոնստանտինովիչի խոսքերով՝ «Կան հարուստ վաճառականներ, որոնք շրջանառության մեջ ունեն հարյուրից երկու հարյուր հազար ռուբլի արծաթե դրամ: Նրանք տրանզիտային առևտուր էին վարում Լայպցիգի, Կոստանդնուպոլսի և Թավրիզի միջև, իսկ շատերը մետաքսի առևտուր են անում Մոսկվայի հետ»⁷:

Շուշի քաղաքում և գավառում առևտրով զբաղված էր 1015 մարդ , որը կազմում էր բնակչության 6,7 %-ը : 1855 թ. Շուշի քաղաքի բնակչության թիվը կազմում էր 15194 մարդ⁸:

«Մշակ» թերթի էջերում տեղ գտած՝ «Մի հայացք Շուշու արդյունաբերության և վաճառականության վրա» բավականին հետաքրքիր մի հոդվածում հոդվածագիրը ներկայացնում է Շուշիի առևտրական կյանքի մասին ժամանակաշրջանի իրական պատկերը. «Մի երեսուն տարի սրանից առաջ Շուշու վաճառականն այլ տիպ էր ներկայացնում, շատ բաներում զանազանվում էր այսօրվան առևտրականից: Տարվա 9 ամիսը նա իր խանութումն էր նստում, իսկ ամառը հասնելուն պես, նա նստում է իր ձին, ձիի գալակին է գցում հին «աբասսիներով լիքը «հաբգեան» և կարաւանով, երբեմն առանձին, ուղևորվում էր դեպի Ատրպատականի մայրաքաղաք՝ Թաւրիզը:

Այն ժամանակները մեր երկրի մեջ դեռ չը կար հովանաւորող սիստեմը, որը համարեա թէ անկարելի է դարձնում մեզ մօտ ուրիշ երկրների ապրանքների ներմուծումը: Սահմանի վրա մեր վաճառականը թեթև մաքս վճարելուց յետոյ, բերում էր Թաւրիզից Շուշի անգլիական և ֆրանսիական համեմատաբար էժանագին ապրանքներ, դարսում էր իր խանութի մեջ և սկսում էր իր առևտուրը: Պարսկաստանից ապրանք բերելն այնքան էլ հեշտ չէր հաղորդակցութեան վտանգաւոր լինելուն պատճառով»: Հոդվածագիրը մատնանշում է այն փաստը, որ երբ 1861-1864 թթ. Ամերիկայի Միացյալ Նահանգների հյուսիսը և հարավը զբաղված էին պատերազմով, և այդ երկրի բամբակի արդյունաբերությունը տուժել էր, Շուշիի 500 հազ. ռուբլի դրամագլուխ ունեցող 10 առևտրականներ Եվրոպայում ստեղծում են իրենց ընկերությունը: Նրանք իրենց ձեռքն էին վերցրել Կովկասի և Պարսկաստանի բամբակի արտահանման գործը անգլիական շուկա: Բացի բամբակից

¹ Կանոնադրությունը 4-ամյա ժամկետով էր անցկացվել, ուստի 1836 թ. մայիսի 11-ին Պետական խորհրդի որոշմամբ այն անփոփոխ թողնվեց: Չնայած կանոնադրությանը՝ ներքին մաքսերը վերացնելու ուղղությամբ հիմնական աշխատանքները սկսվում են 1841 թ. հունվարի 1-ից: Այս մասին տե՛ս Туляев В., Административно-экономическая политика самодержавия России в Закавказье 1-й пол. XIX в., с.178.

² Բալայան Վ., Արցախի պատմությունը հնադարից մինչև մեր օրերը, Երևան, 2002, էջ 254:

³ «Кавказский календарь» на 1868 г., Тифлис, 1867, с. 417.

⁴ «Մեղու Հայաստանի», թիվ 42, 1860:

⁵ Отчет по главному управлению наместника Кавказского за первое десятилетие управления Кавказским и Закавказским краем е. и. в. князем Михаилом Николаевичем с декабря 1862-6 декабря 1872, Тифлис, 1873, с. 92.

⁶ Ավագյան Ս., Ղարաբաղի մամուլի պատմություն /1828-1920/, Երևան, 1989, էջ 4:

⁷ «Кавказский календарь» на 1852 г., Тифлис, 1851, с. 435.

⁸ Բաղդասարյան Ն., նշվ. աշխ., էջ 133-134:

շուշեցի առևտրականներն արտահանում էին նաև բոժոժ, մետաքս, բուրդ, մորթի և կաշի: Սակայն պատերազմի ավարտի հետ ավարտվում է նաև առևտրական ընկերության գործունեությունը¹:

Շուշիի առևտրականների հմուտ առևտրի մասին է պատմում «Մեղու Հայաստանի» թերթի հոդվածագիրը. «Շերամապահությամբ աւելի պարապում են Բարկուշատի չղի թուրքերը: Շուշեցի մանրավաճառները մեծ օգուտ են քաղում այս թուրքերից: Նրանք դեռ ձմեռ ժամանակը ման են գալիս այս գիւղերում՝. մէկին տալիս են մի քանի գազ չիթ, միւսին կտաւ, միայն այն պայմանաւ, որ ամառը փոխարէնը տան մի քանակութիւն բոժոժին... Շատ հաճախ մանրավաճառի վերայ մի փութ բոժոժը նստում է 5 մնթ., իսկ ինքը ծախում է 30-40 մնթ.»²:

Շուշիի առևտրի զարգացմանը նպաստում էր Երևանի նահանգի գյուղացիությունը, որը 1865 թ. առևտուր կատարելու համար վերցրել էր 305 վկայական և առևտուր էր կատարում հիմնականում Երևանում, Շուշիում և Ալեքսանդրապոլում³:

1861 թ. Շուշի այցելած հայ նշանավոր գրողներից Գարեգին Սրվանձոյանցը իր ուղեգրություններում տեղեկություններ է հաղորդել քաղաքի շուկաների և շուշեցիների հագուկապի մասին. «Քաղաքիս շուկան կամ հասարակաց առևտուրի տեղ ինչնում է տաճկաց մասնում. կայ եւ մասնավոր շուկայ մի Հայոց թաղերումը, որոց գլուխը կայ հրապարակ մի, զոր անուանում են Թոք խանա:

Մեր ժողովրդեան արանց կամ կանանց մէջ տակաւին տեղի չէ գտեր նորաձեւութիւնն Փարիզի զգեստներ. եւ թէ կան էլ հատ հատ մատով են ցոյց տալի մանաւանդ կնիկներ. վասն զի իրենք շատ ամօթիած են եւ համեստ թէ հագուստով եւ թէ վարմունքով»⁴:

Այժմ անդրադառնանք Ղարաբաղից արտահանվող և Ղարաբաղ ներմուծվող ապրանքների քանակությանը: «Կովկասյան տարեցույցի» էջերում տեղ գտած մի տեղեկություն հնարավորություն է տալիս պարզել, թե 1860 թ. դրությամբ Ջեբրայիլի մաքսակետով որքան ապրանք է արտահանվել և որքան՝ ներմուծվել: Հավանաբար, այս գործում ապրանքաշրջանառությունն ապահովողի ամենագործուն դերակատարությամբ հանդես են եկել Շուշիի առևտրականները:

Մեր կողմից ուսումնասիրվող ժամանակաշրջանում առևտրական կյանքը Ղարաբաղում բավականին աշխույժ բնույթ ուներ՝ որոշ առանձնահատկություններով. Շուշիի առևտրականներն արտահանում էին Ղարաբաղում արտադրվող ապրանքների շատ քիչ մասը՝ հանդես գալով առևտրի մեջ միջնորդի դերում: Շուշիի հարուստ առևտրական տները, կուտակելով պատկառելի դրամագլուխ, այն 19-րդ դարի երկրորդ կեսին ծառայեցրեցին ինչպես սեփական գործի ընդլայնմանն ու զարգացմանը, այնպես էլ քաղաքի մշակութային կյանքի զարգացմանը:

Այսպիսով 19-րդ դարի առաջին կեսին Շուշի քաղաքը կարևոր դիրք և հեղինակություն ուներ Այսրկովկասի մյուս նշանավոր քաղաքների շարքում, իրականացնելով վարչատարածքային, առևտրական և հոգևոր-մշակութային կենտրոնի գործառույթներ:

¹ «Մշակ», թիվ 99, սեպտեմբերի 1, 1890:

² «Մեղու Հայաստանի», թիվ 40, հոկտեմբերի 20, 1873:

³ Հայ ժողովրդի պատմություն, հ. 5, Երևան, 1974, էջ 269:

⁴ Սրուանձտեանց Գ., Տեսարանք հայրենի աշխարհաց Սիւնեաց աշխարհ եւ Շուշի քաղաք, «Արծուի Վասպուրական», թիվ 4, Վան, 1862-1863, էջ 105:

ՀՏԴ 94(677:479.243)

Պատմություն
Մելանյա Բալայան
Պ.գ.թ., դոցենտ, "Արցախի պետական
պատմաերկրագիտական թանգարան" ՊՈԱԿ-ի տնօրեն

ՇՈՒՇԻՆ ՈՐՊԵՍ ԳՈՐԳԱԳՈՐԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԵՎ ՆՐԱ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Արցախի պետական պատմաերկրագիտական թանգարանի գործվածքի հավաքածուի մեջ յուրօրինակ տեղ ունեն հատկապես Շուշիում գործված գորգերն ու կարպետները: Յուրօրինակ այդ արժեքները իրենց գեղարվեստական, որակական ու տեխնիկական կատարումներով այսօր նոր հնարավորություն են ընձեռում՝ առավել ամբողջական իմաստով ներկայացնելու Շուշիում, ինչպես նաև Արցախում գորգագործական արվեստի առանձնահատկություններն ու ընդհանրությունները:

Բանալի բառեր՝ Շուշի, գորգագործություն, կարպետ, Ղարաբաղ, զարդանախշ, արվեստ, եվրոպական, Արցախ, թանգարան

Балаян Меланя
Историко-краеведческий музей Арцаха
ШУШИ КАК ЦЕНТР КОВРОДЕЛИЯ И ЕГО ОСОБЕННОСТИ

В текстильной коллекции государственного историко-краеведческого музея Арцаха особое место занимают ковры и ковры, сотканные в Шуши. Эти своеобразные ценности своими художественными, качественными и техническими свойствами сегодня представляют нам новые возможности - более полно представить особенности и общности ковроткацкого искусства как в Шуши, так и во всем Арцахе.

Ключевые слова: Шуши, ковер, ковроткачество, ковры, Карабах, узор, искусство, европейский, Арцах, музей.

Dr. Melanya Balayan,
Associate Professor
Artsakh State Museum of History
and Country Study, SNCO

SHUSHI AS A CARPET WEAVING CENTER AND ITS PECULIARITIES

Textile collection of Artsakh State Museum of History and Country Study has a special place for the rugs and carpets weaved in Shushi. The above-mentioned unique values, together with their artistic, qualitative and technical ways, give a new opportunity to present completely the peculiarities and generalities of Shushi as well as Artsakh rug weaving art.

Key words: Shushi, rug, carpet weaving, carpet, Karabakh, pattern, art, European, Artsakh, museum

Հայ ժողովրդի կիրառական արվեստի ամենաբնորոշ և սիրված ու տարածված ճյուղերից էր գորգագործությունը, որի նշանավոր կենտրոններից էր Շուշին: Աղբյուրները վկայում են, որ հատկապես Շուշիում բավական զարգացած էր գորգագործությունը: 1891թ. Թիֆլիսում հրատարակված "СМОМПК"-ը փաստում է, որ "տնայնագործական բոլոր զբաղմունքներից, որոնք գոյություն ունեին Շուշիում, առաջին տեղն է գրավում գորգագործությունը: Այս արհեստը պայմանավորված էր տեղական բրդի միջոցով գորգերի և կարպետների հյուսմամբ: Գորգագործության ծավալներով Շուշին էր պատկանում առաջին տեղն ամբողջ Կովկասում: Գորգագործությամբ էին զբաղվում նաև Ջերախիլի և Ջանգեզուրի գավառներում, սակայն այս գործվածքներն իրենց որակով զիջում էին Շուշիի գործվածքներին, դա է պատճառը, որ վերջիններս առավել թանկ էին գնահատվում, չնայած որ ներկերն այնքան էլ կայուն չէին: Ջանգեզուրի գորգերը 2*1/4/1*1/4 խանական արշին Շուշիում վաճառվում էր 7-8 ռուբլ., այն դեպքում, երբ Շուշիինը

վաճառվում էր 15 ռուբլով: Շուշիի կապը գավառների հետ սահմանափակվում էր բրդի, ինչպես նաև այն գործվածքների գնմամբ, որոնք Շուշին չէր արտադրում՝ դրանք մաֆրաշներ էին, խուրջիներ, չուվալներ և այլն /Ջեբրայիլի գավառից/¹: Հատկանշական է, որ բրդի արժեքը Շուշիում նույնպես ավելի բարձր էր (4ռ.), քան Ղարաբաղի մյուս բնակավայրերում (2-3ռ.)²:

Շուշիում նույնիսկ բացվել էր հատուկ դպրոց՝ գորգագործական արհեստը բարձր մակարդակով ուսուցանելու նպատակով: Երվանդ Լալայանը գրում է, որ Շուշիում “թեև առանձին գործարաններ չկան, բայց շատ տներում գործում են գորգ, կապերտ, ձիու չուլ և այլն”³: Ազգագրագետի վկայությամբ բուրդ գզող, թել մանող և կարպետագործ կնոջ օրավարձը 19-րդ դարի վերջերին կազմում էր 10-20 կոպեկ⁴:

Շուշիում գորգագործությունը առաջին հերթին ուղղված էր ներքին պահանջմունքների բավարարմանը, բայց և միաժամանակ դրանց նկատմամբ գոյություն ունեցած արտաքին մեծ պահանջարկն իր հերթին նպաստեց գորգագործության ծավալների աննախադեպ աճին: Այսպես, նույն աղբյուրը միաժամանակ վկայում է, որ “Շուշիի գորգերը մեծ սպառում էին գտնում գլխավորապես Անդրկովկասում, սակայն թաթար առևտրականներից մեկը 19-րդ դարի 90-ական թթ. սկսեց մեծ ծավալներով այն արտահանել Կոստանդնուպոլիս: Շուշիի գորգերը սպառում էին գտնում նաև Պյատիգորսկում և Պետերբուրգում: Գորգագործությանը ծանոթ անձանց խոսքերով Շուշիում տարեկան արտադրում էին 200.000 ռուբլ արժողություն ունեցող գորգեր”⁵: Որոշ աղբյուրների հավաստմամբ Շուշիի գորգերը մեծ պահանջարկ էին վայելում նաև Եվրոպական երկրներում, մասնավորապես Ֆրանսիայում, որտեղից անգամ կոնկրետ պատվերներ էին ստացվում: Որոշ տեղեկությունների համաձայն Շուշիում տարեկան արտադրում էին 200,000 ռուբլի արժողության գորգեր:

“1879-1890 թթ. օտարերկրացիների մեծ հոսք սկսվեց դեպի Շուշի քաղաք, Շուշիի, Ջեբրայիլի և Զանգեզուրի գավառներ: Օտարերկրացիները սկսեցին գնել բացառապես հին գորգեր՝ բավականին թանկ գին վճարելով դրա համար և տեղափոխել դրանք արտասահման: Հին գորգերի վաճառքին զուգահեռ սկսեցին աճել գորգագործների թիվը և գորգերի գները: Այս ամենի հետևանքով գորգերի որակը սկսեց վատանալ: Սկսեցին օգտագործել ալիգարին, գորգի բրդյա հիմքի փոխարեն սկսեցին հյուսել նաև բամբակյա հիմքի վրա և հիմնական ուշադրությունը կենտրոնացնում էին գորգի արտաքին տեսքին: 7*2 խալին արժեք 100-120 ռուբլ”⁶:

Հարկ ենք համարում ընդգծել, որ այն ժամանակների համար դա միանգամայն բարձր գին էր, թեկուզ և եթե համեմատենք գորգագործների օրավարձի հետ, որ կազմում էր 10-20 կոպեկ:

Ընդհանրապես, Շուշիում գործված գորգերը իրենց խտությամբ չէին տարբերվում Ղարաբաղի մյուս բնակավայրերի գորգերից, որոնց միջին խտությունը կազմում էր 35-37:

Գորգագործությունը, որպես ազգային արմատները մատնանշող արվեստի բնագավառ, մեծապես տուժեց նաև նոր և նորագույն ժամանակներում մեր հարևանների կողմից նպատակային թալանի ու “յուրացումների” արդյունքում:

1921թ. Խորհրդային Ադրբեջանին բռնակցվելուց հետո Արցախում սկսվել է հայաթափման լայնածավալ ծրագրի իրականացում: Բսկ ակնհայտ փաստ է, որ այն ուղեկցվել է նաև մշակութային թալանով ու ջարդով, մի իրողություն, որի սկիզբը դրվել էր դեռևս 1905-6 և 1918-20թթ. Ղարաբաղում և մասնավորաբար նաև Շուշիում տեղի ունեցած հայերի ջարդերով: Իրականացված թալանի շրջանակներում կարևոր տեղ ունեին նաև արցախյան ձեռագործ գորգերը: Սույնը վկայող փաստարկները բազմաթիվ են: Այսպես, Խաչենցին 1928թ. “Ղարաբաղի դրությունը” ակնարկում գրել է. “Աղդամում նստած թուրք հայտնի կոմունիստ Մ.Թ. Բեկը այն անձնավորությունն է, որ Ղարաբաղի կոիվներին Սուլթանովի աջ թևն էր, որի տան պատից այժմ իսկ կախված են մի շարք գորգեր և այլ զարդեր, որը անձամբ թալանել է Շուշում կոտորածի ժամանակ: Երբ պատահաբար տեսա այդ գորգերը, որոնց վրա հայերեն տառերով գրված էր “Շուշի” անունը, նա կարմրեց”⁷:

¹ СМОМПК, Тифлис, 1891 вып.11-й, с. 7.

² Նույն տեղում, էջ 36:

³ Եր.Լալայան, Վարանդա, Ազգագրական հանդես, Բ գիրք, Թիֆլիս, 1897, էջ 96:

⁴ СМОМПК, Тифлис, 1891 вып.11-й, с. 36.

⁵ Նույն տեղում, էջ 37-39:

⁶ Նույն տեղում:

⁷ Խաչենցի, Ղարաբաղի դրությունը, Դրոշակ, 1928, հմ. 12, էջ 334:

Խորհրդային ողջ ժամանակահատվածում Ադրբեջանը մեծագույն ջանասիրությամբ աշխատանքներ իրականացրեց “Ղարաբաղյան” խմբին պատկանող գորգերը որպես “ադրբեջանական” ներկայացնելու, մի երևույթ, որ նույն կերպ շարունակվում է նաև ներկա ժամանակներում: Միանգամայն հայտնի փաստ է, որ հայկական գորգերն անգամ ներկա ժամանակներում հայտնվում են աշխարհի տարբեր երկրների համապատասխան վաճառավայրերում՝ ներկայացվելով “թուրքական”, “ադրբեջանական” և կամ առավել ընդհանրական “կովկասյան” պիտակներով: Օրինակները բազմաթիվ են:

Արցախի պետական պատմաերկրագիտական թանգարանի գործվածքի հավաքածուի մեջ յուրօրինակ տեղ ունեն մասնավորապես Շուշիում գործված գորգերն ու կարպետները: Հիշատակության արժանի է բոլորովին վերջերս ձեռք բերված “Սումախ” - կոչված կարպետը, մեկ այլ ձեռագործ կարպետ, որոնք ամբողջապես բովանդակում են մեր ժողովրդի կենսագրությունը փաստող վերոշարադրյալ պատմությունը:

Ազգային այդ արժեքների մի մասը պահպանվում էր արմատներով շուշեցի Ժանետտա Իշխանի Դովլաթյանի մոտ: Լինելով ազնվական ծագում ունեցող ընտանիքի ժառանգ, նա երկար տարիներ խնամքով ու խորը հավատքով է պահպանել “Սումախը”, հետաքրքիր զարդանախշերով ձեռագործ կարպետը, մետաքսահյուս թիկնոցը: Ժ.Իշխանյանը բավական ուշագրավ փաստեր է պատմել իր ծնողներին բաժին հասած կենսագրության ու վերոնշյալ արժեքների վերաբերյալ: Ջարդերի հետևանքով նրա ծնողները հեռացել են Աստրախան, որտեղից էլ տեղափոխվել են Բաքու: Այս տեղափոխությունների ժամանակ նրանք իրենց հետ տարել են նաև ընտանեական ժառանգություն հանդիսացող 2 գորգեր, “սումախ” կարպետը և այլ նմանատիպ իրեր: Ժանետտա Դովլաթյանին մայրը պատմել է նաև, թե ինչպես Բաքվում 1950-ական թթ., երբ պատշգամբին փռել էր գորգերից մեկը, հայտնվել են թուրքեր ու համոզել, որ գորգը ժամանակավորապես տրամադրի իրենց՝ զարդանախշը կրկնօրինակելու՝ և վերադարձնելու պայմանով, դրա համար վճարելով նաև 300ռ. գումար: Սակայն գորգը այդպես էլ չի վերադարձվել: Իսկ մնացած մասունքները, որ երկար տարիներ խնամքով պահպանել է Ժանետտա Դովլաթյանը, վերջերս տրամադրել է Արցախի պետական պատմաերկրագիտական թանգարանին:

Գորգագետ Ա.Պողոսյանի մեկնաբանությամբ՝ “Սումախ - «Օղաճիտ» տեխնիկայով գործված կարպետների ընդհանրացված անվանում է /բացի վիշապակարպետներից/: Առավել հայտնի են երկրաչափական ու բուսական խոշոր հորինվածքներով գեղագարդվածները: Այս տիպում ենք ընդգրկում նաև «Գուհար» տիպի գորգերին բնորոշ, օղաճիտ եղանակով արված վիշապապատկերների ոճավորումներով գեղագարդված կարպետները: Տարածված է Գարդմանի, Արցախի, Վասպուրականի արևելյան գավառների, Ղարադաղի, Պարսկահայքի, Շիրվանի և Դերբենտի կարպետագործական կենտրոններում¹: Սույն բնութագրությունը տիպական է և միանգամայն բնորոշող նաև տվյալ կարպետի համար /նկ.1. 2/: Բայց այն ունի նաև որոշակի առանձնահատկություններ: Կարպետի վրա առկա են 4 վարդյակներ, որոնց շուրջը տարածվում են երեք եզրագոտիները: Վարդյակների բնորոշ ու կարևոր առանձնահատկություններից մեկը կենտրոնական խաչանախշերն են և դեպի այդ խաչանախշերը ձգվող ութ, համեմատաբար փոքր, խաչերը, ինչպես նաև նույն խաչերի ուղղությամբ բազմաթիվ սլաքաձև նշանները, որոնք կարծես կողմնորոշող դերակատարություն ունեն: Նշված վարդյակները շրջապատված են թվով տասը համեմատաբար փոքր կապույտ գույնի վարդյակներով, որոնցից յուրաքանչյուրը խաչաձև բաժանված է չորս մասերի և S-ձև նշաններն են սպիտակ գույնով: Ամբողջական կարմիր դաշտի վրա եզրագոտու երկու ուղղահայաց մասերով գուգահեռաբար ութական մոմակալ հիշեցնող զարդանախշեր են: Կարպետը ամբողջությամբ պատրաստված է տեխնիկական առումով բարձր մակարդակով, ինչը ևս մատնանշում է “սումախ” տիպի կարպետների Արցախում ընդունված և տարածված լինելու մասին: Արցախի պետական պատմաերկրագիտական թանգարանում պահպանվում է 18-րդ դարի վերջերին վերագրվող “Սումախ” տիպին պատկանող մեկ այլ կարպետ: Այն թեկուզև բավականին հնամաշ վիճակում է, այնուհանդերձ պահպանված զարդանախշերն ու բնական բարձրորակ գույները վկայում են կարպետի տեխնիկական մակարդակի ու յուրահատկությունների մասին: Այն նույնպես գործված է Շուշիում:

¹ Աշխունջ Պողոսյան. Հայոց կարպետագործության մշակույթը. Երևան, 2003 թ.:

Արցախի պետական պատմաերկրագիտական թանգարանի ձեռագործության հավաքածուի մեջ կան յուրատեսակ հետաքրքրություն ունեցող այլ գորգեր և կարպետներ, որոնք գործված են Շուշիում և միանգամայն տարբերվում են թե իրենց տեխնիկական կատարումներով և թե զարդանախշերով: Դրանցից պարզապես հարկ է հիշատակել 1895 թվագրությամբ պատկերագորգը, որ ի դեպ, բավական հազվագյուտ հանդիպող հայկական գորգերի շարքին է դասվում: Գորգի կենտրոնական մասում առկա են նաև հայերեն Ա և Ն մեծատառերը: Վառ կարմիր դաշտով գորգի երկու հատվածներում զուգահեռաբար պատկերված են երիտասարդ աղջիկ ու տղա, որոնց շուրջը բացված վարդեր են: Հատկանշական է եվրոպական ոճի հագուստի պատկերումը: Տվյալներ կան, որ այդ կարգի գորգերը հիմնականում Ֆրանսիայի տարբեր քաղաքներից կատարված պատվերներ են եղել: Հենց այս իրողությունն էլ բնորոշում է Շուշիի գորգարվեստի ամենակարևոր առանձնահատկություններից մեկը:

Անշուշտ, Շուշիում ապրող թուրքերը նույնպես զբաղվել են գորգագործությամբ: Սակայն նրանց գործած գորգերը միանգամայն տարբերվում էին թե իրենց զարդանախշերով և թե դրանց գունային համադրությամբ ու երանգներով: Հարկ ենք համարում ընդգծել, որ նրանք գորգագործական հաստոցները անվանում էին “շեյթան կարխանա”, այսինքն սատանայի արհեստանոց¹:

Այսպիսով, Արցախի պետական պատմաերկրագիտական թանգարանի գործվածքի հավաքածուի մեջ յուրօրինակ տեղ ունեն հատկապես Շուշիում գործված գորգերն ու կարպետները, որոնք իրենց գեղարվեստական, որակական ու տեխնիկական կատարումներով նոր հնարավորություն են ընձեռում՝ առավել ամբողջական իմաստով ներկայացնելու ինչպես Շուշիում, այնպես էլ ընդհանրապես Արցախում գորգագործական արվեստի ինչպես առանձնահատկությունները, այնպես էլ ընդհանրությունները:

¹ "СМОМПК, Тифлис, 1891 вып.11-й, с. 48.

Մհեր Հարությունյան
պատմ. գիտությունների թեկնածու, դոցենտ

ՎԵՐՍՏԻՆ ՇՈՒՇԻ ԱԶԱՏԱԳՐՄԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ*

Նորագույն շրջանի պատմագրությունը մեր հանրապետության տեղեկության անվտանգության բաղկացուցիչ մասն է: Շուշիի ազատագրման պատմագրության հիմնահարցերի ուսումնասիրությունը և հանրահռչակումը հրատապ են ինչպես այդ կարևոր իրադարձության ճշգրիտ ու համակողմանի ներկայացման, այնպես էլ կեղծարարների ոտնձգություններին հակադարձելու առումներով:

Թեմային վերստին անդրադառնալու նպատակն է նախորդ ուսումնասիրությունների և հեղինակների տեսակետների քննական վերլուծության հիման վրա վերհանել Շուշիի պատմագրության հիմնահարցերը և նպաստել այդ կարևոր իրադարձության վերաբերյալ օբյեկտիվ ճշմարտության հայտնաբերմանը ու համաշխարհային գիտական համակարգի մեջ դրա ինտեգրմանը:

Խնդիր ենք ունեցել ընդհանրացնելու Շուշիի ազատագրման պատմագրության հիմնահարցերի մշտապես ու նպատակասլաց կերպով կատարված ճշգրտումների կամ վերազնահատումների արդյունքները, ինչպես նաև պատեհաժամորեն կանխելու նախկին թերությունների ու վրիպակների հետագա վերարտադրությունը և նոր հրատարակություններում դրանց անցանկալի շրջանառությունը:

Բանալի բառեր՝ Շուշիի ազատագրում, ռազմագործողություն, պատմագրություն, պատմության կեղծարարներ, Ստեփանակերտ, հումանիտար աղետ, նախահարձակում, անվտանգություն, սպառնալիք, քաղաքական չափում

Mher Harutyunyan,
PhD of Historical Sciences, Docent

ROUND AGAIN THE MAIN ISSUES OF SHUSHI LIBERATION HISTORIOGRAPHY

The historiography of new period is the component of the informational security of our republic. The research and declaration of Shushi liberation historiography are urgent as for the correct and full presentation of that important event, for the purposes of contrasting those trespassing of duffers as well.

The aim of touching upon the theme once more is to reveal the main issues of Shushi liberation on the basis of previous researches and analyzing previous authors' points of views on the topic and support the revelation of the objective truth of those important events and including them in the international scientific system.

We had the task to summarize the results of aimed and permanent clarifications round the main issues of Shushi liberation and the right time prevention of repeating the previous mistakes and releases and their further undesirable circulations in new publications.

Keywords: Shushi liberation, history duffers, military operations, Stepanakert, humanitarian disaster, aggression, security, threat, political measurement.

Мгер Арутюнян,
кандидат исторических наук, доцент

И ВНОВЬ ОБ ОСНОВНЫХ ВОПРОСАХ ИСТОРИОГРАФИИ ОСВОБОЖДЕНИЯ ШУШИ

Историография новейшего периода является составной частью информационной безопасности республики Арцах. Изучение и обнародование основных вопросов историографии освобождения Шуши актуально как для научного и всестороннего представления этого важного события, так и в целях борьбы с посягательствами фальсификаторов.

* Հետազոտությունն իրականացվել է ԼՂՀ ԿԳՄ-ի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության շնորհիվ՝ № SCS 16.10-007 գիտական թեմայի շրջանակներում:

Новое осмысление темы позволяет автору на основе критического анализа предыдущих исследований и авторских позиций определить основные вопросы историографии освобождения Шуши и способствовать выявлению объективной истины по этому важному событию и его интеграции в мировую научную систему.

Итогом исследования стало обобщение, уточнение и переоценка основных положений по историографии освобождения Шуши, а также предотвратить дальнейшее воспроизводство прежних недочетов и ошибок и их нежелательное включение в научный оборот в новых изданиях.

Ключевые слова: историография, освобождение Шуши, фальсификаторы истории, военная операция, Степанакерт, гуманитарная катастрофа, агрессия, безопасность, угроза, политическое измерение.

Հայոց պատմության նորագույն շրջանի պատմագրությունն, անկասկած, մեր հանրապետության տեղեկության անվտանգության բաղկացուցիչ մասն է: Ազգային ազատագրական պայքարի նորոգյալ շրջանի կարևոր իրադարձություններից է Շուշի քաղաքի և մայրաքաղաքի շրջական կրակակետերի վնասագերծման ռազմագործողությունը: Ուստի, Շուշիի ազատագրման պատմագրության հիմնահարցերի ուսումնասիրությունը և հանրահռչակումը հրատապ են ինչպես այդ կարևոր իրադարձության ճշգրիտ ու համակողմանի ներկայացման, այնպես էլ արտաքին ու ներքին կեղծարարների ոտնձգություններին հակադարձելու առումներով: Եթե հինավուրց Շուշի բերդաքաղաքի ազատագրման 25-ամյա հոբելյանը հայ ազգի համար այդ փառավոր հաղթանակը կերտողների հանդեպ հպարտության ու երախտագիտության զգացումների ուժեղացման աղբյուր է, ապա մեր հակառակորդների համար սոսկ ոչ հեռու անցյալի իրադարձություններն անընդհատ նենգափոխելու, մեր համազգային նվաճումների, հատկապես՝ Շուշի ազատագրման վրա սովեր գցելու հերթական առիթն է:

Խնդրո առարկա թեմային վերստին անդրադառնալու նպատակն է նախորդ ուսումնասիրությունների և հեղինակների տեսակետների քննական վերլուծության հիման վրա վերհանել Շուշիի պատմագրության հիմնահարցերը և նպաստել այդ կարևոր իրադարձության վերաբերյալ օբյեկտիվ ճշմարտության հայտնաբերմանը կամ հաստատմանը, ինչպես նաև համաշխարհային գիտական համակարգի մեջ դրա ինտեգրմանը: Հատկապես վերջին հանգամանքը ենթադրում է կուտակված գիտական գիտելիքների հիման վրա կատարված ուսումնասիրությունների արդյունքները մենագրությունների կամ այլ ձևի աշխատությունների տեսքով նաև օտար լեզուներով հրատարակում և տարածում արտասահմանյան ուսումնագիտական հաստատություններում, ուղեղային կենտրոններում: Այդ կարգի գիտական գիտելիքների տարածման լավագույն հարթակ կարող են լինել արհեստավարժորեն պատրաստված ու մասնագիտացված կայքերը, անսահմանափակ հասանելիություն ունեցող թվայնացված գրադարաններն ու համացանցային այլ պաշարները:

Սույն հոդվածով խնդիր ենք ունեցել ընդհանրացնելու Շուշիի ազատագրման պատմագրության հիմնահարցերի մշտապես ու նպատակալաց կերպով կատարված ճշգրտումների կամ վերագնահատումների արդյունքները, ինչպես նաև պատեհաժամորեն կանխելու նախկին թերությունների ու վրիպակների հետագա վերարտադրությունը և նոր հրատարակություններում դրանց անցանկալի շրջանառությունը:

Ընդհանրապես Շուշիի, այդ թվում՝ այդ բերդաքաղաքի ազատագրման պատմագրության հիմնահարցերին անդրադարձել ենք տարբեր առիթներով, ներկայացրել մեր ուսումնասիրությունների արդյունքները¹: Ժամանակին քննադատել ենք նաև ադրբեջանական կեղծարարությունները², ուստի այստեղ այդ թեմային նորից անդրադառնալը նպատակահարմար չէ,

¹ *Հարությունյան Մ.*, Արցախյան պատերազմի սկիզբը և Շուշիի ազատագրումը, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2000, 176 էջ, *Նույնի*, Շուշիի ազատագրման պատմագրության հիմնահարցերը.- «Միջազգային գիտաժողով՝ նվիրված «Մեսրոպ Մաշտոց» համալսարանի 10-ամյա գործունեությանն ու Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին». զեկուցումների հիմնադրույթներ, Ստ., 2007, էջ 11-14, *Նույնի*, Հայաստան-Արցախ. պատմության և արդիականության զուգահեռներում (հոդվածների ժողովածու), գիրք Ա, Ստ., «Դիզակ պլյուս», 2009, էջ 127-164, *Նույնի*, Վերստին Շուշիի ազատագրման պատմագրության հիմնահարցերի մասին (Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձի առթիվ).- «Կաճառ» (ԿԳԿ-ի տարեգիրք): Գիրք 1, Շուշի, «Կաճառ» գիտական կենտրոնի հրատարակչություն, 2008, էջ 144-150 և այլն:

² *Հարությունյան Մ. Ա.*, Շուշիում կոտորվեց Ադրբեջանի ռազմական մեքենայի ողնաշարը.- «Մարտիկ», հմ. 20, 8 – 10 մայիս, 2004 թ., էջ 6, *Арутюнян М. А.*, О некоторых вопросах историографии освобождения города Шуши и

քանի որ կեղծարարների զինանոցի, փաստարկների ու մոլորեցնող պնդումների բառապաշարը աղքատիկ է և նրանք անընդհատ շրջանառում են նույն ստերը: Դա արվում է քարոզչական և կեղծիքները հանրահռչակելու անթաքույց նպատակներով, հետևաբար՝ աղբրեջանական նենգափոխումների շուրջ անիմաստ խոսքով և բռնվել միայն նպաստելու է աղբրեջանցիների՝ իրենց հետապնդած նպատակին հասնելուն:

Աղբրեջանական կեղծարարությունը մերկացրել են նաև այլ հեղինակներ¹: Հատկանշելի է, որ վերոնշյալ տեսակետից երիցս կարևորվում են հայ պատմագրության մեջ Շուշիի ազատագրման պատմագրության մեթոդաբանական գործիքակազմի ուրվանշումը, հիմնահարցերի քննական վերլուծությունը, որի արդյունքները հնարավորություն կտան ավելի արգասավոր կերպով որոնել ու գտնել պատմական ճշմարտությունը, ապա նաև ապահովել նրա հաստատուն տեղը համաշխարհային գիտական համակարգում: Այս նկատառումներից ելնելով՝ սույն հոդվածում քննության ենք առել միայն հայ պատմագրության հիմնահարցերի, մեր կարծիքով, ավելի կարևոր մասը:

Պատմական նշանակություն ունեցած ռազմական այդ հաղթանակին անդրադառնալիս հարկ է անպայման հիմնավորել Շուշիի ազատագրման անհրաժեշտությունը: Ընդամին, դա պետք է դիտարկել հետևյալ չափումներով.

ա) Շուշիի ազատագրման անհրաժեշտության պատմական չափումը: Դա ենթադրում է հայոց պատմության, մասնավորապես՝ Արցախի հերոսական անցյալի հոլովությունում Շուշիի տեղի ու դերի արժեքավորումը, համակողմանի ներկայացումն ու հանրահռչակումը²:

становления Армии Обороны.- «Салют, Победа!», Сборник научных трудов IV Всероссийской научно-практической военно-исторической конференции с международным участием.- Томск, Изд-во Томского политехнического университета, 2014, с. 263-271.

¹ **Հակոբյան Հ. Ա.**, Խոջալուի և Շուշիի ազատագրումը աղբրեջանական պատմագրության լուսաբանմամբ (1992 թ. փետրվար-մայիս).- «ԼՀԳ», հմ. 3, 2008, էջ 80-86, **Դավթյան Ա. Մ., Ավանեսյան Ս. Ա.**, Շուշիի ազատագրումը և դրա պատմական նշանակությունը.- «Հայկական բանակ», հմ. 1-2, 2012, էջ 26-42:

² Այս առումով զգալի աշխատանք է կատարվել տես **Խանդավորյան Բ., Հարությունյան Ս.**, Էջեր Շուշիի հայ թատրոնի անցյալից (1891-1905), Երևան, Հայկական թատերական ընկերություն, 1978, **Սկյան, Վ.**, Շուշի (Պատմական ակնարկ), խմբ.՝ Զոհրանյան Պ. Ա.; Համբարյան Ա. Ս., Երևան, Հայաստան, 1991, Շուշի: Մշակութային կյանքի մեկ դարը 1820-1920 [Պատմական համառոտ ակնարկ: Բուկլետ], Երևան, Գրականության և արվեստի թանգարանի հրատարակություն, 1992, **Տեր-Պապարյան Ռ.**, Շուշի քաղաք, Երևան, ԳԱ հրատ., 1993, **Մկրտչյան Ս., Դաժյան Ս.**, Մուսի. город трагической судьбы, Ереван, 1997, **Վարապետյան Բ.**, Շուշի բերդաքաղաքը (Պատմությունը մինչև 1920թ.), խմբ.՝ Ուլուբաբյան Բ. Ա.; Խուրշուդյան Լ. Ա., Երևան, Երևանի համալսարանի հրատ., 2000, **Գրիգորյան Հ., Հարությունյան Գ.**, Շուշիի ռեալականը, Երևան, Ամարաս, 2001, Շուշի. ոգու քաղաքը: Ազատության 10 տարի, կազմ.՝ Իսրայելյան Վ., Դիլանյան Ս., Մարիկյան Գ., ՀՀ ՊՆ Լրատվության և քարոզչության վարչություն, Երևան, Ա. հ., 2002, **Դաժյան Ա., Գաբրիելյան Ս.**, Շուշին 1992-2002 թթ.: Հայերի վերադարձը ազատագրված քաղաք (Ազգագրական ակնարկ), խմբ.՝ Հոբոսյան Ս. Գ., ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա; Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան, Ա. հ., 2004, **Խաչատրյան Ա., Հարությունյան Գ.**, Շուշիի մանկավարժական ուսումնարան. 1921-2006թթ., Ստեփանակերտ, Սոնա, 2006, **Սարգսյան Ս., Մխիթարյան Ս., Հարությունյան Ս.**, Շուշի, Երևան, Անտարես, 2007, **Վարդումյան Հ.**, Շուշիի ազատագրումը: Վավերագրություն, Երևան, Տոներ, 2007, **Շուշին հայոց քաղաքակրթության օրրան: Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտաժողովի նյութեր [Հայաստանի հանրապետության կրթության և գիտության նախարարություն; Երևանի պետական համալսարան; ԼՂՀ կրթության, մշակույթի և սպորտի նախարարություն; Արցախի պետական համալսարան; Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ]**, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2007, **Մկրտչյան Շ., Դավթյան Շ.**, Շուշի: Ողբերգական ճակատագրի քաղաք, Երևան, Գասպրինտ, 2008, «Կաճառ» (ԿԳԿ-ի տարեգիրք): Գիրք 4(47-58), Աղբրեջանի պետական ահաբեկչությունը և էթնիկական գտումների քաղաքականությունը Լեռնային Ղարաբաղի դեմ, Շուշի, «Կաճառ» գիտական կենտրոնի հրատարակչություն, 2010, «Կաճառ» (ԿԳԿ-ի տարեգիրք), «Կաճառ», Գիրք 2(23-34), 2008, Факты о политике этнической чистки и государственного террора в отношении армян, проводимой властями Азербайджанской ССР в конце 80-х – начале 90-х годов XX века. Свидетельства очевидцев о преступлениях, совершенных азербайджанцами в отношении мирного армянского населения г. Шуши (документы и материалы).- Состав., отв. ред., авт. вступ. статьи: М. А. Арутюнян, Շուշի, «Կաճառ» գիտական կենտրոնի հրատարակչություն, 2014, «Կաճառ» (ԿԳԿ-ի տարեգիրք), «Կաճառ», Գիրք 6(71-82), 2012, Շուշին՝ հայկական մշակույթի օջախ (Հայկական գրատպության 500-ամյակին նվիրված միջազգային գիտական կոնֆերանսի զեկուցումներ), Շուշի, «Կաճառ» գիտական կենտրոնի հրատարակչություն, 2014, Феномен Шуши: историко-политическое исследование (коллективная монография). См.: «Рабочие тетради», приложение к военно-научному журналу «Айкакан банак» института национальных

բ) բավական տարողունակ է քաղաքական չափումը: Աներկբա կարևորվում է այն քաղաքական զարգացումների իմաստավորումը, որոնք նախորդել և հաջորդել են Շուշիի ազատագրմանը: Մասնավորապես, պետք է դիտարկել հետևյալ տեսանկյունները.

- արտաքաղաքական;
- ներքաղաքական:

Արտաքաղաքական հարթությունում պետք է դիտարկել այսպես կոչված Ադրբեջանի և Արցախի Հանրապետության հակամարտությունում իրենց շահերը հետապնդող երկրների հակասությունները, դրանց հնարավոր ազդեցությունը հակամարտող կողմերի ուժերի հարաբերակցության ու քաղաքական ուղեգծի վրա, Շուշիի ազատագրման հետևանքները տարածաշրջանային գործընթացների ու զարգացումների համար և այլն¹:

Ներքաղաքական հարթությունում դիտարկելի է Շուշիի ազատագրման գաղափարի շուրջ համայն հայ ժողովրդի համախմբման հնարավորությունը, ինչի մասնակի իրականացումը, թերևս, հաղթանակի գրավականներից մեկն էր:

գ) ռազմական չափումը: Ռազմական անվտանգության, հակառակորդի վտանգավոր կրակակետերի ու ռազմահենադաշտերի վնասագերծման անհրաժեշտությունից բխող գործողությունների պատճառահետևանքային կապի ներկայացումը նպատակաուղղված պետք է լինի դրանց նշանակության բացահատմանը ոչ միայն Արցախի հայ ազգաբնակչության ֆիզիկական գոյության ապահովման, այլ նաև մեզ պարտադրված պատերազմում նախաձեռնությունը վերցնելու համար²:

դ) հումանիտար աղետի կանխումը³:

Շուշիում հակառակորդի ծավալած կրակակետերից ու ռազմահենադաշտից Արցախի մայրաքաղաքի և շրջակա հայկական խաղաղ բնակավայրերի մշտական հրթիռահրետակոծումները հումանիտար աղետի էին հասցրել տասնյակ հազարավոր մարդկանց, հիմնականում՝ ծերերի, կանանց ու երեխաների... Հումանիտար աղետի արտահայտություններից էին.

դ.ա) Արցախի Հանրապետության շրջափակումը և Ստեփանակերտ մայրաքաղաքի պաշարումը;

դ.բ) Սովը, համաճարակները, հարկադիր նկուղային կյանքը;

դ.գ) Ջրագծի, էլեկտրականության և գազամատակարարման խափանումը;

դ.դ) Ստեփանակերտի սիստեմատիկ ոչնչացման անսքող նպատակը (հրթիռային-հրետանային թիրախավորված հարվածներ, հետևակային հարձակումներ): Դրա անհերքելի վկայություններն են Ստեփանակերտի դաժան հրթիռահրետակոծությունների խիտ ժամանակագրությունը և Շուշիի ազատագրումից հետո Ղազանչեցոց ս. Ամենափրկիչ եկեղեցում և բերդաքաղաքի բազմաթիվ շենքերի նկուղներում հայտնաբերված հազարավոր հրթիռներն ու արկերը, որոնք նախատեսված էին Արցախի մայրաքաղաքը ու շրջակա հայկական բնակավայրերը դաժանաբար հողին հավասարեցնելու համար:

стратегических исследований имени Драстамата Канаяна МО Республики Армения, 1-2(25-26), 2013, Ռազմավարական անվտանգային հետազոտություններ (Խմբ. խորհուրդ), հատոր 4, Երևան, ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ԱՌՀԲ, 2014 և այլն:

¹ Դարաբաղյան ազատագրական պատերազմ. 1988-1994, հանրագիտարան մեկ հատորով, Երևան, ՀՀՀ, 2004, Դարաբաղյան հակամարտության արտաքին քաղաքական ասպեկտները: Վերլուծական նյութեր, թող. 3, Երևան, Քաղաքական հետազոտությունների ինստիտուտ, 2009, **Բալայան Տ.**, Դարաբաղյան հիմնահարցը և միջազգային դիվանագիտությունը 1991-1994, Երևան, «Գասպրինտ», 2004, **Демоян Г.**, Турция и Карабахский конфликт в конце XX – начала XXI веков. Историко-сравнительный анализ, Ереван, Авторское издание, 2006, **Захаров В., Арешев А.**, Сотрудничество Азербайджана с НАТО и ситуация в Нагорном Карабахе: этапы, намерения, результаты. Научное издание, Москва, «Русская панорама», 2008, **Рябцев В., Сафарян С.**, «Карабахский узел»: этнонациональный конфликт в аспекте региональной геополитики, Ростов-на-Дону, Изд.-во Северо-Кавказского научного центра высшей школы, 1996, **Chorbajian L., Donabedian P., Mutafian C.** (eds), The Caucasus Knot: The History and Geopolitics of Nagorno-Karabakh, London, Zed Books, 1994 և այլն:

² Տես **Հարությունյան Մ.**, Արցախյան պատերազմի սկիզբը և Շուշիի ազատագրումը, էջ 85-86, 91-93:

³ Տես **Հարությունյան Մ.**, Շուշիի ազատագրումը.- «Ազատ Արցախ», հմ. 53-54, 8 մայիսի 1999 թ., էջ 3-4, **Նույնի**, Շուշիի ազատագրման պատմական նշանակությունը.- «Հայրենյաց պաշտպան», ապրիլ-մայիս, 2002 թ., հմ. 12-13, էջ 6, **Նույնի**, Շուշիի ազատագրումը՝ ԼՂՀ անկախության գրավական.- «Ազատ Արցախ», հմ. 54, 9 մայիս 2002 թ., էջ 12-13, **Նույնի**, Շուշի բերդաքաղաքի ազատագրման և պաշտպանության բանակի կազմավորման ռազմաքաղաքական ու պատմական մի քանի տեսանկյունների մասին (Շուշիի ազատագրման և Պաշտպանության բանակի 20-ամյա հորեյանների առթիվ).- «Մարտիկ», հմ. 17-18, 5 -12 մայիս, 2012 թ., էջ 6-12 և այլն:

Սկզբունքորեն կարևորվում են Շուշիի ազատագրման պլանավորման և ղեկավարման հիմնահարցերը: Մեր համոզմամբ՝ ելակետ պետք է ընդունել հետևյալ դրույթները.

ա) Պլանավորումն իրականացվել է Արցախի ինքնապաշտպանության ուժերի շտաբում՝ գնդապետ Արկադի Տեր-Թադևոսյանի ղեկավարությամբ: Պլանավորմանն ակտիվորեն մասնակցել և ռազմագործողությունն իրագործել են չորս ուղղությունների ու անմիջապես մասնակից ջոկատների հրամանատարները;

բ) Հայաստանի Հանրապետության և նրա զինված ուժերի մասնակցության շուրջ քաղաքական շահարկումներն անընդունելի են և սպառնում են թուլացնել հայկական կողմի դիրքերը տեղեկության պատերազմում¹:

գ) Այս տեսակետից կարևորվում է մայր Հայաստանից ժամանած կամավորական խմբերի դերը: ՀՀ-ից ու Սփյուռքից մեր հայրենակիցները կամավոր հիմունքներով օգնության են հասել արցախցի եղբայրներին ու քույրերին, որպեսզի նպաստեն նրանց անվտանգության և տարրական իրավունքների պաշտպանության սուրբ գործին:

դ) «Դնեպրիկ» հրետանային մարտկոցի դերի գերազնահատումը² վտանգում է Շուշիի ազատագրման, ապա ներկայիս Բերձորի վրայով մայր Հայաստանի հետ ցամաքային կապի վերականգման գործողություններին ՀՀ-ի անմիջական մասնակցության անհիմն մեղադրանքների հերքման արդյունավետությունը:

Կարևոր է Շուշիի ազատագրման մասնակիցների թվի ճշգրտման հարցը: Շուշիի ազատագրման համար մեղալով պարզատրվածների անհամաչափ թիվը, ինքնակոչների աննախադեպ քանակի տարեցտարի ուռճացումը սպառնում են արժեզրկել համագլխային կարևոր հաղթանակը:

Մինչև 1999 թ. ընդունված էր Շուշիի գրոհի մասնակիցների 1200 թիվը: Տարիների ընթացքում մեզ հաջողվել է հավաքել Շուշիի ազատագրմանը մասնակցած ջոկատների ցուցակները, որոնց համադրումը և հանրագումարը ցույց է տվել, որ հարձակման առաջին փուլում մասնակիցների թիվը չի անցնում 1200-ից: Ներկայում աշխատանքներ ենք տանում անհատապես յուրաքանչյուրի մասնակցության ու դերի ճշգրտման ուղղությամբ:

Մասնակիցների թվի կրկնապատկումը հետևանք է Շուշիի ազատագրման ռազմագործողության երկրորդ փուլում պահեստագորային ուժերի ներգրավման, որի անհրաժեշտությունն առաջացել էր մայիսի 8-ի ետմիջօրեին ԻՊՈԻ 422 համարի տանկի խոցումից ու հարձակման թափը կորցնելուց հետո ճակատում առաջացած անսպասելի դադարի ու անորոշ վիճակի պայմաններում:

Ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները՝ բազմաթիվ ջոկատներ ու խմբեր իրենց խնդիրը չեն կատարել: Օրինակ, Լաչինի ուղղությունում գործելու կոչված խմբավորումը, որի մեջ մտնում էին Ժ. Սեֆիլյանի հրամանատարությամբ ՀՅԴ վաշտը և այլ ջոկատներ, նրանց ուղեկցող Վալերի Բալայանի վկայությամբ՝ մոլորվել է անտառներում և առաջադրված խնդիրը, փաստորեն, չի կատարել: Հաճախ խոսք է գնում նաև այնպիսի ջոկատների մասին, որոնց մասնակցությունը ևս խիստ կասկածելի է³:

Ինչպես արձանագրված է մի վավերագրում՝ իր խնդիրը չի կատարել նաև Տումիի ջոկատը⁴:

Ռազմագործողության մասնակիցների թվի առումով որոշ հեղինակներ հակասում են իրենք իրենց, մի տեղ, հենվելով Ա. Տեր-Թադևոսյանի վկայության վրա՝ նշելով 1700⁵, իսկ մի այլ տեղ՝ 775⁶, այդպես էլ չմտցնելով հստակություն: Ի դեպ, վերջինը ոչ թե ռազմագործողությանը բոլոր

¹ *Հարությունյան Մ.*, ԼՂՀ զինված ուժերի շինարարության լուսաբանումը և տեղեկության անվտանգությունը.- «Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները» թեմայով Հայագիտական միջազգային երկրորդ համաժողովի զեկուցումների ժողովածու, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2014, էջ 120:

² *Բաղդասարյան Ռ.*, Դիմակայություն (հուշագրություններ), «Մխիթար Գոշ», Երևան, 1998, «Հեղինակային հրատ.», 2010, էջ էջ 118-120(171-178), 157(229), 162(236) և այլն:

³ Տես *Կարապետյան Արկադի, Հարությունյան Մհեր*, Երբ խեղաթուրվում են փաստերը («Հայ զինվորի» մի հրապարակման առթիվ).- «Հայրենիաց պաշտպան», հմ. 16-17, օգոստոս-սեպտեմբեր, 2002 թ., էջ 19-20:

⁴ ԱՀ ՊՆ արխիվ, Рабочая тетрадь оперативного дежурного. Нач. 14 марта - оконч. 5 июня 1992 г. По книге учета РТ N 142, 94 л.

⁵ Տես *Աբրահամյան Հ.*, Մարտնչող Արցախը 1917-2000: Գիրք Գ (1985-2000), Ստ., 2007, էջ 357:

⁶ Տես նույն տեղում, էջ 368, ծան. 37:

մասնակիցների թիվն է, ինչպես կարծում են որոշ պատմաբաններ¹, այլ ԼՂՀ ԳԽ-ին ցուցակով պարզևատրման ներկայացվածների²:

Մեր կողմից կատարված ուսումնասիրությունների և հաշվումների արդյունքում հանգել ենք այն եզրակացությանը, որ Շուշիի ազատագրման և Ստեփանակերտին հարակից կրակակետերի վնասագերծման ռազմագործողությունում զոհվել է 47 և վիրավորվել շուրջ 8 տասնյակ ազատամարտիկ³: Իսկ հակառակորդի մարդկային կորուստները քառակի շատ էին⁴:

Քաղաքական շահարկումների թիրախում է հայտնվել նաև հարձակման գլխավոր ուղղության հարցը⁵: Որոշ հրատարակություններում այս առումով նկատելի են անհարկի վերագրումներ՝ պատմական փաստերի անտեսմամբ: Մասնավորապես, Շուշիի ազատագրման գլխավոր ուղղություն է ներկայացվել Սամվել Բաբայանի ղեկավարած Լաչինի (հարավային) ուղղությունը⁶, ինչը չի համապատասխանում թե Շուշիի ազատագրման հրամանի և թե «Հրազդան», «Հարսանիք լեռներում» կողային անվանումներով հայտնի քարտեզների տվյալներին: Այդ վարկածի օգտին չի խոսում նաև ռազմագործողության ընթացքի վերլուծությունը, թեև, ինչ խոսք, Լաչինի (հարավային) ուղղությունում հարձակման անցած ԲՊՈՒ ստորաբաժանումներն իրենց ուրույն դերն են խաղացել ադրբեջանական կայազորի դուրսմղման գործում⁷:

Որոշ հեղինակներ, մեր կողմից սպառնիչ պարզաբանումներով հանդերձ, շարունակում են նույնացնել Շուշիի ազատագրման ու Լաչինի ռազմագործողությունները⁸: Անհերքելի փաստ է, որ

¹ *Աբրահամյան Հ.*, նշվ. գիրքը, էջ 357, *Բալայան Վ.*, Շուշի. տեղն ու դերը հայոց քաղաքակրթական համակարգում, Եր., «Զանգակ», 2017, էջ 480:

² *Հարությունյան Մ.*, Վերստին Շուշիի ազատագրման պատմագրության հիմնահարցերի մասին (Շուշիի ազատագրման 15-ամյակի առթիվ).- «Կաճառ» (ԿԳԿ-ի տարեգիրք): Գիրք 1, Շուշի, «Կաճառ» գիտական կենտրոնի հրատարակչություն, 2008, էջ 150:

³ *Հարությունյան Մ. Ա.*, Արցախյան պատերազմը և պաշտպանության բանակի մարտական ուղին. 1991-1994 թթ.- «Կաճառ» (ԿԳԿ-ի տարեգիրք): Գիրք 5(59-70), 2011, Շուշի, «Կաճառ» գիտական կենտրոնի հրատարակչություն, 2015, էջ 81:

⁴ «Ղարաբաղի ձայն» ադրբեջանական ռուսալեզու թերթում մի օրն Գ. Զեյնալօղլու, կրկնելով վաղուց տարփողվող հեյոտրանքներն ու նենգափոխումները, որոշ տվյալներ է ներկայացրել, որոնք, թերևս, արտացոլում են հակառակորդի ճամբարում շրջանառվող տեսակետները: Այսպես կոչված Ադրբեջանի միգրանտների և հարկադիր վերաբնակիչների իրավունքների պաշտպանության ՀԿ-ի պաշտոնաթերթի հոդվածագրը պնդում է, թե ներկայիս Քաշաթաղի շրջանի 65507 բնակիչ 1992 թ. մայիսի 18-ից հետո իբր վերաբնակեցվել է այլ բնակավայրերում, հակառակ նրան, որ նույն նախադասության սկզբում նշել էր, որ հիշյալ շրջանի բնակչության թիվը 63 հազար էր: Նույն հեղինակը բերել է նաև Շուշիի ազատագրման ռազմագործողության ընթացքում ադրբեջանական կողմի կորուստները. սպանված՝ 480, վիրավոր՝ 600 զինվորականների ու բնակչության թվից, որոնցից 150-ը դարձել են հաշմանդամ, 68 մարդ գերի է հանձնվել կամ անհայտ կորել է, 25 հազ. մարդ դարձել են հարկադիր վերաբնակիչներ... («Голос Карабаха», ном. 5(112), май 2014 г., с. 5. տես նաև URL:<http://www.azerbaijanfoundation.az> [վերջին դիտում՝ 14. 04. 2015 թ.]): Անկասկած, այս թվերը անվստահելի են: Հայտնի է, որ Շուշիի շրջանում 1988-1992 թթ. վերաբնակված և նախկին ադրբեջանցիների ընդհանուր թիվը չի անցել 15 հազ., ուրեմն մնացած 10 հազարն այսպես կոչված Ադրբեջանի օկուպացիոն զորամասերի անձնակազմի թիվն է: Մեր տվյալներով՝ թշնամին Շուշիի ազատագրման ռազմագործողությունում անմիջապես քաղաքի ուղղությունում կորցրել է մոտ 200 մարդ... Անհավանական չէ, որ հակառակորդի կենդանի ուժի կորուստների 480 թիվը համապատասխանում է իրականությանը...

⁵ Պատմաբան Հ. Աբրահամյանի կարծիքով՝ եղել են «գլխավոր ուղղություններ» (Տես *Աբրահամյան Հ.*, նշվ. գիրքը, էջ 358), ինչը թյուրիմացություն պետք է համարել:

⁶ Տես Ղարաբաղյան ազատագրական պատերազմ. 1988-1994: Հանրագիտարան 1 հատորով (Հայկ. հանրագիտարանի հրատ. գիտախմբագր. հանձնաժողով՝ Հ. Մ. Այվազյան (գլխ. խմբագիր-տնօրեն), Զ. Հ. Բալայան (նախագահ), Հ. Մ. Խաչատրյան (գլխ. խմբագրի և նախագահի տեղակալ, հատորի պատասխ.) և ուրիշներ), Երևան, 2004, էջ 103, *Խաչատրյան Հ., Ղազարյան Գ., Մարգարյան Մ.*, Հաղթանակներն՝ ինչպես եղել են. ազդական 44, Երևան, Հայկական հանրագիտարան. հրատարակչություն, «Անտարես», 2008, էջ 36:

⁷ Այդ մասին ավելի հանգամանալից տես *Հարությունյան Մ.*, Արցախյան պատերազմի սկիզբը և Շուշիի ազատագրումը, էջ 107-113: Ի դեպ, այդ նույն հանրագիտարանում մեր հեղինակած «Շուշիի ազատագրումը» հոդվածում ևս Լաչինի (հարավային) ուղղությունը գլխավոր չի (և չի էլ կարող) դիտարկվել. տես Ղարաբաղյան ազատագրական պատերազմ. 1988-1994: Հանրագիտարան, էջ 553:

⁸ Տես *Թադևոսյան Ռ.*, Դրվագներ հայոց ռազմական պատմությունից: XIX-XX դարեր, Եր., «Զանգակ», 2012:

ինչպես Շուշիի ազատագրման մարտական հրամանում, այնպես էլ պլանավորման քարտեզներում նման խնդիր չի դրվել¹։ Հետևաբար, վերոնշյալ փորձերը ոչ միայն հակասում են պատմական ճշմարտությանը, այլև սխալ են քաղաքականապես, քանի որ կարող են մեր հակառակորդներին հայկական կողմին նվաճողական նկրտումների մեջ մեղադրելու «ապացույցներ» տալ։ Մինչդեռ, իրականությունն այն է, որ Շուշիի ու Ստեփանակերտին հարակից կրակակետերը ճնշելուց, ապա ադրբեջանական զավթիչների հարձակումները հետ մղելուց հետո, Արցախի ԻՊՈՒ-ն հարկադրված էր զարգացնել հակահարձակողական գործողությունները հակառակորդի հրթիռահրետանային գրոհները կասեցնելու և մեծաքանակ ուժերի կուտակումները կանխելու նպատակով։ Հենց պատերազմական գործողությունների տրամաբանությունը, ապա և մարտավարական ու ռազմավարական շարժառիթները ստիպեցին Արցախի ԻՊՈՒ-ին ձեռքի հանրապետության գրեթե քառամյա շրջափակումը և անմիջական ցամաքային կապ հաստատել մայր Հայաստանի հետ՝ ապահովելով թիկունքը։ Իրականությունը խեղաթյուրելով՝ որոշ հեղինակներ, ընդհակառակը, ամեն ինչ անում են, ապացուցելու համար, թե, իբր, Հայաստանի Հանրապետությունն է իրականացրել Շուշիի ազատագրման և ապա Լաչինի միջանցքի բացման ռազմագործողությունները²։ Սա շատ վտանգավոր թեգ է, որն ուղղակի փնտրված գյուտ կարող է լինել ադրբեջանական քարոզամեթոդային համար։

Հեղինակների մեծամասնությունը, կենտրոնանալով Շուշիի ազատագրման և մայրաքաղաքին հարակից կրակակետերի վնասագերծման վրա, հանիրավի անտեսում է Ասկերանի, Մարտակերտի, Հադրութի շրջանների ճակատներում հակառակորդի հարձակումների հետևման նշանակությունը Շուշիի հաղթանակի ամրապնդման համար։

Սկզբունքային կարևորություն ունի համարժեք վերաբերմունք արտահայտելը Շուշիում մղված մարտերի փաստի վիճարկմանը՝ ակնհայտ քաղաքական նկատառումներով։ Այդ տեսակետը շրջանառել են Դ. Բաղդասարյանը և երկրորդ փուլում կամ արդեն Շուշիի ազատագրումից հետո բերդաքաղաք այցելած խմբերի որոշ մարտիկներ, որոնք, սակայն, չեն քաշվում իրենց Շուշիի ազատագրման մասնակից ներկայացնելուց։

Ցավոք, այսքանով սխալներն ու վրիպակները չեն վերջանում, թեև պարբերաբար անդրադառնում ենք դրանց և հատկանշում շտկելու անհրաժեշտությունը։ Դրա պատճառը նախորդ հեղինակների աշխատությունների ուսումնասիրմանը, պատմագրության նվաճումներին մակերեսայնորեն մոտենալու, նյութին ակնհայտորեն չտիրապետելու, բացկայնապես՝ տվյալ նյութի մասին գիրք կամ հոդված «գրելու» արատավոր պրակտիկան է։

Ընդհանրացնելով՝ փաստենք, որ դեռևս լուրջ անելիքներ կան պլանավորման քարտեզների, հարվածի գլխավոր ուղղության, կողմերի կորուստների, մասնակիցների թվի և Շուշիի ազատագրման պատմագրության այլ հիմնահարցերի պարզաբանման ոլորտում։ Դրանց մի մասին (ինչպես օրինակ՝ Շուշիի և Լաչինի ռազմագործողությունների նույնացման հարցին, Շուշին հեշտ ազատագրելու կամ «դավաճանության» մասին ադրբեջանական հերյուրանքներին, մասնակիցների ու երկու կողմերի ուժերի հարաբերակցությանը և հարակից այլ հարցերի) մենք ժամանակին անդրադարձել ենք, սակայն նոր ուսումնասիրությունները և նորահայտ տվյալները թույլ են տալիս դրանք ավելի ճշգրտել։ Ինչպես նախկինում ենք նշել, օգտակար կարող է լինել մասնագետների ու ականատես կամ իրավասու բարձրաստիճան հրամանատարների մասնակցությամբ քննարկում կազմակերպելը, ինչը կարող է մեծապես նպաստել վիճահարույց շատ հարցերի պարզաբանմանն ու ճշգրտմանը, ինչը երկարատև ու մեղվաջան աշխատանք պահանջող գործընթաց է։

¹ Տե՛ս *Հարությունյան Մ.*, Արցախյան պատերազմի սկիզբը և Շուշիի ազատագրումը, էջ 9-10։

² Տե՛ս *Араслы Дж.*, Армяно-азербайджанский конфликт(военный аспект), Баку, «Эргюн», 1995, с. 22-23, *Гасанов А.*, Современные международные отношения и внешняя политика Азербайджана (Второе издание, дополненное), Баку, «Zərdabi LTD» MMC, 2013, с. 983, *Աբրահամյան Հ.*, Մարտնչող Արցախը 1917-2000։ Գիրք Գ (1985-2000), էջ 353-357։

Մարինե Հարությունյան
 պ.գ.թ., ՀՀ ԳԱԱ

**ՇՈՒՇԻԻ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
 ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ XIX Դ. ԵՐԿՐՈՐԴ ԿԵՄԻՆ**

Այսպիսով, XIX դ. առաջին կեսին կարևորվեց Շուշիի դերը, որը կարճ ժամանակամիջոցում դարձավ կովկասյան տարածաշրջանի մշակութային խոշոր կենտրոններից մեկը: Շուշիում մեծ գործունեություն են ծավալել տաղանդավոր գիտնականներ, արվեստի, գրականության, ռազմաքաղաքական, հոգևոր-մշակութային ասպարեզի ականավոր գործիչներ: XIX դ. երկրորդ կեսին Շուշիում հիմնադրվեցին մի շարք բարեգործական ընկերություններ՝ «Ընթերցասիրաց», «Դպրոցասեր հայուհյաց», «Շուշիի մշակութային միություն», «Կովկասի հայոց բարեգործական» (խոսքը վերաբերվում է ընկերության մասնաճյուղին), «Թատերական», «Մարդասիրական», «Դպրոցասիրաց», «Հայուհյաց բարեգործական», «Թանգարանային և հնագիտական», որոնց ջանքերով հիմնադրվեցին և բարեկարգվեցին դպրոցներ, գրադարան-ընթերցարաններ, բարելավվեց պարբերական մամուլի հրատարակման գործը: Աջակցություն էին ցույց տրվում նաև քաղաքացիներին, հիվանդներին, հայ զաղթականներին:

Բանալի բառեր՝ թանգարան, ընկերություն, պարբերական, օջախ, դպրոց, գիտնական, գործիչ, գրադարան, մշակույթ, ձեռագրատուն

Марине Арутюнян,
 к.и.н., Институт истории Национальной
 академии наук РА, научный сотрудник

**КУЛЬТУРНАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ БЛАГОТВОРИТЕЛЬНЫХ ОБЩЕСТВ ШУШИ
 ВО ВТОРОЙ ПОЛОВИНЕ XIX ВЕКА**

Таким образом, роль Шуши была подчеркнута в первой половине XIX века, которая за короткое время стала одним из главных культурных центров в Кавказского региона. Талантливые ученые, видные деятели культуры расширили большую деятельность в Шуши. Многочисленные благотворительные организации - "Интеркасирас", "Дпроцасер Хаяюц", "Шуши мшакутаин Миутюн" (Культурный Союз Шуши), "Ковкаси Хайоц Барегорцакан" (Кавказское Армянское Благотворительное Общество), "Татеракан" (Театральный), "Мардасиракан" (Гуманный), "Дпроцасирац", "Хнагитакан" (Археологический) были основаны в Шуши во второй половине XIX века. Благодаря их усилиям, были созданы школы, библиотеки и улучшены публикации. Они оказали поддержку голодным, больным людям и беженцам.

Ключевые слова: музей, компания, периодический, дом, школа, ученый, деятель, библиотека, культура, рукопись

Marine Harutyunyan,
 Candidate of Historical Sciences, Institute of History
 of the National Academy of Sciences of RA, scientific worker

**THE CULTURAL ACTIVITY OF THE CHARITY SOCIETIES OF SHUSHI
 IN THE SECOND HALF OF THE XIX CENTURY**

Thus, the role of Shoushi was highlighted in the first half of the XIX century, which became one of the major cultural centers of the Caucasus region in a short time. Talented scientists, prominent figures of the culture expanded great activity in Shushi. A number of charity societies, "Enterкасирас", "Dprotsaser Hajuhjac", "Shushi mshakutain Miutun" (Cultural Union of Shushi), "Kovkasi Hayoc Baregorcakan" (Caucasian Armenian Charity Society), "Taterakan" (Theatrical), "Mardasirakan" (Humanitarian), "Dprotsasirats", "Hnagitakan" (Archaeological) have been founded in

Shushi in the second half of the XIX century. Thanks to their efforts, schools, libraries were created and improved publishing. They gave their support to the hungry, sick people and the refugees.

Keywords: Museum, company, periodic, home, school, scientist, figure, library, culture, manuscript

Հայ ժողովրդի բազմադարյա պատմության մեջ իր ուրույն տեղն ու դերն ունի մշակույթը, որում արտահայտվում է նրա ազգային նկարագիրը: Հայկական մշակույթի դերի կարևորությունը ընդգծվում է նաև համաշխարհային մշակույթի հայեցակետից, քանզի հայ ժողովուրդը, պահպանելով իր մշակութային արժեքների ինքնատիպությունն ու եզակիությունը, դրանով իսկ մեծ ավանդ է ներդրել համաշխարհային մշակութային գանձարանում:

XIX դ. երկրորդ կեսին ինքնատիպ ձևերով և տարաբնույթ գաղափարներով է դրսևորվում հայկական մշակույթը: Խնդիրն այն է, որ նոր ժամանակներում հայոց քաղաքական, ազգային ու հասարակական կյանքում տեղի ունեցած էական տեղաշարժերին զուգընթաց՝ երկրամասի ժողովուրդը, հենվելով նախնիների ստեղծած մշակութային արժեքների վրա, կերտեց ժամանակի պահանջներին համահունչ իր մշակույթը: Դրա զարգացման մեջ ներքաշվեցին հայ մտավորականության նոր կարող ուժեր, մի շարք հասարակական կազմակերպություններ որոնք բեղմնավոր գործունեություն ծավալեցին Հայաստանի տարբեր շրջաններում (նաև՝ Արցախում)՝ նպաստելով ժողովրդի հոգևոր վերակենդանացմանն ու վերափոխմանը: Նյութի ուսումնասիրության հիմնական նպատակն է՝ արխիվային, պարբերական մամուլում և գրականությունում զետեղված նյութերի հիման վրա լուսաբանել և արժևորել որոշ բարեգործական ընկերությունների մշակութային ձեռնարկումները:

Հարկ է նշել, որ XIX դ. առաջին կեսին (1820-ական թթ.-ից սկսած) կարևորվեց հատկապես Շուշիի¹ դերը, որն կարճ ժամանակամիջոցում դարձավ արևելահայոց և ողջ կովկասյան տարածաշրջանի մշակութային խոշոր կենտրոններից մեկը: Շուշիում մեծ գործունեություն են ծավալել տաղանդավոր գիտնականներ(տարբեր բնագավառներում), արվեստի, գրականության, ռազմաքաղաքական, հոգևոր-մշակութային ասպարեզի ականավոր գործիչներ²: Հիշատակության արժանի են Բաղդասար մետրոպոլիտ (նաև՝ միտրոպոլիտ) Հասան-Ջալալեանը, Սարգիս արքեպիսկոպոս Ջալալեանը, Պետրոս Շանշյանը, Խորեն վարդապետ Ստեփանեն, Համբարձում Առաքելյանը, Նիկողայոս Տեր-Ավետիքյանը, Սիմոն Գասպարի Հախումյանը, Տիգրան Նազարյանը, Նիկիտա Խանդավիրյանը, Լևոն Սրգայանը, Հոսան Դավթյանը, Առաքել Առաքելյանը, Աշոտ Հովհաննիսյանը և ուրիշներ: Նրանց գործունեության շնորհիվ երկրամասում ծավալվել է մշակութային շինարարական լայն գործունեություն. վերակառուցվել են բազմաթիվ վանքերի հարուստ ձեռագրատներ, դպրոցներ, բարեգործական ընկերություններ, մշակութային-լուսավորական այլ օջախներ:

Բարեգործական ընկերությունների մշակութային գործունեության մեջ ամփոփվում են դպրոցների, գրադարան-ընթերցարանների բարեկարգմանը, պարբերական մամուլի հրատարակմանը, դասագրքերի տպագրությանն ու տարածմանը, անգրագիտության վերացմանը ուղղված մի շարք լուսավորական այլ ձեռնարկումներ: Աջակցություն էին ցույց տրվում նաև քաղցածներին, հիվանդներին, հայ զաղթականներին: Ճիշտ է, այդ ընկերությունների մի մասը գտնվում էր մեծահարուստ անհատների ազդեցության տակ, սակայն դրանց մեծամասնությունը կազմակերպվում և գործում էին առաջադեմ մտավորականության, հասարակության լայն խավերի նախաձեռնությամբ ու նյութական միջոցներով:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում իրենց բազմաբնույթ մշակութային գործունեությամբ աչքի են ընկնում «Ընթերցասիրաց», «Դպրոցասեր հայուհյաց», «Շուշիի մշակութային միություն», «Կովկասի հայոց բարեգործական» (խոսքը վերաբերվում է ընկերության մասնաճյուղին), «Թատերական», «Մարդասիրական», «Հայուհյաց բարեգործական», «Թանգարանային և հնագիտական» ընկերությունները³:

¹ Շուշի քաղաքի պատմության, նրա տեղադրության, քաղաքի վարչության, բնակչության մասին տե՛ս ՀԱՍ, ֆ. 319, ց. 1, գ. 1, էջ 1-55:

² Նույն տեղում, էջ 31:

³ Մի շարք բարեգործական ընկերություններ հիմնվեցին նաև այլ շրջաններում՝ Ալեքսանդրապոլում՝ «Հառիճի վանքի և հոգևոր դպրոցի» (1850 թ.), «Ընթերցասիրաց» (1862), «Բարենպաստակ», (1869 թ.), Նոր Նախիջևանում՝

«Ընթերցասիրաց» ընկերությունը¹ հիմնադրվեց 1858 թ.՝ Շուշիում՝ հայ մտավորականության առաջատար գործիչների՝ Հակոբ Տեր-Մովսիսյանի, Նիկոլայ Աթաբեկյանի, Ստեփանոս Ներսիսյանի, (դասավանդում էին Շուշիի թեմական դպրոցում) և ուրիշների նախաձեռնությամբ: Ընկերության առաջնահերթ նպատակներից մեկն ուղղված է հասարակական գրադարանների բացման խնդրի իրականացմանը: Նրանց ջանքերով 1859 թ. Շուշիում առաջին անգամ բացվեց գրադարան-ընթերցարան, որն կոչվում էր «Հասարակաց մատենադարան Շուշուց հայոց»²: Այս մասին ուսգրավ տեղեկություն է հաղորդում Ալեքսանդր Հովակիմյան Շահալիզյանցը: Վերջինս այն կոչելով ««Վերածնության թանգարան»» իր՝ «Հասարակաց Մատենադարան Շուշի քաղաքում» խորագիրը կրող հոդվածում նշում է. «...ազգասեր եւ ուսումնասեր քաղաքացւոց եւ աստիճանաւորաց ձեռնտուութեամբ, եւ 1859-ին բացին Շուշի քաղաքումը ընթերցարան ընդհանուր հասարակութեան համար, ուր տեղ ամէն վիճակի մարդիկ կարող են պարապիլ զանազան ընթերցանութեամբ՝ ի կրթութիւն անձին եւ ի լուսաւորութիւն մտաց...»³: Հոդվածագիրը իր գոհունակությունն է հայտնում ընթերցարանին մեծ ծառայություններ մատուցած Պ. Աստվածատուր Շիխեանցին և Պ. Բաբայ Բաղադուրյանցին⁴: Վերջիններիս կողմից հայերեն և ռուսերեն լեզուներով մեծաքանակ գրքեր են տրամադրվել ընթերցարանին:

Այս ընկերության մասին ուշագրավ հիշատակություն ունի Լեոն (Առաքել Բաբախանյան), ով գրում է. «1858 թ. վերջերում Շուշի քաղաքում կազմուեց մի մասնաւոր շրջան, որ 1859-ին բաց արաւ Շուշում ընթերցարան և գրադարան: Այդ շրջանը մի ընկերության բոլոր հանգամանքները ունէր. ամեն տարի գրադարան-ընթերցարանի կառավարութեան համար յանձնաժողով էր ընտրուում, անդամակցական վճարներ էր ստանում: Նա կոչվում էր «Թանգարան վերածնութեան», նմանուելով, անշուշտ Կ. Պոլսի նոյնանուն հիմնարկութեան⁵ (խոսքը վերաբերվում է 1850 թ. բացված «Վերածնութեան թանգարան», «Եղբայրսիրական» «Մեսրոպեան» ընկերություններին⁶):...Որքան հայերը մոտենում էին եվրոպական լուսավորությանը, - շարունակում է Լեոն, - այնքան ավելի պարզ էին տեսնում հայ ազգի հետամնացության ամենագլխավոր պատճառը՝ տգիտությունը, և այնքան ավելի հայ հարուստների բարեգործական եռանդը ուղղվում էր դեպի կրթական-դաստիարակչական նպատակը: Այդ եռանդի շնորհիվ էր, որ սկսեց զարգանալ մեր մշակույթը, մեզանում երևացին կանոնավոր կրթական դպրոցներ»⁷:

Ռ. Տեր Գասպարյանը նշելով գրադարան-ընթերցարանի մասին՝ ընդգծում է, որ այն գոյություն է ունեցել մինչև 1867 թ.: Վերջինիս փակվելուց հետո գրադարանի գույքը նվիրվել է Շուշու թեմական դպրոցին⁸: Ընկերության հաջորդ նախաձեռնությունն ուղղված է մշակութային հիմնարկների վերաբացմանը: Նյութական միջոցներ ստանալով քաղաքի և գավառի հայությունից, ինչպես նաև Հայաստանի այլ վայրերից, հայկական գաղթօջախներից, ընկերությունը դրանք տրամադրում էր դպրոցների վերաբացմանը, որոնք նյութական միջոցների անապահովության պատճառով փակվել էին, ինչպես նաև չքավոր աշակերտությանը, տպագրական-հրատարակչական գործի բարելավմանը, նպաստում դասագրքերի տպագրությանն ու տարածմանը: Ընկերությունն իր միջոցներով ստանում էր 1860-ական թվականներին լույս տեսնող հայկական և ռուսական հասարակական-քաղաքական և գիտահանրամատչելի բազմաթիվ պարբերականներ, այդ թվում նաև Վիշնոգրադսկոյ «Педагогический вестник», Չումակովի «Журнал для воспитания» և այլ մանկավարժական ամսագրերը: Ընկերության անդամները կապ էին

«Մարդասիրական» (1853 թ.) և «Բարեգործական» (1860), էջմիածնում՝ «Ընթերցասիրաց» (1860 թ.), Երևանում՝ «Ընթերցասիրաց» (1862 թ.) ընկերությունները (Երկանյան Վ., Հայկական դպրոցը 1800 –1870 թթ., «Լրաբեր հասարակական գիտությունների», Ե., 1970, N 10, էջ 42: Տե՛ս նաև Հայոց պատմություն, հ. III, գիրք առաջին (XVII-րդ դարի երկրորդ կես - 1918 թ.), ԳԱԱ, Եր., 2010, էջ 394-398):

¹Նույն տեղում:

² «Կռունկ հայոց աշխարհի», Թիֆլիս, 1860, N 2, էջ 149:

³ Նույն տեղում, էջ 148:

⁴ Նույն տեղում:

⁵ Լեո, Երեսնամեակ հայոց բարեգործական ընկերութեան Կովկասում (1881-1911), Թիֆլիս, 1911, էջ 18: Տե՛ս նաև Հարությունյան Մ., Մշակութային կյանքը Լենային Ղարաբաղում 19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարի սկզբին (Արցախում), Ստեփանակերտ, 2010, էջ 20:

⁶ Լեո, Երեսնամեակ հայոց բարեգործական ընկերութեան Կովկասում (1881-1911), էջ 17:

⁷ Նույն տեղում, էջ 11:

⁸ Գասպարյան Ռ, Շուշի, Ե., 1993, էջ 121:

պաշտպանում արևմտահայ, արևելահայ ընկերության անդամների հետ, համատեղ մշակում իրենց հետագա ծրագրերը:

«Դպրոցասեր հայուհյաց ընկերությունը»¹ (նաև՝ հայ տիկնաց միաբանություն²) հիմնադրվել է 1864 թ., Շուշիում՝ լուսավորական գաղափարներով տոգորված առաջադեմ գործիչների՝ Պ. Շանշյանի³ (նաև Արցախի Եղիշյան ազգային հոգևոր դպրոցի տեսուչ), Պ. Պողոսյանի, Հ. Հախումյանի, Մ. Հախումյանի, Ստեփաննոս Եպիսկոպոսի (Ժամանակի Արցախի հոգևոր առաջնորդ) և ուրիշների նախաձեռնությամբ: Լեոն նշում է, որ ընկերությանը անդամագրվել էին 40-ից ավելի կանայք⁴: Կարևոր նշանակություն տալով աղջիկների կրթության և դաստիարակության հարցերին, նրանք ակտիվ մասնակցություն ունեցան իգական դպրոցներ հիմնելու գործին: Այսպես, նրանց անմիջական օժանդակությամբ 1864 թ. ապրիլի 7-ին Շուշիում բացվեց առաջին իգական դպրոցը, որն անվանվեց «Ղարաբաղի Տիրամայր Սուրբ Մարիամյան օրիորդաց ուսումնարան»⁵: Դպրոցի հիմնական նպատակն էր պատրաստել «<լուսավորյալ մայրեր>»: Այս խնդրում բարձր է գնահատվում հաստկապես ամուսինների՝ Համբարձում Հախումյանի և Մարիամ Հախումյանի դերը: Մարիամ Հախումյանը՝ այս հարցի հետ կապված Շուշիի հայ կանանց անունից խնդրանքով դիմեց (1864 թ. փետրվարի 27-ին) Սրբազան առաջնորդ Ստեփաննոս արքեպիսկոպոսին. «Սրբազան Հայր գիտելով Ձեր սերը դեպի ազգային լուսաւորութիւնն եւ հաստատ լինելով, որ ամէն մի ազգային գործն, առաւել եւս ազգային լուսաւորութեան, ցանկալի է Ձեր Սրբազնութեան ազգասէր սրտին, եւ Շուշուայ քաղաքի տիկնանց կողմանէ՝ դիմում եմ Ձեր Սրբազանութեանը և խնդրում եմ խոնարհաբար տալ մեզ հրաման բանալ Օրիորդաց համար Սուրբ Մարիամու անունով ուսումնարան.... >>»: Ստեփաննոս արք. ընդառաջելով կանանց խնդրանքին՝ առաջարկեց Պ. Շանշյանցի թեկնածությունը՝ որպես դպրոցի տեսուչ: Մելքիսեդեկ Եպիս. Մուրատեանը հանգամանորեն նկարագրելով այդ կանաց գործունեությունը՝ նշում է, որ 40 ազնիվ կանացից յուրաքանչյուրը որդեգրում է մեկ աղջիկ՝ հագուստի, ուսման և մնացած անհրաժեշտ ծախսերը հոգալու համար: Թեմակալ առաջնորդ Ստեփաննոս արքեպիսկոպոսը ևս երկու աղջիկ է՝ Անուշ Ռաֆայելյան, Մինա Ալեքսանյաց, որդեգրում⁶: Իսկ ամուսիններ՝ Համբարձում Հախումյանն ու Մարիամ Հախումյանը իրենց ընդարձակ տունն (տան 5 սենյակի մասին է խոսքը վերաբերվում)՝ իբրև վարժարան դնում են տեսչի և օրիորդների տրամադրության տակ⁷: Լեոն նշում է, որ Մարիամ Հախումյանը (Մելիք-Շահնազարյանց տան գավակ) իր տանը դաստիարակել էր 7 աղքատ աղջիկների⁸: Ի դեպ նշենք, որ մեր ազգային գրողներից և ականավոր մանկավարժներից շատ շատերը (Ղ. Աղայան, Վ. Փափազյան, Լեո, Ս. Մանդինյան, Մ. Աբեղյան և ուրիշներ) տարբեր ժամանակներում դասավանդել են Շուշիի օրիորդաց դպրոցում, որը գործում էր երբեմն ընդհատումներով, երբեմն մեծ դժվարություններ հաղթահարելով Շուշիում:

Զանազան բարեգործական աշխատանքների են մասնակցել ընկերության անդամներից՝ Մարգարիտ Մելիք Շահնազարեանցը, Թագուհի Դոլուխանյանցը, Սոֆիա Լոսիկյանցը, Խանում Աղամալյանցը, Զառի Նազարյանցը, Հռիփսիմե Օհանյանցը, Աննա Զուրաբյանցը, Եղիսաբեթ Հասան Զալալյանցը, Մանուշակ Խանդամիրյանցը և ուրիշներ⁹: Նրանց անմիջական մասնակցությամբ նյութական օժանդակություն էին ցույց տրվել գավառների դպրոցներին, չքավոր աշակերտությանը, նպաստել դասագրքերի տպագրությանն ու տարածմանը, անց էին կացվել դասապոսություններ և այլ միջոցառումներ:

Ընկերության ջանքերով 70-ական թվականների սկզբներին Դիզակում, Վարանդայում ևս

¹ Տե՛ս Ավանեսյան Ա., Հարությունյան Գ., Արցախի կրթական համակարգը, հ. III, Ստեփանակերտ, 2014, էջ 340:

² Լեո, Պատմություն Ղարաբաղի Հայոց Թեմական հոգևոր դպրոցի (1838-1913), Թիֆլիս, 1914, էջ 293:

³ Հայ մշակույթի օրրանը, Ե., 1971, էջ 262-264:

⁴ Լեո, Պատմություն Ղարաբաղի Հայոց Թեմական հոգևոր դպրոցի (1838-1913), էջ 292:

⁵ Պողոսյան Պ., Ղարաբաղու տիրամայր Սուրբ Մարիամու օրիորդաց ուսումնարանի բացուիլը, Շուշի, 1864, էջ 22: Տե՛ս նաև Հարությունյան Գ., Արցախահայ դպրոցը 5-19-րդ դարերում, Ստեփանակերտ, 2000, էջ 40:

⁶ Պողոսյան Պ., նշվ. աշխ., էջ 12:

⁷ Նույն տեղում, էջ 46:

⁸ Մուրատեան Մ. Եպիս., Պետրոս Շանշեանց, Թիֆլիս, 1898, էջ 73:

⁹ Լեո, Պատմություն Ղարաբաղի Հայոց Թեմական հոգևոր դպրոցի (1838-1913), էջ 291:

¹⁰ Պողոսյան, Պ., նշվ. աշխ., էջ 46-47:

բացվեցին օրիորդաց դպրոցներ¹:

«Շուշիի մշակութային միություն» ընկերությունը հիմնադրվել է 1869 (նաև՝ 1868 թ.)՝ գեղանկարչուհի Մարգարիտ Ալեքսանյանի (1838-1902) նախաձեռնությամբ²: Այս ընկերության մշակութային գործունեությունը հիմնականում ծավալվում է արվեստի բնագավառում: Մարգարիտի նախասիրություններից առաջինն եղել է ձեռագործությունը: Հրապարակվելով Տաթևի հռչակավոր վանքի եկեղեցական հին զգեստներով (հատկապես՝ Գրիգոր Տաթևացու զգեստի հետ պահվող ուրարին³)՝ նա ևս սկսում են զբաղվել ասեղնագործությամբ: Ազգանվեր գեղանկարչուհին միության անդամների նախաձեռնությամբ հավաքում է բազմաթիվ ձեռագիր մատյաններ, Ավետարան, թեմական դպրոցին կից ստեղծում է նկարչական արհեստանոց, որի սաները (Ստ. Աղաջանյան, Միքայել Արուստյան և ուրիշներ) հետագայում դարձան արվեստի վաստակավոր գործիչներ: Հավելենք, որ հայկական ձեռագրական մշակույթում իր առանձնահատուկ տեղն ունի Մարգարիտ Ալեքսանյանի կողմից գրված <<Ավետարան>>-ը, որը 1886 թ. նվիրել է Սբ. Էջմիածնի թանգարանին⁴: Ուշագրավ է հատկապես նրա պատրաստած <<Հայկական գեղանկարչություն>> (նաև՝ Գեղագիր ալբոմ) ալբոմը, որը հրատարակվեց ընկերության անդամների ջանքերով: Այս մասին <<Տարագ>> պարբերականը գրում է. «Այդ սքանչելի գործը պարծանք է ոչ միայն աշխատասիրողին, այլ տասնիներորդ դարու հայ կանանց եւ մեծ ապացոյց նրանց տոկունութեան եւ եռանդի:Մենք աւելի թանգ ենք համարում այդ գեղագրութիւնը, մանաւանդ որ աշխատասիրողը բոլորովին ենթակայ չէ եղել օտար ազդեցութեան, այլ բուն հայկական օրնամենտներ, ծաղկանկարներ է միայն ունեցել իր ձեռքի տակ և նրանցով օգտւելով այդ գեղեցիկ ալբոմը գծագրելը»⁵:

Մ. Ալեքսանյանի հիմնած ընկերությունը որոշակի նյութական միջոցներ է հատկացնում ոչ միայն դպրոցներին, այլև գեղարվեստական և այլ տիպի գրականության հրատարակմանը:

Հաջորդը հիշատակենք «Կովկասի հայոց բարեգործական ընկերության» մասնաճյուղի մասին: Ըստ լրագրող, գրող, հասարակական գործիչ Համբարձում Առաքելյանի (1855-1918)՝ այն հիմնադրվել է նրա և հայրենասեր ուրիշ գործիչների նախաձեռնությամբ՝ 1880 թ.: Այս մասին Հ. Առաքելյանը՝ «Ղարաբաղի Հայոց հոգեւոր թեմական դպրանոցի 75-ամեակը» գրքի իր «Իմ հիշողությունները» գլխում⁶ նշում է. «....1880 թ. դեկտեմբերին հիմնեցի Շուշում Կովկասի Հայոց բարեգործական Ընկերութեան անդրանիկ ճիւղը, որը նոր էր բացել իր գործունեութիւնը Թիֆլիսում»⁷: Չնայած Հ. Առաքելյանի հիշատակությանը, մենք գտնում ենք, որ բարեգործական ընկերության առաջին մասնաճյուղը Շուշիում պետք է հիմնադրված լիներ 1881թ., քանի որ, Հայոց բարեգործական առաջին ընկերությունը Կովկասում ստեղծվել է 1881 թ.՝ Թիֆլիսում՝ Բագրատ Նավասարդյանի և նրա համախոհների ջանքերով⁸:

«Կովկասի հայոց բարեգործական ընկերության» մասնաճյուղի վարչության նախագահը, միաժամանակ նաև գանձապահն ու քարտուղարը Լեոն էր (կարճ ժամանակով մնաց՝ այդ պատճառով, ապա՝ նախագահ դարձավ գնդապետ Իվան Քալանթարյանը, փոխնախագահ՝ Բժ. Մարգար Առստամյանը): Այս մասին նա գրում է. «1881 թուի դեկտեմբերի 23-ի գրութեամբ Ղարաբաղի թեմի առաջնորդ Անդրեաս արքեպիսկոպոսը հաղորդում է Խորհրդին թէ թեմական դպրոցի տեսուչ Հ. Առաքելյանը, գտնելով 26 անդամներ, ընդհանուր ժողովի է հրաւիր նրանց և դեկտեմբերի 22-ին այդ ժողովը բաղկացած 19 անդամներից, ընտրել է իրան....»⁹: Ընկերության հիմնական գործունեությունը սկսվում է 1882 թ. աշնանից (գործեց մինչև 1899 թ.), որի անդամների թիվը տարեց-տարի մեծանում էր (1887 թ. 47 հոգի էր, 1889 թ. 160): Անդամներից հայտնի էին Դավիթ

¹ Ավանեսյան Ա., Հարությունյան Գ., նշվ. աշխ., էջ 342:

² Նույն տեղում, էջ 339:

³ Ուրարը դա՝ նեղ ու երկայն, մոտ 3 մ երկարությամբ և 10-12 սմ լայնությամբ գունավոր և ծաղկավոր երիզ է, որն ուրարակիրն ու [սարկավագը](#) կրում են իրենց ձախ ուսի վրա:

⁴ «Տարագ», Թիֆլիս, 1891, N 22, էջ 323:

⁵ Նույն տեղում, էջ 329:

⁶ Տե՛ս Առաքելյան Հ., Ղարաբաղի Հայոց հոգեւոր թեմական դպրանոցի 75-ամեակը, Շուշի, 1913, էջ 46:

⁷ Նույն տեղում, էջ 58-59:

⁸ Մանրամասն տե՛ս Հ. Շատիրյան, Թիֆլիսի հայ բարեգործական հաստատությունների պատմությունից (19-րդ դարի վերջ-20-րդ դարի սկիզբ), Ե., 2007, էջ 11: Տե՛ս նաև Լեո, Երեսնամեակ հայոց բարեգործական ընկերութեան Կովկասում (1881-1911), էջ 29:

⁹ Լեո, Երեսնամեակ հայոց բարեգործական ընկերութեան Կովկասում (1881-1911), էջ 142:

Ադամյանը, Ջավադ Իշխանյանը, Սահակ Թադեոսյանը, Համբարձում Առաքելյանը¹:

Բարձր է գնահատվում ընկերության անդամների մանկավարժական և գրադարձարկչական գործունեությունը: Նրանց նյութական միջոցների օժանդակությամբ 1881 թ. Շուշիի Միրզաջան Մահտեսի-Հակոբյանի տպարանում լույս տեսավ Նիկողայոս Տեր-Ավետիքյանի «Քնար խոսնակ» գրական ժողովածուն: Ինքնատիպ այդ հրատարակության մեջ զետեղվում են ինքնուրույն և թարգմանական գործեր՝ ռուս և եվրոպական դասականներից (Պուշկինից, Լերմոնտովից, Գյոթեից, Շիլլերից, Բայրոնից և ուրիշ հեղինակներից): Սա պատահական երևույթ չէր. ժողովածուի հեղինակը, նրա խմբագրական մարմնի անդամները (Հ. Առաքելյան, Ալ. Քալանթար, Մ. Առուստամյան), լինելով կրթված ու զարգացած անձնավորություններ, գործերը ընտրելիս առաջին հերթին հաշվի են առնում դրանց գաղափարական բովանդակությունը:

Ընկերության անդամներից Համբարձում Առաքելյանի և Սիմոն Հախումյանի նախաձեռնությամբ 1882 թ. հրատարակվեց «Գործ» ամսագրի առաջին համարը²: Սիմոն Հախումյանը 1880-1882 թթ. դասավանդել է Շուշիի թեմական և օրիորդաց դպրոցներում, իսկ 1885 թ. դասավանդել է Թիֆլիսի մասնավոր գիմնազիաներում, նաև անց է կացրել մասնավոր դասընթացներ՝ հայերեն և ֆրանսերեն լեզուներով: Աշխատակցել է «Մշակ», «Տարագ», «Արձագանք», «Մուրճ» պարբերականներին³:

Համբարձում Առաքելյանը (1887 թ. վարչության նախագահ) բազմաբովանդակ դասախոսություններով հանդես է եկել Արցախի տարբեր գյուղերում: Նրա ակտիվ մանկավարժական գործունեությունը ընդգծվեց հատկապես՝ Շուշիի Թեմական դպրոցի տեսուչության տարիներին՝ 1881-1882 թթ.⁴: Լեոն մեծ հպարտությամբ նշում է այդ տարիներին Թեմական դպրոցում գնահատելի մանկավարժական գործունեություն ծավալած գիտության տարբեր բնագավառների ներկայացուցիչների մասին՝ Ղազարոս Աղայան, Ալեքսանդր Հովհաննիսյան, Հակոբ Խոջամիրյան, Նիկողայոս Տեր-Ավետիքյան, Իշխան-Իշխանյան, Ոսկի Թավրիզյան, Սիմեոն քահ. Տեր-Իսրայելյան և ուրիշներ⁵:

Շուշիի մասնաճյուղի տնօրինած միջոցները ծախսվում էին դպրոցների բարեկարգման ու գրադարան-ընթերցարան հիմնադրելու նպատակներին, ինչպես նաև չքավոր աշակերտներին օգնելուն: Որոշվեց դպրոցի համար նյութական միջոցներ հանգանակել, որը բավական արդյունավետ եղավ⁶:

Լուրջ ձեռքբերումներից է գրադարան-ընթերցարանի բացման խնդրի լուծումը: 1886 թ. վարչության անդամները խնդրանքով դիմում են Գանձակի նահանգապետին, որն էլ ընդառաջում է նրանց: Նրանց ջանքերով 1889 թ. մարտին բացվում է գրադարան-ընթերցարանը, որն աստիճանաբար սկսում է հարստանալ գրքերով: Ի օգուտ գրադարանի անց էին կացվում ներկայացումներ, փոխանցվում էին նվերներ: Նույն թվականի հունվարի 1-ին գրադարանն ուներ մոտավորապես 4917 անուն գիրք՝ 6793 ռուբլու արժողությամբ⁷: Գրադարանը ստանում էր նաև պարբերական հրատարակություններ՝ «Մշակ», «Արարատ», «Նոր դար», «Մուրճ», "Кавказ", "Русская мысль", "Кавказский календарь" և այլն: Արդեն, 1890 թ. ընկերության անդամների թիվը հասավ շուրջ 212-ի: Ուշագրավ էր, որ 1893 թ. Շուշիի մի խումբ երիտասարդներ իրենց ժողոված գումարների մի մասը հանձնում են վարչությանը՝ գրքեր, ամսագրեր, պարբերականներ հրատարակելու համար:

«Կովկասի հայոց բարեգործական» ընկերությունը ծավալեց նաև մարդասիրական գործունեություն. օգնություն ցույց տվեց ժողովրդին նաև աղետների ժամանակ: Այսպես օրինակ, 1892 թ. խոլերայի ժամանակ, ընկերությունը 400 ռուբլու նպաստ, 275 ռուբլու արժողությամբ նվերներ, համապատասխան դեղամիջոցներ, բաժանեց Շուշու և Զանգեզուրի գավառների բնակչությանը: Մեծ նյութական օգնություն ցուցաբերվեց նաև Շուշի գաղթածներին (գաղթել են Թուրքիայից)⁸:

19-րդ դարի 90-ական թթ. կեսին հիմնադրվեց «Թատերական ընկերությունը»՝ մի խումբ

¹ Նույն տեղում, էջ 143:

² Առաքելյան Հ., Ղարաբաղի Հայոց հոգեւոր թեմական դպրանոցի 75-ամեակը, էջ 59: Տե՛ս նաև Տեր-Աստվածատրյան Հ., Սիմոն Հախումյանի ինքնակենսագրությունը, «Լուսին», Թիֆլիս, 1905, N 4, էջ 76:

³ Տեր-Աստվածատրյան Հ., Սիմոն Հախումյանի ինքնակենսագրությունը, «Լուսին», Թիֆլիս, 1905, N 4, էջ 75:

⁴ Առաքելյան Հ., նշվ. աշխ., էջ 21:

⁵ Լեո, Պատմություն Ղարաբաղի Հայոց Թեմական հոգեւոր դպրոցի (1838-1913), էջ 413:

⁶ Տե՛ս Հարությունյան Մ., Արցախի մշակույթի ակնավոր գործիչների լուսավորական գործունեությունը (1850-1920), «Լրաբեր հասարակական գիտությունների», Ե., 2005, N 3, էջ 163:

⁷ Լեո, Երեսնամեակ հայոց բարեգործական ընկերութեան Կովկասում (1881-1911), էջ 146-147:

⁸ Նույն տեղում, էջ 148:

երիտասարդների կողմից, որի գործունեության մասին «Մշակ»-ը պարբերականը 1897 թ. գրում է. «Միտողների խումբը, Հայոց Բարեգործական ընկերության տեղական ճիւղի օգտին, փետրվարի 1-ին, Խանդավիրեանցի թատրոնական դահլիճում, ներկայացրեց են ժողով Օնեի «Դարբնապետ» կատակերգությունը: Ահա երրորդ տարին է, ինչ Բարեգործական ընկերության ժողովը նախահաշվի մեջ մտցնում է մուտքը՝ արվելիք ներկայացումից... Այս տարի, ուրախալի է ասել, գլուխ եկաւ ներկայացումը, որին մասնակցեցին մօտ քսան սիրողներ»¹: Գովերգվում էր հատկապես տիկին Ն. Յարամիշյանի, պր.ն Տերտեյանի դերակատարությամբ ներկայացումները: Հավելվում է, որ հավաքած գումարը կազմել էր 300 ռուբլուց ավելի ²:

19-րդ դարի 90-ական թթ. վերջերին Շուշիում և գավառներում գործում էին նաև **«Մարդասիրական, «Հայուհյաց բարեգործական»** ընկերություններ: Այդ ուղղությամբ անուրանալի ծառայություններ մատուցեցին մշակույթի անվանի գործիչներ՝ Մոֆյա Առաքելյանը, Գրիգոր Տեր-Ղազարյանը, Հովհաննես Տեր-Գրիգորյանը, Տիգրան Նազարյանը և ուրիշներ: Նրանք իրենց գործունեությունը ծավալեցին Արցախի գավառներում:

Արցախում մշակութային լայն գործունեություն է ծավալել նաև **«Թանգարանային և հնագիտական» ընկերությունը** (1896թ.), որի հիմնադրման գործում մեծ դեր են խաղացել Շուշիի Թեմական և Ռեալական դպրոցների ուսուցիչներ՝ Էյզեն Ռեոսլերը (գերմաներենի ուսուցիչ³), Ս. Գուլիքեխյանը (պատմության), Ս. Աթաբեկյանը (աշխարհագրության) Յ. Ճաղարբեկյանը (բանասիրության) և ուրիշներ: Նրանք իրենց սաների հետ միասին հնագիտական ուսումնասիրություններ են կատարում Արցախի գավառներում, հայտնաբերում զգալի թվով շինությունների մնացորդներ, անոթներ, դրամներ, գեղքեր, զարդարանքներ, մատանիներ, սափորներ, եկեղեցական մատյաններ, գորգեր, գեղեցիկ մանվածքներ, զանազան գործիքներ ու այդ ամենը ցուցադրում թեմական դպրոցին կից թանգարանում: Ցուցադրվում են նաև թեմական դպրոցի, ռեալական ուսումնարանի աշակերտների ուժերով հայտնաբերված խաչքարերը, արձանագրությունները, Արցախի բնակչության զբաղմունքի, ծիսակատարությունների, ժողովրդական այլ սովորությունների, ազգագրության, պատմության վերաբերյալ գտած հնությունները, ձեռագիր մատյանները, Շուշիում հրատարակված պարբերականների համարները և այլ իրեր:

Յարիզմի ազգահալած քաղաքականության պայմաններում, երբ (1896-1905թթ.) փակվեցին հայկական դպրոցները, արևելահայ իրականությունում, ինչպես նաև Արցախում այդ ընկերությունների մշակութային գործունեությունն արգելվեց և նրանք սահմանփակվեցին միայն աղքատախնամ գործերով: 1896 թ. իշխան Գրիգորի Գուլիցինը (1838-1907), դառնալով Կովկասյան քաղաքացիական մասի կառավարչապետ, սկսեց եռանդուն հակահայկական քաղաքականություն ծավալել: Նրա առանձնահատուկ մտահոգության առարկան էին հայկական բարեգործական ընկերությունները, որոնց նա համարում էր ազգային-հեղափոխական շարժման օժանդակող մարմիններ, ոչ պակաս վտանգավոր, քան դպրոցները: Կովկասի հայոց բարեգործական ընկերությանն արգելվում է բացել տեղական նոր բաժանմունքներ: 1896 թվականից տեղական իշխանությունների կողմից դպրոցների փակման հետ միասին սահմանափակվում է Շուշիում գործող բազմապիսի բարեգործական ընկերությունների գործունեությունը:

XX դ. սկզբին ցարիզմը վերանայեց հայերի նկատմամբ երկու տասնամյակից ավելի վարող իր քաղաքականությունը, թույլատրեց վերաբացել կրթական օջախները, և վերականգնել հասարակական ընկրությունների կրթանպաստ գործունեությունը:

Այսպիսով, բարձր գնահատելով և արժևորելով XIX դ. երկրորդ եկսին Շուշիում հիմնադրված բարեգործական բոլոր ընկերությունների մշակութային գործունեությունը՝ հանգեցինք այն եզրակացության, որ նրանք ունեին մեկ ընդհանուր նպատակ՝ զարկ տալ հայոց հինավուրց Շուշի քաղաքի մշակութային կյանքին, ընդլայնել դպրոցական ցանցը՝ Արցախի թեմում:

¹ «Մշակ», Թիֆլիս, 1897, N 15, էջ 2-3:

² Նույն տեղում:

³ Բաբայեան Լ., Խոջալուի գերեզմանները, <<Ազգագրական հանդես>>, 1896, գիրք Ա, էջ 37:

**Աշոտ Հարությունյան,
Շուշի քաղաքի պատմության թանգարանի վարիչ**

ՇՈՒՇԻ ՔԱՂԱՔԻ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ*

Արդի պատմագիտության զարգացումը պատմական ուսումնասիրությունների տեսության և մեթոդաբանության մշտական կատարելագործման մի գործընթաց է, որը պահանջում է արդի գիտամեթոդաբանական խնդիրների ժամանակակից վերլուծություն, և ապագայի պատմական ուսումնասիրությունների տեսական և մեթոդաբանական հիմքերի նոր տեսակետների և հայացքների բացահայտում:

Անդրադառնալով պատմության ուսումնասիրության մեթոդաբանության ընթացիկ համառոտ խնդիրներին, նկատում ենք, որ պատմաբանների քննարկման առարկա են դառնում իրադարձությունների պատմափիլիսոփայական վերլուծության և հետազոտման մեթոդների, գիտահամեմատական ուսումնասիրությունների հարցերը:

Այս խնդիրներին անդրադառնալով խիստ անհրաժեշտություն է, թելադրված Արցախին՝ աշխարհում պատմագիտության զարգացման ներկա մակարդակից:

Շուշիի պատմագրության մեջ գերիշխողը ապագային, հաճախ աղբյուրաբանական պատմագիտության հայացքների հետ համընկնող տեսակետներն են բնակավայրի հիմնադրման հարցում: Նոր հայտնագործություններն ու տեսակետները դժվարությամբ են ճանապարհ հարթում կարծրատիպերից դեռևս չազատված պատմագիտության մեջ:

Շուշի քաղաքի պատմության մեջ ճակատագրական դեր խաղացած 1905-06թթ, 1918-1920 թթ. իրադարձություններին չեն տրվել հաղթող ազգի դիրքերից ելնող գնահատականներ: Հաճախ, քաղաքականապես չհաստնացած պատմաբանների կողմից կարելի է նկատել 1920 թ. մարտի 23-ին հայերի ցեղասպանությունը «հայերի ապստամբության» սուլթանության կեղծարարությամբ չգիտակցված արդարացումները: Խորհրդային շրջանի, հատկապես ֆաշիզմի դեմ պայքարին շուշեցիների ակտիվ մասնակցությունը դեռևս լուսաբանման կարիք ունի: Հաջողված կարելի է համարել Շուշիի ազատագրման նկարագրությունը առանձին ուսումնասիրություններում, սակայն Հայոց պատմության դասագրքերում այն աննշան տեղ է զբաղեցնում:

Հայ պատմագիտությունը մշտական պայքարի ճակատ ունի աղբյուրաբանական պատմագրության կողմից անդադար ասպարեզ նետվող հակագիտական ուսումնասիրություններին հակազդելու տեսանկյունից:

Բանալի բառեր: Արցախ, Աղբյուր, Փանահ, Վարանդա, Շուշի բերդ, Շահնազար Բ, Կարկառ, պատմության դարաբաղայնացում, բույնաթոմսի դպրոց, Արցախյան մշակույթ:

**Ашот Арутюнян,
историк, руководитель музея истории Шуши**

ТЕНДЕНЦИИ ИСТОРИОГРАФИИ ГОРОДА ШУШИ

Развитие современной исторической науки представляет собой процесс непрерывного совершенствования теории и методологии исторического исследования, заключающегося в необходимости анализа современных научно-методологических проблем, определения новых подходов и взглядов на дальнейшие изменения теоретических и методологических основ исследования истории.

Изучение современных проблем методологии исследования истории показало, что историко-философский анализ, методы исследования событий, а также сравнительные исследования являются обширной темой для научных дискуссий.

* Հետազոտությունն իրականացվել է ԼՂՀ ԿԳՄՆ-ի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության շնորհիվ՝ № SCS 16.10-007 գիտական թեմայի շրջանակներում:

Решение этих вопросов является необходимостью и продиктовано уровнем развития исторической науки в современном мире.

В историографии по вопросу основания г. Шуши бытуют антинациональные трактовки, часто совпадающие со взглядами азербайджанских историков, а новые открытия с трудом пробивают себе дорогу.

Остались без оценки события 1905-1906гг. и 1918-1920гг., сыгравшим роковую роль в судьбе города. Часто можно заметить, как политически незрелые историки трактуют геноцид армян 23 марта 1920 г. как результат «армянского восстания», соглашаясь с точкой зрения палача армян Шуши Султанова.

Нового осмысления требует и Советский период, и в особенности активное участие шушинцев в борьбе с фашизмом.

Успешными можно считать отдельные исследования об истории освобождения Шуши, но к сожалению, эта тема занимает незначительное место в учебниках по истории Армении.

Таким образом, армянская историография обязана вести неустанную борьбу с «троянскими» и антинаучными взглядами азербайджанских историков.

Ключевые слова: Арцах, Азербайджан, резня, джамальский стиль, похвала, точка зрения, Шошва-гала, Крепость Шош, геноцид, Шахназар Б, национально-освободительная борьба, Каркар, карабахизация истории, стереотипы, мемуары.

Ashot Harutyunyan,
head of Shushi history museum department

TRENDS OF HISTORIOGRAPHY OF THE CITY OF SHUSHI

The development of nowadays history is a process of continuous improvement of historical theory and methodology exploration which requires analysis of contemporary scientific-methodological issues, the exploration of theoretical basis of future historic researches, new viewpoints and opinions of methodological basis. Addressing to current brief issues of history exploration methodology, we notice, that the issues of history-philosophical analysis of events and methods of researches and scientific- comparative studies serve as the topic of historians' discussion. Referring to these issues the world historical studies improvement is a strict necessity preceding from the level existing in Artsakh. In the issues of residence foundation of Shushi history pre-dominate antinational aspects often coinciding with the viewpoints of Azerbaijani history. In history that is controlled by stereotypes, new discoveries and aspects smooth a way with difficulties. The events that played a fatal role in Shushi between 1905-06 and 1918-1920 weren't given a proper worth from the position of the winning nation. We can often notice how politically not mature historians deny unconsciously Armenian Genocide on March 23, 1920 from the viewpoint of Sultanow, the executioner of the Armenians in Shushi as a result of "armenian rebellion".

The active participation of Shushi citizens in the struggle against fascism, especially during the Soviet period, needs to be highlighted. In several studies the description of Shushi liberation can be considered as a successful one, but unfortunately in Armenian historic textbooks it takes a minor place. Armenian historiography must have a permanent struggle with "trojan" and anti-scientific views of azerbaijani history.

Keywords: digest , Artsakh, Azerbaijan, massacre, Jamalian style, praise, aspect, Shoushi ghala, Shosh fortress, genocide, Shahnazar II, national liberation struggle, Karkar, Karabakhisation of history , stereotype, memoirs.

Պատմագրության հիմնախնդիրն, ըստ երևույթին, յուրաքանչյուր ժողովրդի, իսկ հայ պատմագրության պարագայում, հայության ռազմաքաղաքական և կրթամշակութային նվաճումներն արժանվույնս ներկայացնելն է համաշխարհային պատմության համապատկերի վրա:

Շուշիի, որպես՝ Քուռի հովտի քոչվորների ասպատակությունները և նրանց դեպի մայր Հայաստանի խորքերը ներթափանցելը կասեցնող ամրոցի, ինչպես նաև արևելահայության կրթամշակութային կենտրոնի, հարուստ անցյալը հայոց պատմության անբաժանելի մասն է:

Շուշիի պատմության վերաբերյալ ստեղծվել է բազմապիսի գրականություն: Բերդաքաղաքի վերաբերյալ ուշագրավ նյութեր կան մի շարք արևիկային փաստաթղթերի և վիճակագրական նյութերի ժողովածուներում, որոնցից ուշագրավ է ՀՀ գիտությունների ակադեմիայի

հրատակարարակաժ հավաքածուն¹: Այն արտացոլում է 1918-1923 թթ. էական հիմնահարցերը և ժամանակագրական կարգով լայն հնարավորություն է տալիս ուսումնասիրողներին անհերքելի փաստերի հիման վրա ստանալու ժամանակի ռազմաքաղաքական իրավիճակի մասին օբյեկտիվ պատկերացում և կատարելու ինքնուրույն դատողություններ:

Ուշագրավ է ՀՀ Պատմության արխիվի հրատարակած Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918-1920թթ. հայերի կոտորածների մասին վկայող փաստաթղթերի և նյութերի ժողովածուն²: Այն պատկերացում է տալիս Հայաստանի առաջին հանրապետության տարածքում ադրբեջանցիների նախնիների կողմից բարձրացված խռովությունների, Արցախի այն ժամանակվա իշխանությունների անվճռական գործողությունների, հայ հասարակական կազմակերպությունների կողմից թուրք հարևանների հետ խաղաղ ապրելու կոչերի, այսպես կոչված Ադրբեջանի կողմից չհայտարարված պատերազմի և Արցախի բնակավայրերում հայ բնակչության զանգվածային կոտորածներով տարածաշրջանի ազգագրական վիճակը հոգուտ ադրբեջանցիների թեքելու ու հայերին իրենց իսկ բնօրրանում փախստական դարձնելու քաղաքականության մասին:

Փաստաթղթերի ու նյութերի մեկ այլ արժեքավոր ժողովածու³ պարունակում է նաև 1920թ. մարտի 23-ի եղեռնի մասին ժամանակակիցների անմիջական վկայությունները, որոնք լույս են սփռում Շուշիի պատմության խեղաթուրված հատվածների վրա:

19-րդ դարից սկսած պատմագրությունը միտված է հիմնականում կրկնելու Ղարաբաղի խաների գրագիր, Միրզա Ջամալ Ջավանշիրի անհիմն պնդումը, թե իբր Շուշիի սարավանդը անբնակ է եղել և բերդը հիմնադրել է «հնում Թուրքեստանից Դիզակ տեղափոխված սարջալու օյմակի Բահմանլի ցեղի ներկայացուցիչ Փանահ Ալին... 1745թ. Ադիլ շահից խանի տիտղոս ստացած(») Փանահի հետ դաշնակցում է Վարանդայի մելիք Շահնազար բեկը, որի խորհրդով էլ կառուցվել(») է Շուշի բերդը... 1754թ. բերդի տարածքում բնակություն են հաստատում Շահբուլաղի և Վարանդայի գյուղերի բնակիչները, ռայաթները, բեկերն ու մելիքները: Մինչ այդ տարածքը ամայի էր և եղել է Շուշի գյուղի արոտատեղին...»⁴:

Մ. Ջամալի հորինած հեքիաթը հիմք է դարձել հետագա պատմագիրների համար: Միրզա Ադիգյոզալ Բեկի գիրքը փաստորեն Մ. Ջամալի պատմության վերարտադրությունն է և Փանահ խանի գովերգությունը⁵:

Աբբաս Ղուլի Աղա Բաքիխանովի գրքում խոսվում է Բյուրակ գետի պայմանագրի, Իբրահիմ խանի սպանության մասին և այլ դեպքերի մասին, որոնք պատմական համապատկեր են կազմում Շուշիի պատմության համար⁶:

Ռ. Հ. Տեր-Գասպարյանը Բերդաքաղաքի հիմնադրման հարցում մնալով Մ. Ջամալի դիրքորոշման ազդեցության տակ, այնուամենայնիվ, անգնահատելի վիճակագրական և աշխարհագրական տվյալներ է հաղորդում Շուշիի մասին⁷: Ներկայացնելով Արցախի հինգ մելիքությունների պատմությունը՝ Բաֆֆին նպատակ է ունեցել հերքելու Մ. Ջամալի տեսությունը Շուշիի տարածքի անբնակ լինելու մասին⁸: Բաֆֆին օտարի տիրապետությունից ազատվելու միջոց է համարել հայոց բարձր մշակույթով նրան ձուլելու քաղաքականությունը: Սակայն հեղինակը ամբողջովին չի կարողացել ձեռքագատվել Մ. Ջամալի ազդեցությունից:

Մի շարք այլ հրապարակումներում և հանրագիտարաններում Փանահը սխալմամբ, ուղղակի կամ անուղղակի համարվել է Շուշիի բերդի հիմնադիր⁹:

¹ Нагорный Карабах в 1918-1923 гг. Сборник документов и материалов. Отв. ред. В. А. Микаелян, сост. Акопян В. А., Баликян О. С., Вирабян А. С., Микаелян В. А., Эволян В. С., Ереван, Изд. АН Армении, 1992:

² Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում. 1918-1920 թթ.: Պատաս. խմբ.՝ Վիրաբյան Ա., կազմ.՝ Միրզոյան Ս., Ղազիյան Ա., Երևան, ՀՀ պատմութ. արխիվ, 2003:

³ Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ: Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմը/1813-1933/, կազմ. և առաջ. գրեց Սանդրո Բեհրուդեանը, Երևան, «Ոսկան Երևանցի», 2001:

⁴ Мирза Джамал Джаваншир Карабахский, История Карабаха. Баку, 1959, с. 73:

⁵ Мирза Адигезал – Бек Карабахский, История Карабаха. Баку, 1950:

⁶ Аббас-Кули Ага Бакиханов, Гюлистан-Ирам. Баку, 1926:

⁷ Տեր-Գասպարյան Ռ. Հ., Շուշի քաղաքը, Երևան, 1993:

⁸ Բաֆֆի, Խամսայի մելիքությունները. (1600—1827), Երկերի ժողովածու, հ. 10, Եր., 1964:

⁹ Ի Յակոբ սարկավազ Պողոսեան Ջավաբեանց, Պատմութիւն գաւառիւն Արցախա, Երևանի Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. հմ. 2734, էջ 19, Большая советская энциклопедия, т. 48, Москва 1957, стр. 241,

Միրզա Ջամալի շրջանառվող տեսության դեմ, թերևս առաջինը, ծառս է եղել Լեոն: Շոշվա ղալայի 1752-74 թթ. հիմնադրման վկայության մասին նա նշել է, որ «անհավանական է թվում, թե բերդի տեղն ամալի ու անբնակ է եղել մինչև Փանահ խանի երևան գալը: Բնչպես գիտենք, այս կողմերում էր գտնվում հայոց Փոքր Սղնախը, և հայ զինվորությունն, անշուշտ, չէր կարող անուշադիր թողնել այդ ամուր բարձրությունը... Շուշու ահարկու ամրությունների գլխից... բացվում էին տիրապետական անհուն հորիզոններ...»¹:

ՀՄ հանրագիտարանի այն թյուր կարծիքը, թե իբր Շուշին միջնադարի Շիկաքար (Քարագլուխ) բնակավայրն է, տեղ է գտել նաև այլ հրատարակություններում²:

Խորհրդային «ինտերնացիոնալիստական» պատմագրությունը ոչ միայն կասկածի տակ չի դրել Շուշին իբր Փանահ խանի կողմից հիմնադրված լինելու տարբերակը, այլև հպանցիկ է մոտեցել 1920թ. մարտի 23-ին քաղաքի իրական տերերի՝ հայերի նկատմամբ հիմնականում ադրբեջանաթուրքական զորքերի իրականացրած ցեղասպանությանը: ՀՄ հանրագիտարանում տպագրված հոդվածում պատմաբան Բ. Ուլուբաբյանը ժխտել է Մ. Ջամալի վարկածը և նշել է, որ «Շուշին հնագույն ժամանակներում Վարանդա գավառի հայ բնակիչների համար ծառայել է իբրև պաշտպանական ամրություն...XVIII դ. սկզբին Շոշի բերդը եղել է թվով գերակշիռ թուրքական զորքերի դեմ հայոց ազատագրական մարտերի կենտրոն ... 1750-թթ. ...Շահնագար Բ... դաշնակցել է ...Փանահ խանի հետ և նրան տրամադրել Շոշի բերդը»³: Սակայն, նկարագրելով արաբ նվաճողների դեմ IX դ. Սահլ Սմբատյանի մղած պայքարը՝ նա շփոթել է Ասկերանի շրջանի Շիկաքար-Քարագլուխ (Արավուս) բնակավայրը Շուշիի հետ: Նույն սխալը կրկնվել է «Շուշի. մշակութային կյանքի մեկ դարը, 1820-1920» բուկլետում:

Մանվել Սարգսյանն իր արժեքավոր ուսումնասիրության մեջ⁴ վերհանել է Շուշիի մշակութապատմական ժառանգությունը, հրապարակելով ընթերցողների լայն շրջանակին անհայտ լուսանկարներ և հատակագծեր: Հեղինակը շրջանառության մեջ է մտցրել «Շոշի ամրություն», «Շոշվա ղալա» և «Քար» անվանումները և նշել է Մատենադարանում պահվող և 1428թ. թվագրված հմ. 8211 ձեռագրի մասին, որը մինչ այդ հրապարակել էր Լ. Խաչիկյանը⁵: Մ. Սարգսյանը Փանահ խանի Շոշի սղնախ մոտեղը համարում է հայ մելիքների երկպառակության հետևանք՝ չվերհանելով դրանց դրդապատճառները: Նույնը կարելի է ասել նաև Շ. Մկրտչյանի մասին⁶:

Պատմաբան Սլավա Սարգսյանն իր աշխատության մեջ⁷, անդրադառնալով Պավել Չոբանյանի հոդվածին⁸, մեղադրում է նրան Շուշին XVIII դարից ավելի վաղ չգնահատելու մեջ և այն թյուր կարծիքն է հայտնում, թե բնակավայրը միջնադարում կրել է Կարկառ և Կալադարա անվանումները: Յուր ժամանակին Բ. Ուլուբաբյանն իր աշխատության մեջ⁹ Կարկառը տեղադրել էր համանուն գետի ստորին ավազանում: Բայց Ս. Սարգսյանը «Շուշիից բացի այլ բերդ չի գտնում գետի հովտում»: Արդեն առիթ ունեցել ենք ցույց տալու, որ այդ պնդումն անհիմն է, իսկ ամրոցը առաջարկել ենք տեղադրել Կարկառ գետի ստորին հովտում՝ Գալաթափե տեղավայրում¹⁰: Ինչ

Советский энциклопедический словарь, Москва, 1983, стр. 1521, Հայկական սովետական հանրագիտարան, , հատոր 8, Երևան, ՀՄՀ հրատ., 1982, էջ 599:

¹ Լեո, Երկերի Ժողովածու, երրորդ հատոր, Երևան, 1973, էջ 267, Լեո, Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի, Թիֆլիս, 1914, էջ 60:

² Տես օրինակ՝ Հայկական հարց. Հանրագիտարան, Երևան, 1996, էջ 367:

³ Տես ՀՄՀ, հ.8, էջ 599:

⁴ Саркисян М., Из истории градостроительства Шуши, Ереван, 1996:

⁵ Նյութեր հայ ժողովրդի պատմության; Գիրք 6. Կազմ.՝ Լ.Ս. Խաչիկյան: ՀՍՍՌ ԳԱ Պատմ. ին-տ., Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1955, էջ 384-385:

⁶ Մկրտչյան Շ., Լեոնային Ղարաբաղի պատմաճարտարապետական հուշարձանները, Երևան, 1985, Мкртчян Ш., Давтян Ш., Шуши. город трагической судьбы. Ереван, 1997:

⁷ Սարգսյան Ս., Խաչենի ամրոցները, Ստեփանակերտ, 2002:

⁸ Чобанян П. А., О некоторых вопросах истории Арцаха (XIII-XIX вв.), Историко-филологический журнал, ном. 3, 2002, 145-160:

⁹ Ուլուբաբյան Բ. Ա., Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, Երևան, 1975,

¹⁰ Հարությունյան Ա., Շուշիի պատմության մի քանի հարցեր, «Կաճառ» (ԿԳԿ-ի տարեգիրք): Գիրք 3(35-46), 2009, Շուշի, «Կաճառ» գիտական կենտրոնի հրատարակչություն, 2014, էջ 37-73, Հարությունյան Ա., Դիտարկումներ Կարկառ քաղաքի առեղծվածի մասին, «Կաճառ» (ԿԳԿ-ի տարեգիրք): Գիրք 7(83-84), 2013, Շուշի, «Կաճառ» գիտական կենտրոնի հրատարակչություն, 2015, էջ 172-192:

վերաբերում է XVIII դ. Կալադարասիին, ապա պետք է նկատել, որ ողջ խորհրդային շրջանում այդպես է անվանվել Շուշիի շրջանի Բերդաձոր գյուղախումբը:

Պատմության դարաբաղայնացման ուղղության ջատագով Խ. Խալիլովը¹, Շուշին համարելով դեպի Իրան տանող ուղիների դարապաս, մեղադրել է Ֆիցիանովին Ղարաբաղում հայեր «վերաբնակեցնելու» համար²:

Բաքվում խորհրդային տարիներին հրատարակված կոլեկտիվ մենագրության մեջ³ նշվել է Շուշին Փանահի կողմից հիջրայի 1167թ. (1753-54թթ.) հիմնադրված լինելու մասին: Գրքի հեղինակային խումբը սխալմամբ նշել է, որ այդ ժամանակներում միջնաբերդերի կառուցման տարածված տեխնիկան յուրահատուկ չի եղել Շուշիին: Նշենք, որ «խանական» (‘) պալատների համալիր ներկայացվողը հենց Շուշիի միջնաբերդն է՝ դեպի Ջրաբերդցոց (Լեմսի) ձորը տանող գաղտնուղով:

Թ. Քյոչարլին իր գրքում⁴ նշել է, որ Ղարաբաղի մելիքները ցանկացել են ընդհանուր ղեկավար ընտրել և այդ հողի վրա Մելիք Շահնազարը սպանել է իր քեռուն՝ Մելիք Հասանին ...: Միայն այս աղավաղումը բավական է, որպեսզի ուսումնասիրողները այդ գրքին հղում կատարելիս շրջահայաց լինեն:

Շուշիի 1918-1920թթ. պատմության ուսումնասիրման համար պատմագիտական մեծ արժեք ունի Եղիշե Իշխանյանի հուշագրությունը⁵: Այն պարունակում է փաստեր զորավար Անդրանիկի Արցախյան արշավանքի, թուրքական օկուպացիոն զորքերի Շուշի մտնելու և ինքնավար Ղարաբաղի կառավարության գործունեության մասին:

Հարություն Թումյանի հուշագրության⁶ մեջ Շուշի թուրքական զորքերի մուտքի նկարագրությունից հետո, ակնարկ կա դրանք ջարդելու հնարավորության մասին: Սակայն Թումյանը խուսափել է 1920 թ. մարտյան դեպքերի վերլուծությունից:

Շուշիի ժողովրդագրության և ազգագրության վերաբերյալ ուշագրավ տվյալներ է հաղորդում Աբրամ Կիսիբեկյանը⁷: Սակայն հեղինակը երբեմն թույլ է տալիս շեղումներ, իսկ դեպքերի նկարագրման ժամանակ՝ չափազանցություններ:

Շուշիի 1918-20թթ. պատմությանն անդրադարձած ուսումնասիրությունների մի մասը պատմագեղարվեստական ակնարկների բնույթ է կրում⁸ և կարող է օգտակար լինել որոշ հարցերի լուսաբանման համար:

Բունյաթովյան դպրոցի ներկայացուցիչ Ֆիրուղին Շուշինսիկու գրքի⁹ հիմքում ընկած էր շուշեցի ուսուցիչ Ջավադ Համբարձումյանի ձեռագիրը, որը Ֆիրուղինը խաբեությամբ վերցրել էր նրանից և տպագրել հեղինակային իրավունքի բացահայտ ոտնահարմամբ և մեծամասամբ՝ նենգափոխումներով...

Մեկ այլ աղբյուրն է կեղծարարի՝ Չ. Ղաջարի գրքում¹⁰ լիովին պահպանվել է Բունյաթովյան դպրոցի ավանդական ուղեգիրը, մոլորեցնող նոր աճապարարություններով պարուրվել Շուշիի պատմությունը:

Շուշիի պատմության համար աղբյուրագիտական նշանակություն ունի Հրաչիկ Հարությունյանի գիրքը¹¹: Այնտեղ Շուշիի անցյալն ուսումնասիրողների համար հետաքրքրություն կարող են ներկայացնել 17-18-րդ դդ. գերեզմանոցների սխեմատիկ քարտեզները և տապանաքարերի վիմագրերը:

¹ Халилов Х., Из этнической истории Карабаха

² <http://karabakh-doc.azerall.info/ru/azerpeople/ap003.htm> (վերջին դիտում 16.05.2017 թ.):

³ Генеральный план и проект детальной планировки города-курорта Шуша, Баку, 1974-1976:

⁴ К истории карабахского вопроса (вымыслы и действительность).-

⁵ Իշխանյան Եղիշե, Լեռնային Ղարաբաղ (1917-1920), Երևան, 1999:

⁶ Թումյան Հարություն, Դեպքերը Լեռնային Ղարաբաղում 1917-1920թթ. (պատմական ակնարկ),

⁷ Կիսիբեկյան Աբրահամ, Հուշերում, հ 1, Երևան, 2001:

⁸ Мелик-Шахназаров З., Записки карабахского солдата (воспоминания участника событий 1918-1920 гг. в Нагорном Карабахе), Москва, 1995, Мелик-Шахназаров А., Нагорный Карабах: факты против лжи, Москва, 2009, Կարապետյան Բակուր, Շուշի բերդաքաղաքը (պատմությունը մինչև 1920թ), Երևան, 2000, Խանգաղյան Ս., Շուշի, Երևան, 1991, Խանգաղյան Ս., Հայրենապատում. 1920-1985, Գիրք Դ, Երևան, 1989 և այլն:

⁹ Шушински Фридун, Шуша, Баку, 1968:

¹⁰ Каджар Чингиз, Старая Шуша, Редактор: Фарид Мамедова, Баку, Шарг-Гарб, 2007:

¹¹ Арутюнян Г., Шуши: нововыявленные исторические надписи, Степанакерт, 2008:

Երիտասարդ ուսումնասիրող Ն. Բաղդասարյանը¹ արդարացիորեն պաշտպանում է Շուշիի 55 օրյա պաշտպանության տեսակետը: Նա քննության առարկա է դարձնում Շուշիի, որպես՝ առևտրական կապիտալի ձևավորման կենտրոնի հարցը:

Արցախի ազատագրական պայքարին նվիրված հանրագիտարանը², Շուշիի պատմությանը նվիրված ակնարկում տեղադրել է հնագիտական հետազոտությունների արդյունքները: Պետք է նշել, որ խնդրո առարկա ակնարկը գերծ չէ ավանդական սխալներից և միջնադարի հատվածում ունի արտատպումներ ՀՍ հանրագիտարանից:

Շուշիի ազատագրման պատմությունը գիտականորեն լուսաբանել է պատմաբան Մ. Ա. Հարությունյանը³:

Ուշագրավ է Հ. Վարդումյանի գրքույկը⁴: Սակայն Շուշիի պատմական ակնարկում հեղինակը թույլ է տալիս լուրջ սայթաքումներ:

Հրանտ Աբրահամյանի «Մարտնչող Արցախը (1917-2000)» հատորյակներում, որոնք, ըստ երևույթին, նախկին աշխատությունների ընդհանրացումն են, տեղեկություններ կան նաև Շուշիի մասին: Քաղաքական տեսանկյունից եռահատորյակը ձեռքագատված չէ խորհրդային պատմագրության ավանդույթներից և ընթերցողներին օգտակար կարող է լինել ներկայացված փաստագրական նյութերի տեսանկյունից:

Շուշիի հայ բնակչության նկատմամբ ադրբեջանական գաղութատերերի ռասայական խտրականության մասին ուշագրավ տեղեկություններ է տալիս համապատասխան փաստաթղթերի ու նյութերի ժողովածուն⁵:

Շուշիի պատմության ամենատարբեր տեսանկյունները և հիմնահարցերը հատուկ ուսումնասիրության նյութ է դարձրել Շուշիում ստեղծված «Կաճառ» գիտական կենտրոնը՝ նախաձեռնելով երկու միջազգային գիտաժողով⁶, «կլոր սեղաններ», գիտական սեմինարներ ու քննարկումներ, որոնք նպատակաուղղված էին ուրվագծելու արդի պատմագրության թեմատիկ-առարկայական ու մեթոդոլոգիական առաջնահերթությունները խնդրո առարկա ոլորտում:

Նկատի ունենալով բերդաքաղաքի մշակութային հարուստ անցյալը և Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման համատեքստում այն ավելի ներկայանալի ու հրապուրիչ դարձնելու հրամայականը՝ կարծում ենք, որ Շուշիի պատմագրության ուսումնասիրման հատուկ ուղղություն պիտի դառնա «Արցախյան մշակույթը», որը զգալիորեն հարստացել է հենց Շուշի քաղաքում, որպես 19-20-րդ դդ. Այսրկովկասի սահմաններում քաղաքակրթության զարգացման նոր ցուցանիշ և որի ոչնչացմամբ ադրբեջանա-թուրքական զավթիչները ծանր հարված են հասցրել թե՛ հայ, և թե՛ համաշխարհային քաղաքակրթությանը:

¹ Բաղդասարյան Ն., Վարչաքաղաքական և սոցիալ-տնտեսական կացությունը Ղարաբաղում 1813-1867 թթ., Երևան, «Անտարես», 2015:

² Ղարաբաղյան ազատագրական պատերազմ. 1988-1994, Երևան, 2004:

³ Հարությունյան Մ. Ա., Արցախյան պատերազմի սկիզբը և Շուշիի ազատագրումը, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2000 Նոյնի, Արցախյան պատերազմը և պաշտպանության բանակի մարտական ուղին. 1991-1994 թթ.- «Կաճառ» (ԿԳԿ-ի տարեգիրք): Գիրք 5(59-70), 2011, Շուշի, «Կաճառ» գիտական կենտրոնի հրատարակչություն, 2015, էջ 62-84, Նոյնի, Ոգու և զենքի փառավոր հաղթանակը.- «Հայկական բանակ», հմ. 1-2, 2002, էջ 73-86, Նոյնի, Համազգային իդիի իրականացումը (Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձի առթիվ).- «Մեսրոպ Մաշտոց» համալսարանի «Լրատու» (Գիտական հոդվածների ժողովածու), հմ. 1, Ստ., 2007, էջ 72-84 և այլն:

⁴ Վարդումյան Հ., Շուշիի ազատագրումը, խմբ.՝ Գագիկ Մախսուդյան, Երևան, Տոներ, 2007:

⁵ Факты о политике этнической чистки и государственного террора в отношении армян, проводимой властями Азербайджанской ССР в конце 80-х – начале 90-х годов XX века. Свидетельства очевидцев о преступлениях, совершенных азербайджанцами в отношении мирного армянского населения г. Шуши (документы и материалы).- Состав., отв. ред., авт. вступ. статьи: М. А. Арутюнян, «Կաճառ» (ԿԳԿ-ի տարեգիրք): Գիրք 2(23-34), 2008, Շուշի, «Կաճառ» գիտական կենտրոնի հրատարակչություն, 2014:

⁶ «Կաճառ» (ԿԳԿ-ի տարեգիրք): Գիրք 4(47-58), Ադրբեջանի պետական ահաբեկչությունը և էթնիկական զտումների քաղաքականությունը Լեռնային Ղարաբաղի դեմ, Շուշի, «Կաճառ» գիտական կենտրոնի հրատարակչություն, 2010, «Կաճառ» (ԿԳԿ-ի տարեգիրք): Գիրք 6(71-82), 2012, Շուշի՝ հայկական մշակույթի օջախ (Հայկական գրադպրության 500-ամյակին նվիրված միջազգային գիտական կոնֆերանսի զեկուցումներ), Շուշի, «Կաճառ» գիտական կենտրոնի հրատարակչություն, 2014: Նշված միջոցառումների և Շուշիի պատմության վերաբերյալ գիտական հոդվածների ու աղբյուրագիտական նշանակություն ունեցող այլ հրապարակումների կարելի է ծանոթանալ «Կաճառ» տարեգրքի մյուս հատորներում:

Մարիամ Հովսեփյան
բանասիրական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող

ՇՈՒՇԻԻ ԱՌԱՆՁԻՆ ՀՐԱՁԳԱՅԻՆ ԳՈՒՄԱՐՏԱԿԻ
ՄԱՐՏԱԿԱՆ ՈՒՂԻՆ
(1991-1994 թթ.)

Արցախյան ազատագրական պատերազմում իր ուրույն ներդրումն ունի Շուշիի առանձին հրաձգային գումարտակը: Արցախում սկսված ազգային-ազատագրական պայքարում դեռևս 1989 թվականից ընդգրկվել էին դաշնակցական անհատներ, ովքեր հետագայում ջոկատների կազմում մասնակցեցին Արցախյան պատերազմին: ՀՅԴ կազմակերպական ներկայությունը բացահայտելուց հետո այդ անհատներն ու ջոկատները արդեն որպես դաշնակցական ջոկատներ ներգրավվում են թե՛ Արցախյան ազատամարտում, թե՛ Հայաստանի սահմանամերձ շրջանների գյուղերի ինքնապաշտպանական մարտերում: Գետաշենի ենթաշրջանում, Շահումյանում, Մարտակերտում, Ասկերանի, Մարտունու, Շուշիի, Հադրութի շրջաններում ՀՅԴ-ն ուներ մարտական ջոկատներ, որոնք ինքնապաշտպանական ուժերի կազմում զբաղված էին հայկական բնակավայրերի պաշտպանությամբ¹:

Բանալի բառեր՝ մարտական ուղի, մոտոհրաձգային գումարտակ, ազատագրական պայքար, զինված ջոկատներ, Շուշիի ազատագրումը

Мариам Овсепян
 к.ф.н., НАН РА, Институт Истории
 старший научный сотрудник

БОЕВОЙ ПУТЬ ШУШИНСКОГО ОТДЕЛЬНОГО
МОТОСТРЕЛКОВОГО БАТАЛЬОНА
(1991-1994 ГГ.)

В освободительной войне Арцаха внесли свою лепту вооружённые отряды АРФД. Они боролись в Геташене, Шаумяне, Мартакерте, Аскеране, Мартуни, Шуши, участвовали в оборонительных боях приграничных деревень Армении.

В 1991 году партия решила соединить отдельные отряды и выступить единой силой.

25 ноября 1991 года создаётся отряд АРФД, который в марте-апреле 1992 года становится ротой АРФД. В освободительных боях за Шуши рота объединяла 250-300 добровольцев.

После освобождения Шуши рота принимала участие в освобождении Зарислу, вместе с отрядом АРФД Каринтак, пресекала наступление врага в направлении Лисагор-Шуши. Рота принимала участие в освобождении подрайона Бердадзор, в Лачинской операции, оборонительных боях Шаумянского района.

С 3-го сентября 1992 года по март месяцу 1993 года рота АРФД держала оборону в районе Кичан-Срхавенд. За время оборонительных боёв на этой территории рота становится батальоном. Шушинский отдельный стрелковый батальон формируется 1-го сентября 1993 года.

С февраля по июнь-июль месяцы 1993 года батальон принимал участия во всех, в том числе самых крупных операциях за освобождение Мартакерта.

В сентябре 1993 года батальон принимал участие в освобождении райцентра Кубатлу, а в октябре- освобождении Зангелана.

С ноября 1993 года по 7 января 1994 года в секторах Алханлы, Кюрдмахмудли Физулинского района батальон переходил в оборону.

В феврале 1994 года батальон участвовал во второй операции освобождения Кельбаджара.

В конце апреля-начале мая, до объявления перемирия батальон 10 дней участвовал в боях за освобождение Мартакертского района в секторе Джраберд-Кармираван.

¹ «Ղարաբաղյան ազատագրական պատերազմ 1988-1994 հանրագիտարան», Ե., 2004, էջ 536:

12 мая 1994 года после объявления перемирия батальон в освобождённом участке переходил к обороне, а потом участвовал в формировании профессиональной армии.

С 1996 года Шушинский отдельный стрелковый батальон внедрился в состав Армянской армии под новым названием-77-й мотострелковый батальон.

Ключевые слова: боевой путь, мотострелковый батальон, освободительная война, вооруженные отряды, освобождение Шуши

Mariam Hovsepyan

Ph.D. in Philology, NAS RA, Institute of History

Senior Researcher

THE MILITARY PATH OF THE SEPARATE INFANTRY BATTALION OF SHUSHI (1991-1994)

The ARF's military troops have their own unique contribution in the War of Liberation of Artsakh. They fought in the regions of Getashen, Shahumyan, Martakert, Askeran, Martuni, Shushi and Hadrut. They also took part in the defense of Armenian frontier villages.

In 1991 ARF decided to combine certain groups and come up with a united force.

On November 25, 1991, formed the Revolutionary Brigades, which turned into ARF company on March and April, 1992-s. In the battles of the war for the liberation of Shushi it brought together more than 250-300 volunteer.

After the liberation of Shushi, ARF's company participated in the defense of Zarislu, it also suspended the enemy's attack with ARF's KarinTaki brigade to Lisagor- Shushi direction. ARF's company also participated in the liberation of Berdadzor, Lachin operation, self-defense battles of Shahumyan region.

From September 3, 1992, up to March 1993, ARF company had implemented a defense in Kichan-Srkhavend sector. During the defense battles of this area ARF company turned into the battalion and was called "The separate infantry battalion of Shushi". As a battalion it was established on September one, 1993.

From February 1993 to June-July, the battalion participated in all defense operations of Martakert including the largest actions.

On September, 1993 the battalion participated in the defense of Kubatlu's regional center, and in October in Zangelan's liberation battles.

From November 1993, up to January 7, 1994, the battalion penetrated to defense in Fizuli's region, in Alkhanli, Kyudmahmudli sector.

On February 1994, the battalion participated in the 2-nd operation of the liberation of Kelbajar.

At the end of April and beginning of May, 1994, until the ceasefire was established, the battalion participated in the liberation battles in Martakert region in 10 days, in Jraberd-Redpart section.

After the ceasefire on 12 May, 1994, the battalion penetrated to defense in the places, which had already been liberated, then it became a part of the army creation operations.

From 1996, the Separate infantry battalion of Shushi has been included in Armenian army with a new name, which is called 77th rifle battalion.

Keywords: military path, separate infantry battalion, liberation war, military troops, liberation of Shushi

1991 թվականին ՀՀ-ի կողմից որոշում է կայացվում առանձին ջոկատների ուժերը տարբեր շրջաններ չուղարկել և հանդես գալ միասնական ուժով: 1991 թվականի նոյեմբերի 25-ին համապատասխանաբար Արամ Մանուչարյանի, Վարդան Ստեփանյանի, Սարո Փամփուխյանի, Հայկ Աբրահամյանի գլխավորությամբ առաջին անգամ 4 ջոկատային խմբեր Ժիրայր Մեֆիլյանի մեկ ընդհանուր հրամանատարությամբ ուղղաթիռներով ժամանում են Հադրութի շրջան: Մի քանի օր հետո նրանք տեղափոխվում են Ստեփանակերտ և ստանձնում են Կրկժան թաղամասի պաշտպանությունը: Այդ ժամանակահատվածում հիշյալ զինվորական ստորաբաժանումը կոչվում

էր ՀՅԴ ջոկատ: Իբրև այդպիսին այն մասնակցել է Հասանաբաղի, Մալիբեյլուի, Խոջալուի համար մղվող մի շարք մարտերի:

1992 թվականի մարտ-ապրիլ ամիսներին ՀՅԴ Երևանի, Արթիկի, Թալինի, Հրազդանի, Արտվյանի, Չարենցավանի, Արարատի, Արտաշատի, Էջմիածնի, Բաղրամյանի ջոկատները (այդ թվում՝ նաև ուսանողական) սկսում են հավաքվել Ստեփանակերտում, որպեսզի միասնաբար հանդես գային Շուշիի ազատագրման համար մղվող մարտերում: Այս գործառնությունն արդեն անվանվում է ՀՅԴ վաշտ՝ իր մեջ համախմբելով ավելի քան 280-300 ազատամարտիկի:

Ժիրայր Սեֆիլյանի ընդհանուր հրամանատարությամբ կազմավորվում է 7 դասակ՝ Հրանտ Մինասյանի, Միքայել Մանուկյանի, Գրիգոր Գրիգորյանի, Հայկ Աբրահամյանի, Արամ Մանուչարյանի, Ալբերտ Ալավերդյանի և Գրիգոր Սարգսյանի հրամանատարությամբ: Մինևույն ժամանակ Պավել Գյուրջյանի գլխավորությամբ գործող ՀՅԴ Արտաշատի դասակը Քարինտակի ինքնապաշտպանների հետ էր մարտնչում:

1992 թվականի մայիսի 7-ի լույս 8-ի գիշերը ՀՅԴ վաշտն ընդգրկվում է Շուշիի ազատագրման գործողության մեջ: Հրանտ Մինասյանի, Միքայել Մանուկյանի ու Գրիգոր Գրիգորյանի դասակները Շուշիի ազատագրման գործողությանը մասնակցում էին քաղաքի բանտի, Հայկ Աբրահամյանի դասակը՝ Քիրս լեռան, իսկ Պավել Գյուրջյանի դասակը՝ Քարինտակի ուղղություններով: Մնացած ուժերը Ժիրայր Սեֆիլյանի հրամանատարությամբ հանձնարարություն էին ստացել շրջանցել Շուշին ու Զառիսլուն, դուրս գալ Լիսագոր ու փակել Լաչինից դեպի Շուշի տանող թշնամու օգնության շտապող ուժերի ճանապարհը: Հիմնականում բոլորի կողմից կատարվում են նրանց առաջադրված խնդիրները:

Ժիրայր Սեֆիլյանի հրամանատարությամբ գործող հիմնական ուժերը փակում են ճանապարհը Զարիսլու գյուղի մատույցներում: Նրանք այնտեղ մարտի են բռնվում հակառակորդի օգնական ուժերի հետ: Այս մարտերի ընթացքում զոհվում է լիբանանահայ Վիգեն Զաքարյանը և վիրավորվում են 2 ազատամարտիկ՝ Արմեն Բեկթաշյանն ու Հարազատ Սահրադյանը: Մայիսի 9-ի մարտում Շուշիում զոհվում է Վազգեն Բեկյանը և վիրավորվում է Ժորա Կարապետյանը:

Շուշիի ազատագրումից հետո ՀՅԴ վաշտը մասնակցում է ևս մեկ հիշարժան մարտական գործողության՝ 1992 թվականի մայիսին Զարիսլուի ազատագրմանը: Վաշտը Քարինտակի ջոկատի հետ համատեղ կասեցնում է հակառակորդի հարձակումը Լիսագոր-Շուշի ուղղությամբ, որտեղ թշնամու ուժերի մեծաքանակ կուտակում կար: Թշնամու հիմնական նպատակն էր՝ ճեղքել հայկական ուժերի պաշտպանությունը և, հասնելով ռևանշի, հետ վերցնել Շուշին:

1992 թվականի մայիսի 15-ի մարտի ընթացքում վաշտը կարողանում է ետ մղել հակառակորդի գրոհը՝ նրան պատճառելով կենդանի ուժի և տեխնիկայի կորուստներ: Կորցնելով մի քանի տասնյակ զինվոր, 1 տանկ, 2 հետևակի մարտական մեքենա (bmp)՝ թշնամին նահանջեց դեպի ելման դիրքեր: 2 օր անց հայկական ուժերն անցնում են հակահարձակման և մայիսի 16-ի լույս 17-ի գիշերը նրանք արդեն Բերդաձորում էին: Բերդաձորի հայաթափումից ուղիղ մեկ տարի անց ազատագրվում է Բերդաձորի ենթաշրջանը:

Այս մարտական գործողությունից հետո 1992 թվականի մայիսի 17-ի լույս 18-ի գիշերը Ժիրայր Սեֆիլյանի հրամանատարությամբ ՀՅԴ հավաքական վաշտը շարժվում և գործում է Լաչինի ուղղությամբ: Ինքնապաշտպանական ընդհանուր ուժերի հարձակման ժամանակ վաշտն ապահովում էր ընդհանուր հարձակվող ուժերի ձախ թևը:

Լաչինի գործողությանը մասնակցում է նաև ՀՅԴ Քարինտակի ջոկատը: Մայիսի 18-ին հայկական ինքնապաշտպանական ուժերի առաջխաղացումը Լաչինից ձախ գտնվող Յուզոնիս, Ֆատալիբեյ, Ֆարաջան գյուղերի ուղղությամբ էր: Նրանք կեսօրին դուրս են գալիս հայ-ադրբեջանական սահման Կոռնիձորի մոտակայքում:

Նույն ժամանակահատվածում ՀՅԴ Նաիրիի, Բաղրամյանի, Թումանյանի շրջանների ջոկատները մարտնչում էին Շահումյանում, որտեղ հունիսյան ինքնապաշտպանական մարտերի ժամանակ նրանք ունենում են կորուստներ: Հունիսի 13-ին անհայտ կորում են Նաիրիի ջոկատի հրամանատար Կարոտ Մկրտչյանը, Ալեքսան Ասատրյանը, Գառնիկ Հովհաննիսյանը: Այդ ընթացքում վաշտի դասակները տարբեր տեղերում մասնակցում էին ինքնապաշտպանական մարտերի Մարտակերտի, Ասկերանի և Հաղորթի շրջաններում:

Երբ հայկական ուժերը նահանջելով հասնում են Խաչենի հովիտ, Կիչան, Սրխավենդ, 1992 թվականի սեպտեմբերի 3-ին ՀՅԴ վաշտը ստանում է հետևյալ առաջադրանքը՝ պաշտպանություն

գրադեցնել Կիչան-Սրիսավենդ հատվածում: Ընդհանուր հրամանատարը Ժիրայր Սեֆիլյանն էր, իսկ վաշտի կազմում ընդգրկված էին Աբովյանի, Գյումրիի, Արտաշատի և մեկ հավաքական դասակներ: Վաշտն ընթացքից մտնում է մարտի մեջ՝ փոխգործակցելով Խաչենի ձորակի գումարտակի հետ: Նույն օրվա ընթացքում վաշտը ետ է մղում թշնամու 3 գրոն: Այդ տեղանքում ՀՀՎ վաշտը կարողանում է գրադեցնել պաշտպանություն 1992 թվականի սեպտեմբերի 3-ից մինչև 1993 թվականի մարտ ամիսը:

Կիչան-Սրիսավենդի հատվածում իրականացրած պաշտպանական մարտերի ժամանակահատվածում ՀՀՎ վաշտը վերածվում է գումարտակի և սկսում է կոչվել Շուշիի առանձին հրաձգային գումարտակ կամ Շուշիի առանձնակի գումարտակ¹: Այն որպես գումարտակ կազմավորվել է 1992 թվականի սեպտեմբերի 1-ին ԼՂՀ Ինքնապաշտպանության կոմիտեի նախագահի 1992 թ. հոկտեմբերի 10-ի թիվ 021 հրամանագրով ՀՀՎ կամավորական ջոկատների հիման վրա²: Շուշիի առանձին հրաձգային գումարտակի նախկին շտաբի պետ, ՀՀՎ Գերագույն մարմնի Ազատամարտիկների հանձնախմբի նախագահ պահեստագործի գնդապետ Արտաշես Մխիթարյանի վկայության համաձայն՝ գումարտակի հիմնադրման օրը պաշտոնապես համարվում է նոյեմբերի 25-ը, քանի որ իբրև կանոնավոր ստորաբաժանում այն գործում էր 1991 թվականի նոյեմբերի 25-ից³: «Այդ վաշտն իր անբասիր գործունեությամբ զգալի ավանդ է ներդրել Արցախի տարածքում ընթացած գրեթե բոլոր նշանավոր մարտերում ԼՂՀ բանակի նվաճած հաղթանակներում: Ի դեպ, այդ ժամանակ ԼՂՀ բանակում վաշտից ավելի մեծ ռազմական միավորում դեռևս գոյություն չուներ»⁴, - կարդում ենք «Պետոն» մենագրության մեջ:

Ինքնապաշտպանական ուժերի նախագահի հրամանով գումարտակի հրամանատար է նշանակվում Ժիրայր Սեֆիլյանը, փոխհրամանատար՝ Պետրոս Ղևոնդյանը: 1994 թվականի փետրվարի 14-ին վերջինիս զոհվելուց հետո նույն թվականի մարտի մեկից գումարտակի հրամանատարի տեղակալ է նշանակվում Ռոմիկ Մարգարյանը: Մարտական տարբեր գործողությունների ժամանակ Շուշիի առանձնակի գումարտակի հրամանատարներ են եղել Ժիրայր Սեֆիլյանը (ընդհանուր հրամանատար), Պետրոս Ղևոնդյանը, Հարմիկ Հովսեփյանը, Արտաշես Մխիթարյանը, Մասուն Կիրակոսյանը, Արմեն Եղյանը⁵:

Սկզբնական շրջանում գումարտակի շտաբի պետը Կարեն Ավետյանն էր, 1993 թվականի մայիսից՝ Ռոմիկ Մարգարյանն էր, 1994 թվականի մարտից՝ Արտաշես Մխիթարյանը:

Հրամանատարի՝ սպառազինության գծով տեղակալը Հարմիկ Հովսեփյանն էր, իսկ թիկունքի գծով տեղակալը Արտաշես Մխիթարյանն էր մինչև 1994 թվականի մարտի մեկը, երբ նրա փոխարեն նշանակվում է Մասուն Կիրակոսյանը:

1-ին վաշտի հրամանատարը Վիկտոր Դավթյանն էր, 2-րդ վաշտինը՝ Ալբերտ Ալավերդյանը: 1994 թ. հունվարի 10-ին Կարախանբեյլիում վերջինիս զոհվելուց հետո այդ վաշտի հրամանատար է նշանակվում Ռուբիկ Ասատրյանը: 3-րդ վաշտի հրամանատարը սկզբնական շրջանում Ռոմիկ Մարգարյանն էր, ում՝ գումարտակի շտաբի պետ նշանակվելուց հետո նրա փոխարեն 3-րդ վաշտի հրամանատար է նշանակվում Բորիս Դուկասյանը:

Շուշիի առանձին հրաձգային գումարտակի ծանր զենքի վաշտի հրամանատարը Ազատ Նազարյանն էր, իսկ շտաբային վաշտինը՝ Նորիկ Շահբաղյանը:

Զորամիավորումն ուներ առանձին դասակներ: Ականանետային դասակի հրամանատարը Տիրան Խաչատրյանն էր, ով ներկայումս Հայաստանի Հանրապետության Զինված ուժերի զենեքավ-մայոր է և Պաշտպանության նախարարության Մարտական պատրաստության վարչության պետն է: Կրակային աջակցման դասակի հրամանատարը Հրաչ Գասպարյանն էր, ով զոհվել է 1994 թ. մարտին Սեֆիլյանի մոտ:

Շուշիի առանձին հրաձգային գումարտակի ազատամարտիկների թվաքանակը տարբեր ժամանակահատվածներում տատանվել է 200-350-ի միջև: Ինչպես տեղեկանում ենք «Ղարաբաղյան

¹ Նույն տեղում:

² 01.09.1992 թ. ՀՀՎ վաշտը կոչվում էր 51-րդ Առանձին մոտոհրաձգային գումարտակ (այսուհետև՝ ԱՄՀԳմ), 01.02.1993 թ.՝ 48-րդ ԱՄՀԳմ, իսկ 01.09.1993 թ.՝ Շուշիի առանձին հրաձգային գումարտակ (տե՛ս ՀՀՎ Գերագույն մարմնի Ազատամարտիկների հանձնախմբի արխիվի փաստաթղթերը):

³ Հատված Արտաշես Մխիթարյանի հետ իմ անցկացրած հարցազրույցից:

⁴ Գևորգյան Համլետ, «Պետոն», Ե., 2000, էջ 82-83:

⁵ «Ղարաբաղյան ազատագրական պատերազմ 1988-1994 հանրագիտարան», նշվ. աշխ., էջ 536:

ազատագրական պատերազմ 1988-1994» հանրագիտարանից, գումարտակը պարբերաբար համալրվել է կամավորականներով. «Շուրջ 1600 ազատամարտիկ, որոնցից 11-ը՝ ԱՄՆ-ից, 7-ը՝ Կանադայից, 6-ը՝ Սիրիայից, 23-ը՝ Լիբանանից, 1-ը՝ Իտալիայից, 7-ը՝ Ֆրանսիայից, 9-ը՝ Իրանից, 6-ը՝ Վրաստանից, 3-ը՝ Ռուսաստանից, 45-ը՝ Ջավախքից»¹:

Շուշիի առանձնակի գումարտակն ունեցել է հիմնական և փոփոխական կազմեր: Հիմնական կազմում ընդգրկված էին մշտական ծառայության ընդունվածները, այսինքն՝ այն կամավորականները, ովքեր որոշել էին անցնել ազգային բանակի շարքերը: Փոփոխական կազմի մեջ գտնվողները գալիս էին ջոկատներով և 2-3 ամսով ընդգրկվում էին գումարտակի տարբեր վաշտերում ու դասակներում: Նրանք, իրենց առջև դրված խնդիրներին լուծում տալուց հետո, վերադառնում էին տուն՝ հանգստանալու ու նորից ետ էին վերադառնում՝ թարմ ուժերով լի:

Հրամանատարներն ընտրվում էին հիմնական կազմից:

1991-1994 թթ. Շուշիի առանձին հրաձգային գումարտակը մասնակցել է ԼՂՀ Շահումյանի (Բուզլուխ, Մանաշիդ, Կարաչինար), Հաղբուրթի (Տոդ, Յոդ, Մարիշեն), Ասկերանի (Հասանաբադ, Ղուշչուլար, Փառուխ, Լեսնոյ, Խոջալու), Շուշիի (Քարինտակ, Ջադիսլու, «Մարիբաբ» բարձունք), Մարտունիի (Մյուրիշեն), Մարտակերտի (Կարմիրավան, Սրիսավենդ, Կիչան, Մաղավուզ, Մադաղիս, Սարսանգի ջրամբար, Գյուլաթաղ, Մեհմանա, Չլդրան, Գյունեփայա, Մանիքլու, Կուսապատ, Դամրու, Ջրաբերդ), Աղդամի (Ղզըլքենգեղի, Բոյահմեղի), Ֆիզուլիի (Յուխարի Քյուրդմահմեղի, Ախանլի, Աշաղի Սեյդահմեղի), Կուբաթլուի, Ջաբրայիլի, Քելբաջարի, Ջանգելանի շրջանների, Կրկժանի, Մալիբեկլուի, Շուշի-Լաչին հատվածի, Գետաշենի ենթաշրջանի ինքնապաշտպանական ու ազատագրական մարտերին:

Ջորամիավորման համար առանձնահատուկ կարևորություն են ունեցել Շուշի-Լաչին հատվածի և Ջանգելանի ազատագրական, Մարտակերտի շրջանի Սրիսավենդ-Կիչան պաշտպանական գոտու և Ֆիզուլիի ինքնապաշտպանական մարտերը:

Շուշիի առանձին հրաձգային գումարտակը կազմավորման պահից սկսած՝ Կիչան-Սրիսավենդ հատվածում մղել է ինքնապաշտպանական կատաղի մարտեր, այդ ընթացքում 2-3 անգամ հայտնվելով շրջափակման վտանգի առջև: Կիչանի ջրավազանի կողմից թշնամական ուժերի ներթափանցման պատճառով գումարտակը բազմիցս ընդգրկվում է այդ շրջափակումը վերացնելուն ուղղված մարտերում: Հակառակորդի՝ Կիչանը գրավելուց հետո գումարտակը մասնակցում է գյուղի վերագրավման և ազատագրման մարտերին:

1992 թ. հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին Շուշիի հանգստանալու մեկնած գումարտակի անձնակազմը մասնակցում է Լիսագոր-Մարիբաբ ուղղություններով հակառակորդի ներթափանցման փորձի կասեցմանը:

1993 թ. փետրվարից սկսվում են Մարտակերտի ազատագրման գործողությունները: Մինչև 1993 թ. հունիս-հուլիս ամիսները Շուշիի առանձին հրաձգային գումարտակը մասնակցում է Մարտակերտի ազատագրմանն ուղղված բոլոր, այդ թվում՝ ամենախոշոր գործողություններին, այն է՝ Մանիքլուի հեռուստաաշտարակի գրավմանը, Հակոբ Կամարիի, Մաղավուզի տարածքների ազատագրմանը:

1993 թ. սեպտեմբերին զորամիավորումն ուժերի մի մասով մասնակցում է նաև Կուբաթլուի շրջկենտրոնի ազատագրմանը և այնտեղ տեղակայված հակառակորդի կրակակետերի ոչնչացմանը:

1993 թ. հոկտեմբերին գումարտակը մասնակցում է Ջանգելանի ազատագրմանը, որից հետո 1993 թ. նոյեմբերից մինչև 1994 թ. հունվարի 7-ը Ֆիզուլիի շրջանում Ալխանլի, Քյուրդմահմեղի հատվածում անցնում է պաշտպանության:

1994 թ. հունվարի 4-ից սկսված ադրբեջանական ուժերի հարձակման ընթացքում 3 օր կիսաշրջափակման մեջ գտնվելու պայմաններում գումարտակը պահում է դիրքերը մինչև բանակի հրամանատարության կողմից կարգադրություն է լինում, որ նահանջեն Կարախանբեյլի: Իրավիճակն այնպիսին էր, որ աջ և ձախ կողմերը նահանջել էին և հայկական ուժերի զբաղեցրած նախկին դիրքերում մնացել էր միայն Շուշիի առանձին հրաձգային գումարտակը: Ընդ որում, այդ կիսաշրջափակման մեջ գտնվելու պայմաններում գումարտակը 3 օր անդադար մարտեր էր մղում:

¹ Նույն տեղում:

Բանակի հրամանատարության կարգադրության համաձայն՝ գումարտակը 1994 թ. հունվարի 7-ին նահանջում է դեպի Կարախանբեյլի ջրավազան: Գումարտակն այդ դիրքերում է մնում մինչև 1994 թ. փետրվար ամիսը, երբ նրան խնդիր է առաջադրվում, և այն իր ողջ կազմով տեղափոխվում է Քելբաջար՝ մասնակցելու համար Քելբաջարի ազատագրման 2-րդ գործողությանը: Մարտերից մեկում 1994 թ. փետրվարի 14-ին զոհվում է Շուշիի առանձին հրաձգային գումարտակի փոխհրամանատար Պետրոս Ղևոնդյանը:

Հիշյալ մարտական գործողությունն ավարտելուց հետո զորամիավորումը կրկին տեղափոխվում է Ֆիզուլի և 1994 թ. ապրիլ ամսին մասնակցում է Ֆիզուլիի շրջանում Աշադի Սեփդահմեդլի, Շուքրուրբեյլի գյուղերում տեղակայված թշնամու կրակակետերի վնասագերծման գործողություններին:

1994 թ. ապրիլի վերջին ու մայիսի սկզբին գումարտակը Պաշտպանության բանակի հրամանատարության կարգադրությամբ տեղափոխվում է Մարտակերտ՝ մասնակցելու համար Մարտակերտի շրջանի ազատագրման մարտերին: Մինչև հրադադարի հաստատումը 10 օր շարունակ գումարտակը մասնակցում է նշված մարտական գործողություններին Ջրաբերդ-Կարմիրավան հատվածում:

1991 թ. նոյեմբերի 25-ից մինչև 1994 թ. մայիսի 12-ն ընկած ժամանակահատվածում Շուշիի առանձին հրաձգային գումարտակը տվել է 56 զոհ, 250-ից ավել վիրավոր: Զոհված բոլոր ազատամարտիկները հետմահու պարգևատրվել են հիմնականում Արցախի Հանրապետության կառավարության կողմից: «Հայաստանի Հանրապետության իշխանությունների կողմից նրանցից շատերը նույնպես պարգևներ են ստացել, բայց նրանք ավելիին էին արժանի: Երբ բոլոր զոհվածների ընդհանուր ցուցակով պարգևատրում են «Արիության» մեդալներով, շատ տղաների համար դա ընդունելի չէ: Օրինակ՝ Պետրոս Ղևոնդյանը Արցախի հերոս է, Արցախի Հանրապետության «Ոսկե արծվի» ու «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանակիր է, բայց Հայաստանի Հանրապետության կողմից նա պարգևատրվել է ընդամենը «Արիության» մեդալով»¹, - նշում է Շուշիի առանձին հրաձգային գումարտակի նախկին շտաբի պետ, ՀՅԴ Գերագույն մարմնի Ազատամարտիկների հանձնախմբի նախագահ, պահեստագործի գնդապետ Արտաշես Մխիթարյանը:

1994 թ. մայիսի 12-ին հրադադարի հաստատումից հետո Շուշիի առանձին հրաձգային գումարտակն ազատագրված տեղամասում անցնում է պաշտպանության, ապա մասնակից է դառնում Բանակաշինության գործընթացին: Այն այժմ էլ ընդգրկված է հայոց Բանակի շարքերում և 1996 թ. սկսած՝ հանդես է գալիս 77-րդ առանձին մոտոհրաձգային գումարտակ անվամբ, որի կազմում այսօր հին կազմից մարդ չկա: Ամեն տարի նոյեմբերի 25-ին ամենամոտ կիրակի օրը այդ զորամասի տոն օրն է, և Շուշիի առանձին հրաձգային գումարտակի նախկին կազմը մասնակցում է կազմակերպվող տոնական միջոցառումներին: Վաշտերի ցուցակներում հավերժ մտցված են գումարտակի զոհված ազատամարտիկների անունները: Ասենք՝ 1-ին, 2-րդ, 3-րդ վաշտերում մտցված են համապատասխանաբար Պետրոս Ղևոնդյանի, Ալբերտ Ալավերդյանի և Հրաչ Գասպարյանի անունները: Յուրաքանչյուր օր երեկոյան անվանական ժամանակ կոնկրետ 1-ին վաշտում կարդում են՝ Արցախի հերոս Պետրոս Ղևոնդյան, և առջևում կանգնած զինվորն ասում է. «Զոհվել է 1994 թ. փետրվարի 14-ին Քելբաջարի ազատագրման ժամանակ»: Մնացած զինձառայողներն ասում են՝ փառք, իսկ նա իր հերթին գոչում է՝ հավերժ փառք: Այս արարողակարգը մշտապես կրկնվում է բոլոր վաշտերում:

Շուշիի առանձին հրաձգային գումարտակի նախկին կազմը պահպանում է կապը ոչ միայն 77-րդ առանձին մոտոհրաձգային գումարտակի, այլև ազգային բանակի հրամանատարության հետ, որոնց կողմից առ այսօր վետերան կամավորականները արժանանում են տարբեր պարգևների:

¹ Հատված Արտաշես Մխիթարյանի հետ իմ անցկացրած հարցազրույցից:

ՀՏԴ 82-9 (479.243)

Գրականագիտություն

Թեհմինա Մարության
Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

ՍԵՐՈ ԽԱՆԶԱԴՅԱՆԻ «ՇՈՒՇԻ» ՎԵՊԻ ՊԱՏՄԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Հոդվածը նվիրված է Սերո Խանզադյանի «Շուշի» վեպի պատմականության խնդիրներին: Վեպում մեծածավալ փաստական, պատմական նյութ է օգտագործված, և Խանզադյանը կարողացել է ապահովել փաստանյութի գեղարվեստական մշակման բարձր մակարդակ: Գրողն ի հայտ է բերում պատմափիլիսոփայական հստակ աշխարհայեցողություն, որի գաղափարական հիմնաքարը հայ ժողովրդի ազատասիրության, անկախ գոյության ձգտման, ապրելու, գոյատևելու համար կամքի, այլ խոսքով՝ կենսունակ գոյակերպի հաստատումն է:

Բանալի բառեր՝ Շուշի, Արցախ, պատմավեպ, պատմականություն, պատմական կերպար, պատմափիլիսոփայություն:

Tehmina Maroutyan,
Candidate of Philological Sciences, Associate Professor

SOME ISSUES OF THE HISTORICAL ESSENCE OF THE NOVEL 'SHUSHI' BY SERO KHANZADYAN

The article refers to some issues of the historical essence of the novel 'Shushi' by Sero Khanzadyan. A huge amount of factual and historical material is available in the novel and Khanzadyan was able to ensure an appropriate level of the fictional interpretation of the factual material. The writer reveals a clear historical-philosophical world outlook, the ideological corner-stone of which is the statement of the love for freedom of the Armenians, their desire of an independent existence, their strong will of living and surviving, in other words, the confirmation of their lusty existence.

Keywords: Shushi, Artsakh, a historical novel, historical essence, a historical character, historical philosophy.

Теймина Марутян,
Кандидат филологических наук, доцент

К ВОПРОСУ ОБ ИСТОРИЧНОСТИ В РОМАНЕ СЕРО ХАНЗАДЯНА „ШУШИ,,

Статья посвящается проблемам историчности романа Сера Ханзадяна „Шуши,,. В романе использован объемный фактический, исторический материал, и Ханзадян сумел обеспечить высокий уровень при художественной обработке документа. Писатель определил историкофилософское мировоззрение, идеологической основой которого является свободолюбие армянского народа, стремление к независимому существованию, к жизни, другими словами говоря- является подтверждением яркого образа жизнеспособности.

Ключевые слова: Шуши, Арцах, исторический роман, историчность, исторический образ, историческая философия.

Արցախյան շարժման բռնկումի հետ ասպարեզ եկած հայ մտավորականների շարքում Սերո Խանզադյանը ջերմեռանդ ու գլխավոր դրոշակակիրներից էր: Պատահական չէ, որ շարժման առաջին իսկ օրերից Խանզադյանն իր գրական ու հրապարակախոսական հարուստ պաշարն ի սպաս դրեց պատմական արդարությունը վերականգնելու երախտաշատ գործին: «Ղարաբաղը կրակների մեջ» փաստավավերագրական գրքում գրողը հանրագումարի է բերում Արցախյան ազատագրական պայքարին նվիրված իր հասարակական, հրապարակախոսական

գործունեությունը՝ ինքնավստահություն, խիզախություն ու քաջություն պատգամելով սերունդներին: Այդ օգտաշատ գործունեությունն ունեցավ նաև գրական թոփք. Ս.Խանգադյանը դեպի Արցախի արմատները գնաց նաև գեղարվեստական խոսքով՝ 1991-ին հրատարակելով «Շուշի» վեպը՝ 18-րդ դարի վերջին քառորդի արցախյան իրադարձությունների անդրադարձով:

Վեպը Շուշիի պատմության գեղարվեստական յուրացման առաջին փորձն է՝ գրված Արցախյան շարժման անմիջական ազդեցության տակ՝ Շուշիի ազատագրության նախաշեմին: Հեղինակի նպատակն էր պատմական ճշմարտությունների, անցյալի դասերի, Արցախի հերոսական ոգու բացահայտումով նոր շունչ հաղորդել նորօրյա ազատամարտին և կերտել հայոց պետականության գաղափարախոսությունը: Առհասարակ, հայ պատմավեպը մշտապես ծրագրային բնույթ է ունեցել: Բաֆֆին, Ծերենցը, Մուրացանը, Պռոշյանը, Դեմիրճյանը, Ջորյանը և հետագա շրջանի գրողները իրենց պատմաքննական սևեռումներով փորձում էին հասարակական-քաղաքական բարդ հարցերի լուծումները գտնել պատմական ժամանակներում: Պատահական չէ, որ մեր պատմավեպերից շատերը գրվել են ժողովրդի համար բախտորոշ ժամանակաշրջաններում: Հեղինակելով «Շուշի» վեպը՝ Խանգադյանը հարցադրումներ ուներ ի՞նչ ժամանակի համար. «Մերօրյա արցախյան շարժման արմատները շոշափելի են պատմական անցյալի այդ շերտերում», - նշում է հեղինակը վեպի ծանուցման մեջ և հավելում՝ թե՛ ժամանակագրական, թե՛ ազգային-ազատագրական պայքարի առումով «Շուշին» «Մխիթար Սպարապետի» շարունակությունն է:

Խանգադյանը առաջին վիպասանն է, որ գրող-հետազոտողի խորակրկիտ հայացքով անդրադարձավ 18-րդ դարի ամենաբարդ ու դժնդակ շրջաններից մեկին՝ գրեթե չշեղվելով պատմական փաստերից ու ժամանակագրությունից: Հերոսների խառնվածքների հատկանիշները նույնպես բխում են ժամանակի պատմական առանձնահատկություններից:

Վեպի բնաբանը Մովսես Կաղանկատվեցու¹ պատմությունից է՝ «Ճշմարտությունը չի կարող ծածկված մնալ և լույսը փակի տակ լինել»: Բնաբանի ընտրությունը հուշում է, որ վեպը, Արցախի, Շուշիի մաքառումների պատմության գեղարվեստական հուշարձան լինելով, նաև վավերապատում-վկայախոսություն է պատմական ճշմարտագանցությունների դեմ, որոնք տարածում են ազդերները՝ հայոց տոհմիկ երկրամասի լիակատար տեր հռչակելով իրենց:

«Շուշի» վեպն ընդգրկում է պատմական երկարատև ժամանակահատված՝ 1740-ական թվականներից մինչև 1790-ական թվականները՝ շուրջ 5 տասնամյակի պատմություն:

Վեպը գրելու համար Խանգադյանն ուսումնասիրել է հարյուրավոր պատմական ուսումնասիրություններ, այդ թվում ականատես պատմիչներ Առաքել Դավրիժեցու, Աբրահամ Գ Կրետացու, Եսայի Հասան Զալալյանի, Աբրահամ Երևանցու, Ջաքարիա Քանաքեռացու օրագրություններն ու պատմությունները, բազմաթիվ արձանագրություններ, հիշատակարաններ, կալվածագրեր, կոնդակներ, հավաքել է, ինչպես ինքն է վկայել, «ավագահատիկների նման ցրված» բազմաթիվ փաստեր ու ազգագրական նյութեր: Լինելով Արցախի պատմական գրեթե բոլոր վայրերում՝ գրի էր առել պատմություններ Արցախում մղված հերոսական մարտերի, հինավուրց Արցախ-Խաչենի իշխանական տան շառավիղների՝ հինգ մելիքությունների մասին, որոնք հատկապես հզոր էին XVII դարավերջին և XVIII դարասկզբին, և պատմական այդ շրջանում էլ գլխավորել են հայ ազգային ազատագրական շարժումը՝ ընդդեմ պարսկական և թուրքական բռնակալությունների:

Վեպում մեծածավալ փաստական, պատմական նյութ է օգտագործված, և Խանգադյանը կարողացել է ապահովել փաստանյութի գեղարվեստական մշակման բարձր մակարդակ:

Պատմականության զգացողությունը վեպում բնորշվում է հեղինակի գեղագիտական կայուն սկզբունքներով: Նա չի վիճարկում պատմիչների ու պատմագետների կարծիքները, ավելին՝ պատմության փորձի քննությունից արված հիմնական եզրահանգումները դնում է նոր ընթացքի մեջ, բացում դրանց ենթիմաստները՝ ներհյուսելով մերօրյա խնդիրներին:

Խանգադյանին խորապես մտահոգում էին լույս տեսնող այն բոլոր գրքերը, որոնցում խեղաթյուրվում էր հայոց պատմությունը: Հարցադրույցներից մեկում խոսելով Մովսեսական հանրագիտարանի Ա հատորի մասին՝ նշել է, որ հատորում պետք է տեղ գտնեին նաև այն

1 Մովսես Կաղանկատվացու «Աղուանից աշխարհի պատմություն» աշխատության մեջ հարուստ տեղեկություններ կան «Հայոց արևելից կողմանց» Արցախ և Ուտիք նահանգների վաղ միջնադարյան պատմության մասին:

գործիչները, որոնք մեծ դերակատարում են ունեցել պատմության տարբեր շրջաններում, օրինակ Աբգար թագավորը (ըստ Խորենացու «Հայոց պատմության»՝ Աբգար Ուքքաման, ընդունելով քրիստոնեությունը, դարձել է 1-ին դարի անդրանիկ քրիստոնյա թագավորը), Աբրահամ Երևանցի պատմիչը (18-րդ դար), Աբրահամ Գ Կրետացին¹, եգիպտահայ գործիչ Աբուսահլը և ուրիշներ:

Նշվածներից Աբրահամ Գ Կրետացի կաթողիկոսին և Աբրահամ Երևանցուն մենք հանդիպում ենք «Շուշի» վեպում՝ որպես պատմողի կերպար ու գործող հերոս: Ավելին՝ Երևանցու «Պատմություն պատերազմացն»² և Կրետացու «Պատմագրություն անցիցն իւրոց եւ Նատր-Շահին պարսից»³ աշխատությունները պատմական հենք են ծառայել վեպի առաջին մասի համար: Աբրահամ Երևանցին երևանցի վաճառական է, որ շուրջ մեկ տասնամյակ շրջել էր Իրանում և Թուրքիայում և լավատեղյակ էր ժամանակի ռազմաքաղաքական անցուղարձին: Քաղաքական իրադարձություններին, գերազանցապես պատերազմներին նվիրված այդ երկը սկսվում է աֆղանների դեպի Պարսկաստան կատարած արշավանքի պատմությամբ և ավարտվում է Մուղանի դաշտում Թահմազ կուլի խանի՝ Նադիրի թագադրության և Թուրքիայի հետ հաշտություն կնքելու դեպքերի նկարագրությամբ: Թեև Աբրահամ Երևանցու պատմությունն ավարտվում է 1836 թվականի դեպքերով, Խանզադյանը նրան, որպես պատմողի կերպար՝ անբաժան է իր «նշխարարան» մատյանից, «խոսեցնում» է մինչև վիպական գործողությունների ավարտը (1790-ական թվականներ):

Անդրկովկասում 1734-1736 թվականներին Նադիրի ծավալած գործունեությունը, Մուղանում նրա թագադրման և Բայրամ Սելամի տոնակատարության արարողությունները շատ ավելի հանգամանորեն է ներկայացրել Աբրահամ Կրետացին: Նա ընդհանուր կողմերով հաստատում է Երևանցու հաղորդած տեղեկությունները այդ ժամանակահատվածի իրադարձությունների վերաբերյալ: «Պատմության» մեջ Կրետացին ակնարկում է, որ երբ ինքն էլ է հրավեր ստացել ներկայանալու Մուղան, շատ է զարմացել և ցանկացել է իմանալ կանչի պատճառը. «Բայց կարծիք ունեց, թե զՇահն նստուցանելոց է ի գահոյո իւր, և ունեց, թե՛ ինքն նստելոց է. Բայց հաւաստին և վասն էրն ոչ է յայտնի»⁴: Խանզադյանի վեպում պատմական եղելությունների համաձայն՝ Աբրահամ Կրետացին Նադիրի թագադրման արարողության կենտրոնական դեմքն է: Դիվանագիտորեն կատարելով նորընծա շահի կամքը՝ Կրետացին մասնակցում է թագադրմանը և ավելին՝ շահի պատվերով, «իբրև Մեծն Իրանի թագավորության տարեկից արքայական երկրի հոգևոր առաջնորդ», օրհնում է նրա սուրը: «Աբրահամ կրետացին սուրը բարձրացրեց գլխից վերև, օրհնեց իր իմացածի պես, սակայն առանց համբուրելու և ոսկեշղթա օղերով կապեց Նադիր շահի մեջքին.

-Թող այս սուրը հատու լինի քո և մեր թշնամիների գլխին:

Նադիր շահը ժպտաց երկար բեղերի տակ:

- Օ՜, բաբալըղ (Աստված օրհնի – Թ.Մ.) հպարտ եմ, որ բարեկամ հայն օրհնեց իմ սուրը»⁵:

Վեպում վերոնշյալ դրվագին հետևում է վեհափառի հաջորդ դիվանագիտական քայլը. Կրետացին, նվերներով բեռնավորված, գնում է Նադիրի ապարանք և «երկրի վրա մարգարեին փոխարինող Վալիաթնամեից» խնդրում վերադարձնել Էջմիածնի «արդար ունեցվածքը», և վերականգնել վանքի «վաղնջական իրավունքը»: Վեպում Աբրահամ Երևանցին այդ դրվագների ականատեսն ու պատմողն է, արտահայտում է իր վերաբերմունքը կաթողիկոսի նկատմամբ, գովերգում նրա «բռնած դիրքը», «հոգու արիությունը», երկրորդում «մեծ ցավից ծնված» հորդորները. «Հաճախ էր կաթողիկոսն ինձ ասում՝ այն թաթը, որ չես կարող կտրել, համբուրիր ու դիր ճակատիդ»⁶:

¹ Հայոց կաթողիկոս(1734թ.-ից) և պատմագիր: Գրել է «Պատմագրություն անցիցն իւրոց և ՆատրՇահին պարսից» երկը (բաղկացած է 53 գլխից, առաջին անգամ հրատարակվել է 1796 թ. Կալկաթայում): Տեղեկություններ կան այն մասին, որ Մերո Խանզադյանն ունի անտիպ ստեղծագործություն՝ «Աբրահամ Կրետացի» խորագրով, որի մասին վկայել է. «Իմ դառը մայրամուտի ժամանակ եմ գրել»:

² Աբրահամ Երևանցի, Պատմություն պատերազմացն, Ե., 1938թ.:

³ Աբրահամ Կրետացի, «Պատմագրություն անցիցն իւրոց եւ Նատր-Շահին պարսից»³, Վաղարշապատ, 1870:

⁴ Նույն տեղում, էջ 27:

⁵ Ս.Խանզադյան, Շուշի, էջ 78:

⁶ Նույն տեղում, էջ 79:

Վեպի միջուկն ու կենտրոնական խնդիրը Շուշիի պատմական ճակատագիրն է, ազատագրության իդեալը, «Ղարաբաղից օտար ուտքը կտրելը»: 1752 թվականին Վարանդայի տիրապետչակ Մելիք-Շահնազարի ապագային ու աղետալիք քաղաքակրթության արդյունքում Արցախի սրտում՝ Շուշիում հաստատվում է քոչվոր ջեմաշիի ցեղի սարըջալլու ճյուղի ցեղապետ Փանահ խանը: «Մելիք Շահնազարը Հայոց աշխարհի սրտում օտար խանական որջ շինեց,-գրում է Խանզադյանը,- դրանով նա Ղարաբաղի գերեզմանի առաջին քարը դրեց»¹:

Վեպում պատմականությունն արտահայտվում է ժամանակային բազմաթիվ էքսկուրսներով, մեծաթիվ գլխավոր ու երկրորդական կերպարների փոխնիփոխ անցումներով, գործողությունների բազմաճյուղ զարգացումով, բայց հեղինակը կարողանում է դրանք հասցնել տրամաբանական հանգրվանի և խտացնել ասելիքը:

Պատմականության արտահայտիչներից մեկը վեպում հեղինակի պատմահայեցողությունն է՝ պատմության փիլիսոփայական իմաստավորման ենթատեքստով: Հեղինակը լավածանոթ է Արցախի պատմությանը և պատմության իմացությամբ էլ փորձում է հասկանալ, գնահատել, վերլուծել պատմության փորձը, խորհուրդը, «հետադարձ մարգարեությունը» (Խուլիո Կորտասար): Գրականագետները հաճախ են նկատել, որ «գրականության պատմության միջոցով կարելի է վերականգնել ժողովրդի պատմությունը», և հաճախ գրողն իր ժամանակի մասին ասում է շատ ավելին, քան պատմիչն ու պատմաբանը»²:

Վեպը բաղկացած է ժամանակային կոնկրետ տարածք ու հանգույց ունեցող չորս մասերից, որոնց ենթագլուխների միասնությամբ էլ ամբողջանում է գրողի պատմահայեցողությունը: Վեպն ունի պատումի, շարադրանքի ինքնատիպ ձև: Դեպքերը ներկայացնում է ոչ թե հեղինակը, այլ վեպի տարածաժամանակային տարբեր հանգրվաններում այս կամ այն առաքելությամբ հանդես եկող կերպարները՝ Գոհար միանձնուհին, ով մեզ ծանոթ է «Մխիթար սպարապետ» պատմավեպից Գոհար իշխանուհու կերպարով, Աբրահամ Երևանցի պատմիչը, ով ականատեսի աչքերով արձանագրում ու գնահատում է ժամանակի անցուդարձերը, Խնձորեստանի մելիք դավաճան Միրզեխանի կինը՝ Երնջիկը, Մելիք Շահնազարի հանցակից ու մեղսակից Տեր-Իսրայել կաթողիկոսը, պարսից շահի դեսպան, ազգությամբ հայ Ալի Արդուլ Հասանը, ռուսահայոց թեմի առաջնորդ Հովսեփ արք. Արդուլյանը, Աբրահամ Գ Կրետացի կաթողիկոսը և ուրիշներ: Փաստորեն վեպում տիրապետողը ոչ թե հեղինակի, այլ պատմողի խոսքն է, և դա խանզադյանական պատմահայեցակարգի հիմնական առանձնահատկություններից է:

Խանզադյանին ավելի շատ հետաքրքրում է պատմողի մտածելակերպը, գործողությունները դիտելու և նկարագրելու ձևը, պատմական եղելությունները գնահատելու չափանիշը: Դրա համար էլ վեպի տարբեր հատվածներում պատմողը մեծ մասմաբ ականատես է կամ ինչ որ մեկից լսած պատմության վերարտադրող:

Երբեմն պատմողը, նկարագրելով այս կամ այն իրադարձությունն ու գնահատելով այս կամ այն իրավիճակը, տալիս է հենց իր կերպարային բնորոշ նկարագիրը: Այդպիսի ցայտուն կերպար է Տեր-Իսրայելը, որին Մելիք Շահնազարը հանձնել էր Ամարասի հոգևոր գահաթոռը՝ իրեն մատուցած բազում սրբապիղծ ծառայությունների դիմաց: Պատմելով, թե ինչպես է թաթախման սուրբ մեռնին թույն խառնելով՝ թունավորել Ձագեձորի Մելիք-Օհանին, Իսրայելը այսպես է իր հոգեվիճակը նկարագրում. «Ես բնավ մեղքի խայթ չգաացի: Դե, աշխարհ է, ճակատագիր է, ուր կարող ես փախչել վերուստ սահմանածից: Այս անգամ էլ ինձ բնավ մեղսագործ չգաացի: Այս սատկածը պարարտացել էր իր իշխանական փառքով, ինձ չէր ընդունում: Ես իմ գործն եմ անում, իսկ խիղճ, գուր-մուր ասվածները մաշված, ծակծկված գուլպաներ են, հանիր ոտքիդ, դեն գցիր»³: Մեկ այլ եղենագործության մասնակցելով՝ կաթողիկոսը հանդարտորեն պատմում է. «Գիշերվա կեսին Իբրահիմ խանը ինձ ու երկու դահիճի հետ անաղմուկ մտավ Մելիք Եսայու բանտախուցը: Թևքերը ետ քաշեց, մագիլները խրեց կապկապված Եսայու կոկորդն ու սկսեց խեղդել: Նրա մարդիկ ամուր բռնեցին մելիքի ոտքերն ու ձեռքերը: Իբրահիմ խանը ծունկի եկավ մեռած մելիքից մի քիչ հեռու, գորգի վրա ու սկսեց առավոտյան նամազը: Ես ոչ մի աղոթք չիշեցի»⁴:

¹ Ս.Խանզադյան, Շուշի, էջ 273:

² Ժ.Քալանթարյան, Անդրադարձներ, էջ 92:

³ Ս.Խանզադյան, Շուշի, էջ 279

⁴ Նույն տեղում, էջ 392:

Գաղափարական մի առանցքի շուրջ ամբողջացնելով բոլորի պատմածները, խոհերն ու մտորումները՝ Խանգաղյանը վերստեղծում է դարաշրջանի՝ դրամատիզմով ու վայրիվերումներով լեցուն մթնոլորտը:

Վեպի սկզբնամասում Խանգաղյանը պատմական իրադարձությունների պատճառահետևանքային շղթայից փորձում է առանձնացնել առաջին օղակը, որից էլ բացվում-ծավալվում է բուն թեման՝ Շուշիի ճակատագիրը:

1733 թվականին Կոդմանք Արևելից գերագահ իշխան Մելիք Եզանը՝ վեպի ամենաընդգծված կերպարներից մեկը, դաշինք կնքելով Նադիր Ղուլիի հետ, կազմակերպում է օսմանյան Սարը Մուստաֆա փաշայի զորքերի կոտորածը Արցախում: 1736-ին Մուղանի դաշտում շահ հռչակվելուց հետո Նադիրը, որպես երախտագիտության նշան, Արցախի հինգ մելիքությունները միավորում է մի նահանգի մեջ և խանի տիտղոս շնորհում Մելիք Ավան Եզանին: Ստեղծվում է Ղարաբաղի նահանգը՝ Տոդ կենտրոնով՝ որպես ինքնավար մի երկիր, որի սահմանները ձգվում էին Գանձակի հարավային մասերից մինչև Արաքս գետը: Պատմական այս եղելությունների անդրադարձը, ինչպես նշեցինք, զբաղեցնում է վեպի առաջին մասը: Ի դեպ, Մելիք Եզանը, իբրև քաղաքական-ռազմական գործիչ, հայտնի է դարձել Նադիրի Հայաստան մուտք գործելուց հետո: Աբրահամ Երևանցին իր պատմության մեջ նրա անունը չի հիշատակում (թեև վեպում, որպես գործող կերպար, առնչվում է նրա հետ), Կրետացին նշում է միայն, որ Մելիք Եզանը (Էկեն – Թ.Մ.) մասնակցել է Մուղանում Նադիրի թագադրման արարողություններին: Պատահական չէ, որ Նադիրին հպատակություն հայտնած հայ մեծամեծների շարքում աղբյուրները չեն հիշատակում Սյունիքի և սղնախների ազատագրական շարժման առաջնորդներից և ոչ մեկին: Մինչդեռ հայտնի է, որ 18-րդ դարի 20-ական թթ. հայ ամենանշանավոր ռազմական գործիչը Դավիթ-Բեկն էր: Աբրահամ Երևանցու մի վկայության համաձայն՝ Սյունիքի սղնախների ազատագրական շարժման առաջնորդները բարյացակամ չեն եղել պարսից զահի հավակնորդ Նադիրի նկատմամբ: Թերևս դրանով է բացատրվում այն, որ ժամանակի հայ և պարսկալեզու աղբյուրներն ականարկ անգամ չեն արել հայ ժողովրդի մղած հերոսամարտերի և նրա առաջնորդների մասին: Նրանք գիտակցաբար լուրջան են մատնել Դավիթ-Բեկին ու նրա հետ կապված իրադարձությունները, որպեսզի չգրգռեն Նադիր շահին: Խորամիտ Դավիթ-Բեկը, հավանաբար, հասկացել էր Նադիրի՝ հեռուն գնացող նպատակները և պարզ է, որ չէր կարող բարյացակամ լինել նրա նկատմամբ: Նադիր շահի պալատական պատմագիր Մուհամմադ-Քյազիմը, բնականաբար, մեծարում է ոչ թե Դավիթ-Բեկին կամ Մխիթար Սպարապետին ու Ավան Յուզբաշուն, այլ Նադիրին հպատակություն հայտնած Դիզակի Ավան Եզանին: Նա հիշատակվում է որպես նուրբ քաղաքագետ, արտակարգ ընդունակություններով օժտված իմաստուն գործիչ, որը Նադիր կողմից մեծ սիրո ու վստահության էր արժանացել: Ավելին, այդ ժամանակաշրջանում հայ ռազմական առաջնորդների շարքում առաջին տեղը հատկացնում է Մելիք Եզանին¹:

Այսպես, Նադիր շահի կողմից Սյունիքի ու Արցախի հայության իրավունքների ճանաչումը նոր շուշ է հաղորդում ազատագրական պայքարին, հավատ ներշնչում վերջնական հաղթանակի հանդեպ:

Հավաստիորեն արտահայտելով պատմական ժամանակը՝ Խանգաղյանը վեպի երկրորդ մասում արդեն ներկայացնում է 1747 թվականին Նադիր Շահի սպանությունից հետո Պարսկաստանում ծայր առած գահակալական կռիվները, որոնց գումարվում են նաև ծայրամասային խանությունների պառակտողական քայլերը: Գանձակի խանը փորձում է վերականգնել մինչնադիրյան իրավունքները, բայց հանդիպում է Վարանդայի և Դիզակի մելիքների դիմադրությանը: Բիարկե, կռիվների վրայով Խանգաղյանն անցնում է հպանցիկ, հաճախ փաստական-տեղեկատվական անցումներով, բայց և ընդհանուր առմամբ պահպանում է կենդանի իրականության բաբախը:

Վեպի կենտրոնական դեմքը դավաճան ու արյունարբու բռնակալ Մելիք-Շահնազարն է, որ, օգտվելով Նադիրի սպանությունից հետո ստեղծված քաոսից, սպանում է եղբորը՝ Մելիք-Հովսեփին, կոտորում նրա ընտանիքը և իրեն հռչակում Վարանդայի մելիք: Ինչպես հեղինակն է գրում՝ «Ցեց է ընկնում Հայոց տունը»²: Բաֆֆին «Խամսայի մելիքությունները» աշխատության մեջ, որ նույնպես

¹ «Հայ ժողովրդի պատմություն», հ.4., Ե., 1972:

² Նույն տեղում, էջ 201

Խանգադյանի վեպի աղբյուրներից է, Մելիք-Շահնազարին անվանել է «Ղարաբաղի կործանիչ» և նրա ծագման վերաբերյալ հետևյալ ուշագրավ բացահայտումն արել. «Մելիք-Հովսեփը և Մելիք Շահնազարը խորթ եղբայրներ էին, Հովսեփը ծնված էր Մելիք-Հուսեփին Աննախաթուն անունով կնոջից, որը Դիզակի իշխան Մելիք-Ավանի քույրն էր, իսկ Մելիք-Շահնազարը ծնված էր Զոհրախանումից, որը Նախիջևանի խանի աղջիկն էր, ազգով թուրք: Մելիք-Հուսեփը նրան իբրև գերի բերեց Նախիջևանից, հետո ամուսնացավ նրա հետ»¹: Մելիք Հովսեփը Խաչենի տիրակալ Հասան Զալալյանների տան փեսան էր, և մելիքի մանկահասակ որդին՝ Սայիբեկը իր քեռի Մելիք-Ալահվերդու միջոցով փրկվել էր արյունահեղությունից ու ապաստանել այնտեղ: Սակայն Մելիք-Շահնազարի արյունոտ ձեռքը հասնում է նաև 4-ամյա փոքրիկին:

Խանգադյանը ոչ մի շեղում թույլ չի տվել պատմականության առումով, հերոսներն իրենց դարի ու ժամանակի մեջ են: Այստեղ են Գյուլիստանի Մելիք-Հովսեփը, Զրաբերդի տեր Աստվածապով սպարապետը, Մելիք-Ալահղուլի սուլթանը, Խաչենի Մելիք-Ալահվերդին, Դիզակի Մելիք-Եսային, բազմաթիվ մելիքագուհիներ, հոգևորականներ, զինականներ, աշխարհագորայիներ, մելիքների ու զորականների ազատատենչ կանայք, որոնք, միավորելով իրենց ուժերը, դուրս են գալիս «հայրենիքի դավաճան» Մելիք-Շահնազարի դեմ: «Ես պատրաստ եմ ինձ կնքահայր դարձնել այն շանը, որի թեկուզ հաչոցը ապահովում է իմ գահը, իմ իշխանությունը»² - այս համոզմունքով է առաջնորդվում «հայոց ուխտից հեռացած» Մելիք-Շահնազարը, և հասկանալով, որ իր ուժերը բավարար չեն՝ երկար դիմադրելու մյուս չորս մելիքների՝ իր դեմ ծրագրած պատժապարտիչ գործողություններին, դիմում է Արցախի մերձակայքում թափառող սարջուլյունների աննշան ցեղապետ Փանահ խանի օգնությանը, հպատակվում նրան, և նույնիսկ թույլ է տալիս ամենաանթույլատերի արարքը. Փանահին է ընծայաբերում իր մելիքության տարածքում գտնվող հզոր պաշտպանական ամրությունը՝ Շուշի բերդը: Փաստորեն, մելիքների երկպառակությունից օգուտ է քաղում երրորդ՝ օտար կողմը՝ Փանահը, որ Մելիք-Շահնազարի թողտվությամբ 1752-ին հաստատվում է Արցախի սրտում: Խամսայի մելիքները ստիպված են լինում դիմակայելու նոր մարտահրավերների և տնականորեն ենթարկվելու զրկանքների: Հենց Փանահի ժամանակներից Արցախ են ներթափանցում այլացեղ ու այլակրոն էթնիկ տարրեր: «Մեր հայոց արևելքում, ուր մի մուսուլմանականիսթաճիթ անգամ չկար, բնավորվեցին քոչվոր խմբեր,-պատմական դառը իրողության մասին պատմում է հեղինակը:- Դրանք Փյուսյան, Կարաչարլի, Զինլի, Դամբչի-Հասանլի, Ղըզլ-Հադիլի, Սաֆի-Քյուրդլի, Քյոյ-Ահմեդլի, Սահաթլի, Քենգերլի կոչվող վաչկատուն ցեղերն էին»³: Կարճ ժամանակում Շուշին դառնում է սարքջալու ավագակապետի ինքիշխանության և ուժի կենտրոնը, որտեղից նա այրում, մոխրացնում էր ամեն ինչ, թույլ տալիս անթվելի չարագործություններ ու բանսարկություններ, փորձում բոլոր հնարավոր ու անհնարին միջոցներով իրեն ենթարկել երբեմնի հզոր մելիքներին, ողջ Ղարաբաղը:

Փանահին հաջորդում է ոչ պակաս բռնակալ որդին՝ Իբրահիմ խանը, որը շարունակում է ամենաստոր միջոցներով պայքարել հայոց մելիքությունների ու դրանց հոգևոր կենտրոն Գանձասարի կաթողիկոսության դեմ: Իբրահիմի կողմից դավադրաբար սպանվում են Դիզակի Մելիք Եսային, Գանձասարի կաթողիկոս Հովհաննես Հասան Զալալյանը: Իբրահիմ խանի լարած որոգայթների արդյունքում սպանվում են նաև Դիզակի Մելիք-Բախտամը, Մելիք-Աբասը, Մելիք-Եսայու որդի Բադդատ-բեկը, ինչպես նաև բազմաթիվ մելիքագուհիներ: Խանգադյանը գեղարվեստական ցայտուն ու սահմակեցուցիչ պատկերներով է ներկայացնում Իբրահիմ խանի, նրա կնոջ՝ Մելիք Շահնազարի դուստր Հուրիզադի հայահռչատիչ կենսավարությունը, անթվելի եղեռնագործությունները: Առհասարակ, վեպում հատուկ վերաբերմունքի է արժանի կանանց դերի խնդիրը: Խանգադյանի կերտած հերոսական խառնվածքով բազմաթիվ կանանց իր տեսակի ու նկարագրի ողջ զգրելիությամբ հակադրված է Հուրիզադ խանումը:

Ցուցահանելով Շուշիի պատմության «արյունոտ» էջերը՝ Խանգադյանի նպատակն էր ցույց տալ պատմականորեն միակ ճիշտ ուղին հայ ժողովրդի համար. այն է՝ Արցախի ազատագրումը, իսկ ազատագրել Արցախը՝ նշանակում էր նախ և առաջ ազատագրել ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող Շուշին: Վ.Պոտկոյի հայտնի ձևակերպմամբ՝ «Ով տիրում է Շուշիին, նա

¹ Դաֆֆի, Երկերի ժողովածու, հատոր 10, Ե., 1964:

² Ս.Խանգադյան, Շուշի, էջ 211:

³ Ս.Խանգադյան, էջ 273:

տիրում է Ղարաբաղին»։ Այս միտքը տարրալուծված է վեպում և կազմում է վեպի հոգեշաղախը։ Գրողի հոգին ծառս է լինում, նա չի կարողանում զսպել հուզումը։ «Թեև մենք շրջապատված ենք թշնամիներով ու թեև մեր Շուշին գերված է, բայց երբեք ստրուկ չէ։ Ազատության կռվի կրակը մեր մեջ հզոր է և ոչինչ չի մարի նրան ոչ այսօր, ոչ էլ եկող ժամանակներում»¹։

Խանգաղյանը վեր է հանում պատմության խորհուրդը, դասը։ «Իմացիր, տե՛ր իշխան, Ղարաբաղը երբեք քո մականի տակ չի ընկճվի ու չի դառնա օտարին կեր ու կուր։ Ժամանակները մեկ կամ տաս տարով չեն չափվում, այլ՝ հարյուրամյակներով։ Մի կարծիր, թե դու և քո դրածոն Ղարաբաղը կմարսենք»² - Գոհար միանձնուհին է պատմության այս դասը նետում Մելիք-Շահնազարին։

Վեպի վերջին հատվածները հատկանշվում են հրապարակախոսական որոշակի լիցքով։ Գրողի իդեալը կռվող ժողովուրդն է, արթուն ու զինված հայր՝ ականջալուր կռվակոչի ահագանգին՝ «Է՛յ, հայե՛ր, ելե՛ք, եկե՛ք։ Փրկենք մեր Ղարաբաղը, մեր տունը, մեր պատիվը... Դեպի Շուշի Ելե՛ք... Մենք կփրկենք քեզ, Ղարաբաղ... Կանչը դողդաց Ղարաբաղի հորիզոնում։ Այսպես՝ մինչև օրս...»³։

Ամփոփելով նշենք, որ վեպը, իբրև հայրենասիրության ազնիվ թեման շոշափող գործ, կոչված է հաստատելու, որ ժողովրդի դեմ դավեր նյութողը, նրան դավաճանողը, ի վերջո պիտի մերկացվի, պարտվի ու պատժվի, որովհետև ժողովուրդն անպարտելի է։ Արտակ Մաղալյանի դիպուկ նկատումով՝ «Միայն Արցախյան հերոսական ազատամարտի շնորհիվ հաջողվեց սրբագրել Մելիք-Շահնազարի թույլ տված 240-ամյա ճակատագրական սխալը»⁴։

Իր պատմագեղարվեստական արժեքայնությամբ, կառուցվածքային ինքնատիպությամբ, պատմաքննական ու հոգեբանական դիտարկումներով, արդիական ըմբռնումների խորությամբ ու ընդհանրացումներով, հյութեղ ոճով Սերո Խանգաղյանի «Շուշի» վեպը հայ դասական պատմավեպի եզակի նմուշ է։

¹ Նույն տեղում, էջ 414։

² Նույն տեղում, էջ 452։

³ Նույն տեղում, էջ 479։

⁴ «Պատմաբանասիրական հանդես», 2014թ., թիվ 1, էջ 194։

Էդիկ Մինասյան
պ.գ.դ., պրոֆեսոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՊԱՐԲԵՐԱՑՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Հոդվածում քննարկվում է Հայաստանի 26-ամյա անկախ հանրապետության պարբերացման հարցերը: Պարբերացման սկիզբը համարվում է 1991 թ. համաժողովրդական հանրաքվեով փաստացի անկախության հռչակումը, որի մեջ ներառվում է նաև անկախության հռչակագրով սկսվող գործընթացի սկիզբը, մինչև մեր օրերն ընկնող ժամանակահատվածը: Նրանում առանձնացվում են անկախության կայացման և ամրապնդման ժամանակաշրջանները, այդ թվում անցումը կիսանախագահականից խորհրդարանային կառավարմանը: Հիմնավորվում է հայոց ժամանակակից պատմության պարբերացման կարևորությունը:

Բանալի բառեր՝ Հայաստանի անկախություն, երրորդ հանրապետություն, հասարակական-քաղաքական կյանք, միջազգային դրություն, արտաքին քաղաքականության գործընթացի սկիզբ, ներքին դրություն, անկախ պետականություն, ինքնուրույն գործելաժողով, կայացում և ամրապնդում:

Edik Minasyan
Doctor of History, Professor

ON THE PERIODIZATION ISSUE OF THE THIRD REPUBLIC OF ARMENIA

The article touches the periodization issues of the twenty-six-year-old independent Republic of Armenia. Beginning of periodization is considered to be the 1991 proclamation of independence through nationwide referendum which also includes the beginning of the independence proclamation process until now. The article also comprises periods of establishing and consolidating an independent state including transition from semi-presidential to parliamentary form of governance. The periodization of Armenian modern history is signified.

Keywords: Independence of Armenia, third Republic, social-political life, international situation, beginning of the foreign policy process, internal situation, independent state, independent working style, establishment and consolidation.

Эдик Минасян
д.и.н., профессор

К ВОПРОСУ О ПЕРИОДИЗАЦИИ ИСТОРИИ ТРЕТЬЕЙ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

В данной статье обсуждаются вопросы, связанные с публикацией 26 летней годовщины независимости Республики Армения. В 1991 году всенародным референдумом была провозглашена независимость Республики Армения. Процесс этот продолжается по настоящее время, включая периоды независимости и консолидации, переход от полупрезидентского к парламентскому правлению. В статье обосновывается важность периодизации для современной истории Армении.

Ключевые слова: Независимость Армении, третья республика, социально-политическая жизнь, международная ситуация, независимое государство, независимый стиль работы, развитие и консолидация.

Հայաստանի ազգային անկախության վերականգնումը և հայկական զույգ հանրապետությունների՝ Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության ստեղծումը շրջադարձային իրողություն եղավ մեր պատմության մեջ: Ստեղծվեց Հայաստանի երրորդ հանրապետությունը, որը կյանք առավ Հայաստանի առաջին և երկրորդ հանրապետությունների հիմքի վրա, դարձավ նրանց ժառանգորդն ու իրավահաջորդը: Քսանվեց տարի է անցել Հայաստանի Հանրապետության փաստական անկախության օրվանից: Հայաստանի

Հանդեսի 1892 թվականի 13-րդ պրակում հրատարակվել է Գ.Իզրայելովի <<Село Касалеть>> ուսումնասիրությունը¹, բաղկացած 6 բաժնից: Առաջին բաժնում հեղինակը անդրադարձել է գյուղի անվան ստուգաբանությանը, պատմությանը, տեղադրությանն ու արտաքին տեսքին, երկրորդ բաժնում՝ ոռոգման համակարգին ու եղանակին, երրորդ բաժնում՝ գյուղի և հարակից տարածքներում գտնվող հնագիտական հուշարձաններին (*Եղին աղբյուր, Ղարիբ խաչ, Իննր մաս, Տրվրախաչ, Իրեք մանկունք, Քրդըքատեղ, Ջրմուկին դալա, Եղիշե Առաքյալի վանք, Կաթողիկոսարան*), չորրորդ բաժնում՝ հանքային աղբյուրներին ու հանքավայրերին, հինգերորդ բաժնում՝ կուսապատգիների սովորույթներին, սովորություններին ու նախապաշարմունքներին: Գյուղացիների բնավորության գծերից հեղինակը առանձնացնում է խստությունը, կոպտությունը, հյուրասեր լինելը՝ միաժամանակ շեշտելով հարևան թաթարների բացասական ազդեցությունը, որի արդյունքում տարածվել են գողությունը, վրեժխնդրությունը, թաթարական տարազը, թաթարերեն բառերի հաճախակի գործածությունը, աղջիկ փախցնելու սովորույթը ևն: Նշվում է նաև, որ համատարած իշխում են հին սովորույթներն ու նախապաշարմունքները, հիվանդությունների դեպքում բնակիչները շարունակում են դիմել միայն հեքիմներին ու սրբավայրերին: Վեցերորդ բաժնում նկարագրվում են բնակիչների հիմնական զբաղմունքները (*անասնապահություն, հողագործություն, այգեգործություն, գինեգործություն*): Մեկ այլ նյութում² Գ. Իզրայելովը նկարագրել է Ելիսավետսկոյի նահանգի Ջևանշիրի գավառում գտնվող *Բասի-սու* հանքային աղբյուրը՝ շեշտելով նրա բուժիչ նշանակությանը: Կարևոր նշանակություն ունի նաև նրա «*Домашнее воспитание армян Джеванширского уезда Елисаветпольской губернии*» ուսումնասիրությունը³, որտեղ հեղինակը անդրադարձել է Ջևանշիրի գավառում երեխաների դաստիարակության խնդիրներին, երեխաների ու նրանց ծնողների փոխհարաբերություններին:

Ուշագրավ է Օ. Ջեյրանովի «*Селение Чайкенд, Елисаветпольского уезда, той же губернии*» աշխատությունը⁴, որտեղ հեղինակն առանձին բաժիններով ներկայացրել է Գետաշեն գյուղի պատմությունը, տեղադրությունը, բնակարանը, եղանակն ու տարածված հիվանդությունները, այգիները, բանջարանոցներն ու անտառները, կենդանական աշխարհն ու որսորդությունը, բնակչության կազմը և զբաղմունքը, պետական տուրքերն ու գյուղական ծախսերը, խաղողագործությունն ու գինեգործությունը, մեղվաբուծությունը, շերամապահությունը, յուղի ստացումը, օձառագործությունը, հագուստը և սննդակարգը, ժողովրդական խաղատեսակները (*կրրպրտլախտե, ջրզըլախտե, փանդի, չիլինգյի, պոզի-պոզի, վեքլի, հոթի, չիլկըլդանե*), տեսարժան վայրերը, վանքերն ու սրբավայրերը (*Գոզ-գեղ, Ջրաղա ծոր, Նահատակ, Եղնասար, Ավազ Սուրբ նշան ևն*), հավատալիքներն ու նախապաշարմունքները, տոները (*Մեծ պահք, Ծառագարդար, Վարդավառ, Նավասարդ, Սուրբ Սարգիս (Խաշի)*):

Նմանատիպ կառուցվածք ունի Գ. Օսիպովի՝ Քարին տակ գյուղին նվիրված ուսումնասիրությունը⁵: Այստեղ հեղինակն անդրադարձել է բնակավայրի հիմնադրմանը, եղանակին, տների կառուցվածքին, բնակիչների զբաղմունքին՝ հատկապես երկրագործությանն ու կրի արտադրությանը, սննդակարգին, տարազին, հավատքին, ընտանեկան կյանքին ու կրթությանը, հասարակական դատին ու պատժամիջոցներին, շրջակայքի քարանձավներին, ժողովրդական տոներին, ամուսնության և հարսանիքի հետ կապված ծիսակատարություններին, սովորություններին, հավատալիքներին ու նախապաշարմունքներին:

Արցախի վերաբերյալ ազգագրական կարևոր նյութեր են ընդգրկված նաև հանդեսում հրատարակված համահավաք ժողովածուներում: 11-րդ պրակում լույս տեսած <<Промысловия

¹ Израелов Г., *Село Касалет, Елисаветпольской губернии, Джеванширского уезда*, выпуск XIII, 1892, отдел I, с.42-58

² Израелов Г., *Описание минерального источника Истису (теплый ключ), Елисаветпольской губернии, Джеванширского уезда*, выпуск седьмой, 1889, отдел II, с.84-85

³ Израелов Г., *Домашнее воспитание армян Джеванширского уезда Елисаветпольской губернии*, выпуск седьмой, 1889, отдел II, с.73-76

⁴ Джейранов О., *Селение Чайкенд, Елисаветпольского уезда, той же губернии*, выпуск двадцать пятый, 1898, отдел II, с.59-100

⁵ Осипов Г., *Селение Даш-Алты, Шушинского уезда, Елисаветпольской губернии*, выпуск двадцать пятый, 1898, отдел II, с.101-136

занятия в некоторых населенных пунктах Закавказья»¹ աշխատության մեջ¹ առանձին բաժիններով ներկայացվում են Շուշի քաղաքում (գորգագործություն, կարպետագործություն, գուլպայագործություն, գլխարկագործություն, մոմագործություն, կոշկակարություն, օճառագործություն, կաշեգործություն, մորթագործություն, թամբագործություն), Ադրամի համայնքում (աղյուսագործություն, օճառագործություն, դերձակություն, երկաթագործություն, գորգագործություն), Տոդ գյուղում (բրդագործություն), Մոխրենես գյուղում (փայտանյութի հայթայթում), Կուսապատ գյուղում (երկաթագործություն, աստղձագործություն, բրուտագործություն, տակառագործություն, բամբակագործություն, բրդագործություն), Հադրութ գյուղում (մանածագործություն, արծաթագործություն, երկաթագործություն, տակառագործություն, քարագործություն, աղյուսագործություն, կրագործություն, բրուտագործություն) 19-րդ դարի վերջերին տարածված արհեստները, որտեղ հեղինակները հաճախ հանգամանորեն անդրադարձել են արտադրության եղանակներին ու միջոցներին, հումքի հայթայթմանը, արտադրանքի իրացմանն ու գնեին: Նույն պրակի երկրորդ բաժնում լույս տեսած <<Описание кавказского шелководства>> աշխատության մեջ ընդգրկված են նաև Ելիսավետպոլի նահանգի Ջևանշիրի, Շուշու և Ջեբրայիլի գավառներում այդ ժամանակաշրջանի շերամապահության ու մետաքսագործության վիճակը ներկայացնող նկարագրությունները²:

Հանդեսում է տպագրվել նաև Ե. Մելիք-Շահնագարովի՝ Շուշու գավառի Չանախչի գյուղի Կուսանաց անապատի ու հին գերեզմանոցի նկարագրությունը ներկայացնող նյութը³:

Հայտնի է, որ դեռևս 19-րդ դարի վերջերին հայ իրականության մեջ բանահյուսական նյութերը հաճախ ներկայացվում էին ազգագրական ու ժողովրդագիտական այլ նյութերի հետ միասին: Նմանատիպ բազմաթիվ նմուշներ, հատկապես ավանդություններ են ընդգրկված վերոհիշյալ ուսումնասիրություններում:

Հիշատակության արժանի են Ի. Դավիդբեկովի գրառած երկու ավանդությունները Հադրութ գյուղի շրջակայքում գտնվող Միպտակ խաչ վանքի⁴ և Դիզափայտ լեռան⁵ մասին: Ըստ առաջին պատումի՝ հարյուրամյակներ առաջ քահանաներից մեկը ինչ-որ տեղից տեղափոխել ու վանքի վրա տեղադրել է սպիտակ ու փայլուն մի խաչ՝ ամենուր տարածելով, որ այն իրեն է տվել Աստված, և գողացողը կպատժվի հենց խաչի կողմից, որից հետո վանքը կոչվել է Միպտակ խաչ, իսկ ժողովուրդը սկսել է մեծ նվերներով ու զոհաբերություններով պարբերաբար այցելել: Մյուս պատումի համաձայն՝ Դիզափայտ լեռն իր անունը ստացել և սրբավայր է դարձել այն ժամանակ, երբ վրացիների կռապաշտ թագավորի հրամանով այդտեղ նահատակվել են քրիստոնեություն ընդունած վրաց զորավարը, նրա որդիներ Մովսեսն ու Երանոսը և զինվորները, որոնց դիակները փայտի նման դիզելով՝ վառել են:

Հետաքրքիր է Գ. Իզրայելովի ներկայացրած ավանդությունը Կուսապատ գյուղի անվան վերաբերյալ. գյուղի հիմնադիրները գյուղում եկեղեցի կառուցելու համար հրավիրել են մի քարագործ վարպետի, ով, սակայն, իր հոգու փրկության համար հրաժարվել է վարձից և առաջացած վիճաբանության արդյունքում փախել, որից հետո էլ եկեղեցին ու գյուղը կոչվել են Կիսապատ (*կես պատ*), այնուհետև՝ Կուսապատ: Մեկ այլ տարբերակով բնակավայրն ի սկզբանե կոչվել է Կույսապատ (*կույսերով պատված*), քանի որ շրջապատված էր կուսանոցներով: Հեղինակը նմանատիպ բանահյուսական նյութեր է գրառել Կուսապատի մերձակայքում գտնվող *Շոխն աղբյուրի*, *Հարիբ խաչի*, *Իննը մասի*, *Իրեք մանկունքի*, *Եղիշե Առաքյալի վանքի* մասին: Հարկ է նշել նաև, որ Գ. Իզրայելովը հանդեսի 7-րդ պրակում առանձին հոդվածով տպագրել է մեկ այլ

¹ Промысловые занятия в некоторых населенных пунктах Закавказья, выпуск одиннадцатый, 1891, отдел I, с.1-79 (Город Шуша. Я. Зедгенидзе, Салах-бек Захар-беков, Амбарцум Тер-Егиязаров), с.79-87, (Шушинский уезд: Агдамское общество. Б. Ибрагимбеков), с.87-88 (Шушинский уезд: селение Тут. М. Погосов), с.88-89 (Шушинский уезд. Селение Мухренес. М. Погосов), с.105-113 (Джеванширский уезд. Селение Касапет. Г. Израелов), с.113-116 (Джебраильский уезд. Село Гадрут. И. Давидбеков)

² Описание кавказского шелководства, выпуск одиннадцатый, 1891, отдел II, с.87-90 (Джеванширский уезд), с.90-95 (Шушинский уезд), с.96-111 (Джебраильский уезд)

³ Мелик-Шахназаров Е., Из древностей селения Ченахчи (Елисаветпольской губернии, Шушинского уезда), выпуск девятнадцатый, 1894, отдел I, с.78-83

⁴ И. Давидбеков, Село Гадрут, Елисаветпольской губернии, Джебраильского уезда, выпуск шестой, 1888, отдел I, с.156-157

⁵ նույնը, էջ157-158

ավանդություն ու մեկ հեքիաթ¹՝ գրառված բանասաց Ա. Տեր-Գրիգորյանից՝ չնշելով վերջինիս որտեղացի լինելը: Կարելի է ենթադրել, որ այն նույնպես գրառված է Կուսապատում, որտեղի ուսումնարանում աշխատում էր հեղինակը:

Ուշագրավ է նույն պրակում Մ. Պողոսովի հրատարակած ավանդությունը Լենկ Թեմուրի մասին², որի համաձայն ծայրահեղ դաժանությամբ աչքի ընկած միջինասիական զորապետը ծնվել է Արցախի Բալուջա (Այգեստան) գյուղում՝ ունևոր քահանայի ընտանիքում և մկրտվել էմիր անունով: Իր ծննդով մոր մահվան պատճառը դառնալու և խիստ չարաճճի լինելու համար հայրը, ատելով նրան, կտրել է ոտքերի ջիլերը, որտեղից էլ ստացել է Լենկ (*կաղ*) մականունը: Դրանից հետո հոր հանդեպ վրեժխնդրությամբ լցված՝ տեղափոխվել է Միջին Ասիա ու 20 տարի հետո մեծ զորքով վերադառնալով՝ բնաջնջել հայրենի գյուղը և հայկական բազմաթիվ այլ բնակավայրեր:

Իրենց նյութերում բանահյուսական նյութեր են ներկայացրել նաև Ե. Մելիք-Շահնագարովը և Գ. Օսիպովը: Նկարագրելով Չանախչի գյուղի Կուսանաց անապատը՝ Մելիք-Շահնագարովը մեջբերում է ժողովրդից գրառած մի պատում³, ըստ որի, երբ պարսկական զինվորները ներխուժել են գյուղ, վանքի կույսերից մեկը, չհասցնելով փախչել, Սուրբ երրորդության ու Աստվածամոր օգնությունը հայցելով, ցած է նետվում ժայռից և աներևույթ ուժի զորությամբ փրկվելով՝ թաքնվում անտառում: Նույն արշավանքի ժամանակ վանքի թանկագին իրերի հետ թշնամու կողմից գերի է տարվում կենաց փայտի մի մասն ամփոփող արծաթապատ խաչը, որը վեց ամիս անց բազե դարձած վերադառնում է՝ ստանալով նախկին խաչի ձևը: Հեղինակի գրառած մեկ ուրիշ ավանդության⁴ համաձայն՝ ժամանակին յուրաքանչյուր տարի վանք էր ներկայանում մի եղջերու՝ կամավոր տրվելով զոհաբերության, սակայն Աստված, տեսնելով ժողովրդի գործած մեղքերը, դադարեցրել է այդ երևույթը: Քարին տակ գյուղին նվիրված աշխատության մեջ Գ. Օսիպովը տալիս է Խճաբերդ գյուղի (որտեղից տեղափոխվել են քարինտակցիները) անվան ժողովրդական ստուգաբանությունը⁵, ըստ որի՝ այն առաջացել է *խածել* կամ *խիստ* բառից (*խածող բերդ* կամ *խիստ բերդ*)՝ առանձին բաժնում ներկայացնելով նաև որոշ զվարճապատումներ, ավանդություններ, տարբեր հավատալիքների ու սովորույթների վերաբերյալ չափածո ստեղծագործություններ⁶:

Առանձին հիշատակության արժանի է Ա. Կալաշնի՝ 18-րդ պրակում հրատարակած նյութը¹⁹, որտեղ նկարագրվում է Գետաշեն գյուղում տոնվող Վարդավառի տոնը, որին հետևում է հեղինակի գրառած՝ այդ տոնի ժամանակ երգվող 122 ջանգյուղում՝ հայերենով (որոշները՝ թաթարերենով)՝ ռուսերեն զուգահեռ թարգմանությամբ:

Այսպիսով, արժևորելով «сборник материалов для описания местностей и племен кавказа» հանդեսի տեղն ու դերը կովկասյան իրականության մեջ՝ միանշանակ կարող ենք փաստել, որ այն առանձնահատուկ տեղ ունի Արցախի ժողովրդագիտության ուսումնասիրության բնագավառում և կարևոր ուղենիշ հանդիսացավ հետագա ուսումնասիրությունների համար:

¹ Израелов Г., *Легенда и сказка. (Из армянской словесности)*, выпуск седьмой, 1889, отдел II, с.86-89

²Погосов М., *Тамерлан по рассказам джеванширских армян*, выпуск седьмой, отдел II, с. 64-68

³ Мелик-Шахназаров Е., *Из древностей селения Ченахчи (Елисаветпольской губернии, Шушинского уезда)*, выпуск девятнадцатый, 1894, отдел I, с.79

⁴ նույն տեղը

⁵ Осипов Г., *Селение Даш-Алты, Шушинского уезда, Елисаветпольской губернии*, выпуск двадцать пятый, 1898, отдел II, с.101

⁶ նույնը, էջ128-136

¹⁹. Калашев А., *Вардавар (сел. Чайкенд, Елисаветпольской губернии)*, выпуск восемнадцатый, 1894, отдел второй, с.1-36

ՀՏԴ 94(479.243)

Պատմություն

**Նունե Սարումյան,
պ.գ.թ., դոցենտ ԱրՊՎ**

ՇՈՒՇԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ

Հոդվածում փորձ է արվում ընդգծելու Շուշիի դերն ու նշանակությունը հայ ժողովրդի կյանքում, մասնավորապես արցախահայության համար, հնագույն ժամանակաշրջանից մինչև մեր օրերը: Հատկապես ուշադրություն է դարձվում Շուշի բերդաքաղաքի հիմնադրման շուրջ ընթացող տարակարծիքությունները բացահայտելու և մեկնաբանելու խնդրին՝ ըստ սկզբնաղբյուրների վկայությունների:

Միաժամանակ հոդվածում փորձ է կատարվում ճշգրտելու Շուշիի հիմնադրման ժամանակաշրջանը: Ընդգծվում է նաև Շուշիի դերը արցախյան ազգային-ազատագրական պայքարում, անհրաժեշտ համարելով պատմության այդ շրջանի ճիշտ արժևորումն ու գնահատումը:

Բանալի բառեր՝ Շիկաքար, Քարագլուխ, Շուշի բերդ, բերդաքաղաք, հուշարձանների ցուցակ, պաշտպանական ամրություն, գոյություն, ազատագրական պայքար, կորուստ, Շուշիի ազատագրում

**Нуне Сарумян,
к.и.н., доцент АрГУ**

К ВОПРОСУ ОСНОВАНИЯ ШУШИ

В статье делается попытка выявить роль и значение Шуши в жизни армянского народа, в частности для арцахцев начиная с древнейших времен до наших дней. Особенно, большое внимание уделяется вопросам выявления и объяснения существующих мнений по вопросу основания крепости Шуши, основываясь на доказательствах первоисточников.

Одновременно автор попытался уточнить время основания Шуши. Подчеркивается также роль Шуши в арцахском национально-освободительном движении. Такой подход позволяет исследователю правильно оценить рассматриваемый исторический период.

Ключевые слова: Шикакар, Караглух, крепость Шош, город-крепость, список памятников, защитное сооружение, существование, освободительная борьба, потеря, освобождение Шуши.

**Noune Sarumyan,
ps.n., docent ASU**

ON THE FOUNDATION OF THE SHOUSHI CASTLE

The article outlines the role and significance of Shoushi in the life of Armenians, in particular Artsakh Armenians from ancient times until present. The focus of the study is made on revealing the controversial opinions on the foundation of Shoushi castle and its interpretation according to authentic evidence. The article also revisits the equivocal issue of the date of Shoushi fortress foundation. The role of Shoushi in Artsakh national liberation struggle is addressed arising from the need for proper conceptualization and evaluation of that period in history.

Keywords: Shikakar, Karagluh, Shosh, castle, fortress, list of monuments, fortification, existence, liberation struggle, losses, Shoushi liberation

Արդի քաղաքակրթական գործընթացներում մարդկությունը հայտնվում է յուրօրինակ իրավիճակում: Մի կողմից ամբողջ թափով աշխարհում ընթացող գլոբալացումը և մյուս կողմից տարբեր շրջաններում գլուխ բարձրացրած ծայրահեղականությունը ծնում են նոր հիմնախնդիրներ, որոնք պահանջում են առանձնահատուկ լուծումներ: Աստիճանաբար զարգացող և ընդլայնվող ռազմաքաղաքական գործընթացները մարտահրավերներ են նետում

պետություններին, ազգերին, էթնիկ հանրություններին: Այս պայմաններում կարևոր խնդիր է դառնում իրադրության լիարժեք տիրապետումը և համակողմանի վերլուծությունը: Անվիճելի է նաև, որ մարդկային կենսագործունեության օրինաչափությունները մեծ մասամբ շաղկապված են պատմական անցյալի հետ: Պատմական օրինաչափություններից է նաև այն, որ միայն պայքարող էթնոսները կարող են իրենց գոյը շարունակել անգամ այն պարագայում, երբ նրան սպառնում է թշնամին թե՛ խաղաղ, թե՛ պատերազմական ժամերին:

Այս իմաստով, անտարակույս, պատմական իրադարձությունների օրինաչափությունների բացահայտումը ձեռք է բերում առանձնահատուկ նշանակություն:

Նշված այս բնութագրումները լիովին համապատասխանում են հայկական երկրամաս Արցախին, նրա պատմական անցյալին և ապա՝ ներկային: Պատմական Հայաստանի այդ հրաշագեղ երկրամասի հայությունն իր մաքառումով ժամանակների հորձանուտում միշտ պահպանել է նվիրումը, կապը մայր հայրենիքի հետ՝ լինելով և մնալով նրա անբաժան մասը: Չնայած բազում բռնի փորձերին և ճնշումներին՝ այդ երկրամասը շարունակել է հարատևել¹:

Արցախ աշխարհի ազատագրական պայքարի բազմադարյան պատմության մեջ դեպքերի և դրամատիկ իրադարձությունների ընդգրկումով արցախահայության պատմական ճակատագրի վրա խոր հետք են թողել, առանձնապես, 1918-1920 թվականները, երբ Լեռնային Ղարաբաղը դարձավ «վիճելի տարածք»: Ադրբեջանի նորաթուխ մուսավաթական կառավարությունը նպատակադրվել էր բռնագավթել պատմական Հայաստանի տարածքներից Լեռնային Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը: Նրա ծավալապաշտական ծրագրերը բացահայտ քաջալերում և դրանց իրականացմանը նպաստում էին Թուրքիան, որոշ ժամանակ անց՝ դաշնակից տերությունները, գլխավորապես՝ Անգլիան, իսկ Ադրբեջանի խորհրդայնացումից հետո՝ նաև բոլշևիկյան Ռուսաստանը²:

Այնուհանդերձ, իրենց փառավոր նախնիների ազատատենչ ոգին ու արիությունը չկորցրած Արցախի հայությունը ծառս եղավ ռիսկալի թշնամու դեմ և կենսամահու պայքար մղեց իր բնօրրան երկրի ազատության ու անկախության համար: Այդ պայքարի հենակետը դարձյալ Շուշի բերդաքաղաքն էր, որը, իրավամբ, արցախցիների համար կազմակերպական, բարոյական և քաղաքական հենարանի ռազմավարական նշանակություն ուներ:

Շուշի բնակավայրը, որը վաղ միջնադարում կոչվել է Շիկաքար, ուշ միջնադարյան աղբյուրներում՝ նաև Քար, Քարագլուխ, Քարագլխի բերդ, Քարագլխի սղնախ, հաճախ նաև՝ Շոշի բերդ, Շոշի սղնախ, որովհետև թշնամի ուժերի հարձակումների ժամանակ այնտեղ պատսպարվել է հարևան Շոշ ավանի և գավառի բնակչությունը, հիմնադրվել է 1720-ական թվականներին պատմական Հայաստանի Արցախ նահանգի Վարանդա կամ Սյուս Հաբանդ գավառի հյուսիսային ծայրում³ Կարկառ գետի ձախ ափին: Այսպես է Շուշիի մասին գրում Ղևոնդ Ալիշանը իր «Արցախ» աշխատության մեջ:

Շուշի բերդաքաղաքի հիմնադրման և բնակեցման ճշգրիտ տարեթվի մասին պատմագրության մեջ տարաձայնություններ գոյություն ունեն: Կարծիքներ կան, որ Շուշին հիմնադրվել է 18-րդ դարի սկզբին, սակայն կան նաև 18-րդ դարի երկրորդ կեսին վերաբերող կարծիքներ: Այսպես, Պ.Չոբանյանը գտնում է, որ Շուշի բերդի մասին գրավոր աղբյուրները վերաբերում են 18-րդ դարի սկզբին⁴:

Մ.Սարգսյանը հայտնում է այն կարծիքը, որ «առաջմ ստույգ պարզված չէ, թե մինչև 18-րդ դարի սկիզբը այստեղ բնակավայր գոյություն ունեցել, թե ոչ»⁵:

Ըստ Լեոյի «Պատմութիւն Ղարաբաղի հայոց թեմական հոգեւոր դպրոցի» աշխատության՝ Շուշին հիմնվել է 1750-1752 թվականներին⁶, ըստ նրա մյուս «Պատմություն հայոց» աշխատության⁷,

¹ Ղարիբյան Ա., Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը 1918-1920 թթ. և Մեծ Բրիտանիան, Երևան, 2012, էջ 5:

² Հարությունյան Հ., Շուշին արցախյան գոյապայքարում (1918-1920 թթ.), Երևան, էջ 22:

³ Ալիշան Դ., Արցախ, Երևան, 1993, էջ 92:

⁴ Պատմաբանասիրական հանդես, Երևան, 1994թ., թ.1-2, էջ 184:

⁵ Саркисян М., Из истории градостроительства Шуши, Ереван, стр. 4.

⁶ Լեո, Պատմութիւն Ղարաբաղի հայոց թեմական հոգեւոր դպրոցի, Թիֆլիս, 1914, էջ 59:

⁷ Լեո, Պատմություն հայոց, հ.3, Երևան, էջ 1946:

1752-1754 թվականներին, ըստ Միրզա-Ջամալ Ջիվանշիրի¹ և Միրզա Աղիգյոզալ Բեկի² 1756-1757 թթ. և այլն:

Ս.Սարգսյանն իր «Պատմա-աշխարհագրական ճշգրտումներ»³ գրքում այն կարծիքն է հայտնում, որ Շուշին միջնադարյան աղբյուրներում հիշատակվող նշանավոր Կարկառ ամրոց-բնակավայրն է, հիմնավորելով այն Կիրակոս Գանձակեցու⁴ հաղորդած «1246 թվականին մոնղոլ զորապետ Բաթուի և նրա որդի Սարթախի մոտ մեկնած Խաչենի Հասան Ջալալ իշխանից թուրքերի կողմից խլված հայրենական կալվածքներ՝ Չարաբերդը, Ականան ու Կարկառը վերադարձնելու» մասին տեղեկություններով:

Ս.Սարգսյանն արաբական աղբյուրների, մասնավորապես Յակուտ ալ-Խամավիի (1178-1229թթ.)⁵ հաղորդած տեղեկությունների հիման վրա՝ ըստ որի «Կարկառը քաղաք է Առանում, Բայլականի մոտ, կառուցված Անուշիրվանի (531-578թթ.) կողմից», գտնում է, որ Կարկառ ասելով աշխարհագրորդ նկատի է ունեցել Շուշին, բայց «հեռու հայացքով, որը հատկանշական է օտար ուսումնասիրողներին»⁶:

Ուստի և, Ս.Սարգսյանը նշում է, որ ինչպես վկայում են բազմաթիվ փաստերը, Կարկառը Անուշիրվանից, այսինքն 6-րդ դարից առնվազն 600-700 տարի առաջ էլ գոյություն ուներ: Այդ է վկայում Աղբեջանի նախարարների խորհրդի՝ 1968թ. ապրիլի 2-ի թիվ 140 որոշմամբ հաստատված հուշարձանների ցուցակը, համաձայն որի, Շուշիում (հյուսիս-արևմուտք) եղել են մի շարք Ք.ա. 2-1-ին հազարամյակի հնագիտական հուշարձաններ (դամբարան, կուրգան), որոնց գտնվելու վայրը ներկայումս դժվար է ճշտորոշել⁷:

Կարկառ-Շուշիին անդրադարձել են նաև Իբն Խորդադեհեն ու Իբն-Ֆակհիհ⁸ (10-րդ դ.) բնակավայրի հիմնադրումը վերագրելով Անուշիրվանին, Համդալլահ Ղազվինին⁹ (1281-1349թթ.), նշելով, որ «Կարկառը առևտրական քաղաք է...», ինչպես նաև Ջալալ-ադ-դին սուլթանի անձնական քարտուղար Շիխաբ ադ-Դին ան-Նասավին¹⁰ (13-րդ դ.), որն ամրոցին «Կալադարա» անունն է տալիս և ուրիշներ:

Բացի այս տեղեկություններից Շուշիի տարածքում հայտնաբերված Ք.ա. 14-13-րդ դդ. խեցեգործական ու քարե կենցաղային առարկաները վկայում են, որ դեռևս վաղ անցյալում այստեղ եղել է ամրոց-բնակատեղի¹¹: 1981թ. այստեղ հայտնաբերվել են 971 թ., 1252թ. և այլ թվականների խաչքարեր¹²:

Աղբյուրագիտական այդ տվյալները վկայում են, որ Շուշին մինչև 18-րդ դարն էլ նշանավոր քաղաք է եղել, որով միաժամանակ հերքվում է աղբեջանցի պատմաբանների այն թյուր կարծիքը, համաձայն որի Շուշի բերդի հիմնադիր է համարվում Փանահ Ալի խանը¹³: Մի բան պարզ է, որ

¹ Միրզա Ջամալ Ջիվանշիր, Ղարաբաղի պատմություն(ռուսերեն լեզվով), Բաքու, 1959, էջ 19 :

² Мирза Адигезал бек Карабахский, История Карабаха, Баку, 1950, стр.56.

³ Սարգսյան Ս., Պատմա-աշխարհագրական ճշգրտումներ, Երևան, 1996, էջ 47:

⁴ Գանձակեցի Կ., Հայոց պատմություն, Երևան, 1982, էջ 258:

⁵ Յակուտ ալ-Համավի, Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, Երևան, 1965, էջ 103:

⁶ Սարգսյան Ս., Խաչենի ամրոցները, Ստեփանակերտ, 2002, էջ 151:

⁷ Տես նույն տեղը, էջ 152-153:

⁸ Ибн Хордабдэ, Книга путей и царств, СМОМПК, XXXII, Тифлис, 1902, стр. 15; Ибн-ал-факих, СМОМПК, XXXI, Тифлис, 1902, стр. 15; Տես նույն տեղը, էջ 153:

⁹ Хамдаллах Казвини, Нузхат ал-Кулуб, Баку, 1983, стр. 50-51.

¹⁰ Шихаб ад-Дин Мухаммад ан-Насави, Жизнеописание султана Джалал ад-Дина Манкбурны, Баку, 1973, стр. 278; Տես Սարգսյան Ս., Խաչենի ամրոցները, Ստեփանակերտ, 2002, էջ 153:

¹¹ ՀՀ հանրագիտակարան, Երևան, 2004, էջ 525:

¹² Մկրտչյան Շ., Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարապետական հուշարձանները, Երևան, 1985, էջ 209:

¹³ 1750-ական թվականներին Վարանդայի մելիքությանն ուխտադրժոռեն տիրացած Շահնազար Բ, իր դեմ միավորված Ղարաբաղի մյուս չորս մելիքություններին դիմադրելու համար, դաշնակցել է «սարըջալու» կոչվող վաչկատուն ցեղի առաջնորդ, աշխարհակալական ձգտումներով տոգորված Փանահ խանի հետ և 1752 թվականին նրան տրամադրել Շոշի բերդը: Փանահ խանը Մելիք Շահնազարի աջակցությամբ այժմյան Շուշիի տեղում այդ բնական ամրությունների վրա, գլխավորապես հյուսիս և արևելյան կողմերից, նոր արհեստական պարիսպներ կառուցելով (առաջին բերդապարիսպները 1724 թ. հիմնել է Ավան հարյուրապետը) և այն դարձնելով իր ամրոց նստավայրը՝ Փանահաբադ, նպատակ դրեց կովի միջոցով ձեռք ձգել Ղարաբաղի հայ մելիքների կալվածքներին: Նա Փանահաբադը բնակեցրեց ինչպես իր

Շուշին գոյություն է ունեցել Փանահ-խանից առաջ՝ սկզբում որպես գյուղական բնակավայր, իսկ Ավան հարյուրապետի ժամանակ որպես բերդ կամ բերդաքաղաք¹:

Առանձնացած սարահարթում, կավախառն ու պատված անառիկ ու անմատույց ժայռոտ տեղում (բացի քաղաքի երևանյան և գանձակյան կողմերից, որոնք էլ ամրացված են աշտարակներով, բարձրավանդակի փոքր մասում բերդաքաղաքն է, մեծագույն մասում՝ գերեզմաններն ու պարտեզները), Քիրսի հյուսիսային հեռավոր փեշերի վրա՝ երեք կողմերից անդնդախոր ձորերով պատված, «Չըրբերդի, Վարանդինի և Զանգեզուրի սահմանամիջում, ամբողջ Առանի, այսինքն Ղարաբաղի գլուխը», ինչպես նշում է Ղևոնդ Ալիշանը², կազմող ամուր քարաշերտերով կռած ու կերտած՝ որպես ձուլվածք, բարձրանում է մի հսկա քարակոփ սարահարթ, որին ամբողջ Ղարաբաղը Ղալա էր կոչում, ամրոց-բերդ, ուր բազմած Շուշին որպես սրաթև արծիվ, մի առանձին հպարտությամբ իշխում է իր ողջ շրջակայքի վրա:

Բնական անմատչելի դիրքի շնորհիվ Շուշին ինչպես հնագույն ժամանակներում Վարանդա գավառի հայ բնակիչների համար, այնպես էլ հետագա իր գոյության շրջանում մինչև մեր օրերը, ծառայել է իբրև պաշտպանական ամրություն: Շուշին առաջին անգամ տեսնողը բացականչում է՝ «Պատերազմների և սխրագործությունների մեջ փառք որոնող, այդպիսի մի մարդ էլ դրել է այդ քաղաքի հիմքը»: Եվ այդպես է. 9-րդ դարի կեսին իշխան Սահլ Սմբատյանը հաղթել է այստեղ արաբական ասպատակիչ զորքին և ազատագրել գերեվարված հայ բնակչությանը:

Ֆախրի Միդհատ օղլի Աբասովը 2007 թվականին Բաքվում հրատարակած իր «Ղարաբաղի(Գարաբախ) խանությունը» աշխատության մեջ նշում է, որ 13-րդ դարում Հուլավյանների իլխան Ռաշիդ ադ-Դինը «Ղարաբաղի խանությունը համարում էր Հուլավյան պետության վիլայեթներից մեկը ... և նրա տարածքում հիշատակող քաղաքների շարքում՝ Գյանջա, Բարդա(Պարտավ), Շամքոր, Ադդամ, Բայլական, նշվում է նաև Շուշին, դրա հետ նաև բազմաթիվ նշանավոր ամրոցներ, ինչպիսիք են Բայազետը, Շահբուլաղը, Գանձասարը, Բայաթը, Խաչենը, Զրաբերդը, Գյուլիստանը և այլն»³:

Փաստորեն, ստացվում է, որ աղբյուրներից պատմագրությունը միաժամանակ Շուշիի հիմնադրումը կապում է Փանահ խանի հետ, մյուս կողմից էլ այն հիշատակում է նաև 13-րդ դարում:

Եղիշե ավագ քահանա Գեղամյանցի(Հայկունու) «Ուղեգրական ակնարկներ» աշխատության մեջ նշվում է. «Շուշին արդեն բազմել է լեռան գագաթին և լանջերին: Ուղին շատ վատ է, քարքարոտ: Քոչող թարաքամների երկոտանի և չորքոտանի ընտանիքներին յաճախ ենք հանդիպում: Մի մասն արդեն տեղափոխվել է Կարկառի հովտում: Երեք ժամից յետոյ հազիւ Շուշույ պատուանդանը կազմող լեռան ստորոտն հասանք: Մի ժամումն էլ լեռը և իւր քարքարոտ կապաններն անցանք, և ահա ես արդեն Շուշիումն եմ՝ մօտ 6000 ոտնաչափ բարձրութեան վերայ, որտեղից և գրում եմ այս առաջին նամակս»:

Երևակայեցեք մի նեղակ, գոգաւոր հովիտ, չորս կողմը լեռներ, մէջտեղում մի այլ լեռ, որոյ 5-6 հազար տներ՝ լոխն (բոլորն) էլ քարաշէն և միայարկ, կրկնայարկ և եռայարկ, մի քանիսն էլ քառայարկ: Մի հատիկ էլ հինգ յարկանի շինութիւն կայ, և այն էլ իջևանատուն: Տների ամենամեծ մասը՝ դստիկոններով, պատշգամբներով և ցանցաձև վանդակապատ լուսամուտներով է: Կտուրները՝ թեք, մեծագոյն մասը՝ աններկ և դիմացկուն փայտից, փոքրագոյնը՝ երկաթեայ թիթեղից: Կան, որ ծածկուած են խառն՝ երկու իսկ նիւթից: Տները՝ քար, փողոցները՝ քար, շրջապատ պարիսպը՝ քար, չորս կողմը՝ քար, մի նոր տեսակ Զէյթուն կամ Սասուն է:

ցեղակիցներով, այնպես էլ հարևան հայկական գյուղերից տեղափոխված շինականներով ու արհեստավորներով: Փանահ խանը իրեն Ղարաբաղի տեր հռչակելով խաբիւլ էլ է հայ մելիքությունների միասնությունը, ջլատել նրանց ուժերը: Նրա հաջորդ Իբրահիմ խանը իր տիրապետությունը տարածելով Ղարաբաղի և Սյունիքի մելիքությունների վրա և սերտ կապեր հաստատելով օսմանյան սուլթանության հետ, ամեն կերպ աշխատել է խափանել Արևելյան Հայաստանի միավորումը Ռուսական կայսրությանը:(Տես՝ ԼՂՀ անցյալը, ներկան և ապագան, միջազգային գիտաժողով, զեկուցումների հիմնադրույթներ, Երևան, 2007, էջ 190):

¹ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անցյալը, ներկան և ապագան, միջազգային գիտաժողով, զեկուցումների հիմնադրույթներ, Երևան, 2007, էջ 188:

² Ալիշան Ղ., Արցախ, Երևան, 1993, էջ 108:

³ Аббасов Фахри Митат Оглу, Гарабагское Ханство, Баку, 2007, стр. 6.

Երկու աղբիւր՝ բազմաթիւ ծորակներով, մինը՝ լաւագոյնը՝ թիւրքաց (պարսկաց), միւսը՝ հայոց բաժնում: Աղբիւրներից ջուր են կրում և՛ էշերը, և՛ պատանիք, և՛ կնանիք: Առաջինքը՝ թմբկաձև տակառներով, իսկ երկրորդը՝ պղնձեայ գիւզում ու կժերով: Երեք մզկիթ, վեց եկեղեցի, որոնցից մինը՝ ռուսի, իսկ հինգը՝ հայոց:»¹

Փաստորեն, գոյություն ունեցող աղբյուրագիտական վկայությունների հիման վրա կարող ենք ընդգծել, որ Շուշին գոյություն է ունեցել դեռևս Ք.Ա. 2-1-ին դարերից էլ առաջ:

Շատ շատերն են հիացել Ղարաբաղով, մասնավորապես՝ Շուշիով: Այստեղ այցելել են մեծահամբավ հայ, օտարազգի գիտնականներ: Շուշու մասին գրած հուշերում բացառիկ ջերմությամբ է խոսում Հր. Աճառյանը. «Երբ բարձրանում ես բարձունքի գլուխը, որ տեղական բարբառով «քերծ» կամ «քերծեր» է կոչվում, առաջդ բացվում է հոյակապ մի տեսարան: Աջդ, ձախդ և հետևդ բարձր բլուրներ են, ծածկված կարճահասակ անտառներով, որոնք սև գույն ունեն և սրա համար էլ երկիրը կոչվել է Ղարաբաղ, այսինքն՝ «սև այգի»²:

Տարիների ընթացքում քաղաքը գրեթե լիովին հայաթափվել էր և դարձել աղբբեջանաբնակ:

1988 թ. Արցախյան շարժման ժամանակ, ապա 1990-91թթ-ին ստեղծված կացությունը և քաղաքական իրադրությունը հայ ժողովրդից պահանջում էր բոլոր ուժերի համախմբում ազգային խնդիրների շուրջ:

Իշխող դիրք գրավելով Ստեփանակերտի նկատմամբ, որտեղից երկու տարի շարունակ ուղիղ նշանառությամբ մահաբեր արկեր էին թափվում Լեռնային Ղարաբաղի մայրաքաղաքի վրա 1992 թ. մայիսի 7-ի գիշերը Արցախի ազատամարտիկները կռակոչի ահագանգին ելած սկսեցին Շուշիի գրոհը: Մայիսի 7-8-ի կատաղի մարտերից հետո, մայիսի 9-ի առավոտյան ազատագրվեց հայոց հինավուրց քաղաքը և ամրացվեց հայոց դրոշմը: Շուշիի ազատագրումը արցախահայության համար քաղաքական, ռազմավարական և բարոյա-հոգեբանական կարևոր նշանակություն ունեցավ: Շուշին-Քարազլուխը՝ բոլոր լրատվական մարմինների ակամա խոստովանությամբ՝ աղբբեջանական կողմի վերջին հենակետն էր Լեռնային Ղարաբաղում, Շուշիի ազատագրումը Արցախի ազգային-ազատագրական շարժման նոր փուլի սկիզբը դրեց:

Հայ ժողովուրդը կենաց և մահու պայքար մղեց թշնամու դեմ: Այդ պայքարում եղան նաև բացթողումներ և թերացումներ, ինչի հետևանքով մենք ունեցանք անդառնալի կորուստներ: Այս տեսանկյունից կենսականորեն անհրաժեշտ է պատմության այս շրջանի ճիշտ արժևորումը և գնահատումը: Իրականացման դեպքում հնարավոր է ոչ միայն ճիշտ գործել ներկայում , այլև ապագայում: Ահա այստեղ է, որ յուրաքանչյուր հայ պետք է լավ ընկալի իր իսկ պատմության դասերը, յուրացնի դրանք ապագայում այն ճիշտ կիրառելու համար:

¹ Եղիշե (Հովակիմ) ավագ քահանա Գեղամյան(Հայկունի), Ուղեգնացական ակնարկներ, գիրք ԺԳ, Երևան, էջ 10:

² Աճառյան Հր., Կյանքիս հուշերից, Երևան, 1967, էջ 254:

ՀՏԴ 94-05(479.243)

Պատմություն

Վերոգ Ստեփանյան
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, պ.գ.դ., պրոֆեսոր

ՄԱՆԿԱՎԱՐԺ-ՀՐԱՊԱՐԱԿԱՆՈՍ ՄԻՄԵՈՆ ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽՈՒՄ

XX դարասկզբի հասարակական-քաղաքական և կրթամշակութային կյանքի երախտավորների շարքում իր ուրույն տեղն ունի հասարակական գործիչ, մանկավարժ, հրատարակիչ-խմբագիր Միմեոն Տեր-Մինասյանը: Անգնահատելի է նրա ներդրումը հատկապես «Ղարաբաղ» թերթի հիմնադրման ու հրատարակման գործում: Թերթը, թեև ունեցավ կարճատև կյանք, սակայն Արցախի հասարակական, մշակութային կյանքի կարևոր իրադարձություններից էր, որ երկու տարի ծառայեց իր կոչմանը, նպաստավոր պայմաններ ստեղծեց հայ ժողովրդի մի հատվածի մտավոր կյանքի աշխուժացման համար:

Բանալի բառեր. գյուղ , Շուշի, մանկավարժ, խմբագիր, շաբաթաթերթ, տպարան, գործիչ, ճեմարան

Gevorg Stepanyan
Institute of history NAS RA,
Doctor of Historical Sciences, professor

THE ACTIVITY OF THE PETAGOG - PUBLICIST SIMEON TER-MINASYAN IN ARTSAKH

A prominent public figure, educator, publisher-editor Simeon Ter-Minasyan has a unique place in the social-political and educational-cultural life of the early 20th century. His contribution is particularly invaluable in the foundation and publication of the “Karabakh” newspaper. The newspaper, though short lived, was one of the most important events in Artsakh's social, cultural life that served for two years as a favorable environment for the revival of the intellectual life of a part of the Armenian nation.

Keywords: Village, Shushi, pedagogue, editor, weekly, printing house, Figure, seminary

Геворг Степанян
Институт истории НАН РА,
доктор исторических наук, профессор

ДЕЯТЕЛЬНОСТЬ ПЕДАГОГА - ПУБЛИЦИСТА СИМЕОНА ТЕР-МИНАСЯНА В АРЦАХЕ

В начале 20-го века общественный деятель, педагог, издатель-редактор Симеон Тер-Минасян занимает уникальное место среди видных деятелей общественно - политической и образовательно-культурной жизни. Его вклад особенно ценен в создании и публикации газеты «Карабах». Газета, хотя и имела короткую жизнь, однако была одним из важных событий социальной, культурной жизни Арцаха, которая в течение двух лет служила своему предназначению, создала благоприятные условия для активизации интеллектуальной жизни части армянского народа.

Ключевые слова: деревня, Шуши, педагог, редактор, еженедельник, типография, деятель, семинария



XX դարասկզբի հասարակական-քաղաքական և կրթամշակութային կյանքի երախտավորների շարքում իր ուրույն տեղ ունի հասարակական գործիչ, մանկավարժ, հրատարակիչ-խմբագիր **Սիմեոն Տեր-Մինասյանը**:

Ծնվել է 1885 թ. փետրվարի 8-ին, Գորիս գյուղի Աբ. Հռիփսիմեն եկեղեցու տիրացու Սահակ Տեր-Մինասյանի և Նանագյուլի (Նանա) ընտանիքում¹: 1907 թ. ավարտելով Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանի դպրոցական բաժինը, Ս. Տեր-Մինասյանն իրեն նվիրում է մանկավարժական գործունեությանը: Մի կարճ շրջան վաղարշապատի և Ղամարլուի եկեղեցական-ծխական դպրոցներում հայոց լեզու և գրականություն ուսուցիչ դասավանդելուց հետո նա 1909 թ. ամռան սկզբներին հրավիրվում է ծննդավայր՝ Գորիս², որտեղ ստանձնելով Աբ. Հռիփսիմենի եկեղեցական-ծխական դպրոցի ավագ ուսուցչի պաշտոնը ծավալում է կրթամշակութային լայն գործունեություն, գիտելիքները ի սպաս դնում հարազատ ժողովրդի լուսավորության գործին: Ելնելով գավառահայության լուսավորության խնդիրներին՝ Ս. Տեր-Մինասյանը հասարակական գործունեության բնագավառում բացառիկ կարևորություն էր տալիս լրագրությանը: Ժողովրդին օգտակար լինելու ու լուսավորելու իր ազնիվ մղումով նրիտասարդ հրապարակախոսը Գորիսում

հիմնադրեց և հրատարակեց «Գաւառ» շաբաթաթերթը: Որպես հասարակական մտքի վերելքի արտահայտություն՝ «Գաւառն» իր բազմաթիվ գործունեությունը տարեկան թարեմական թվականից 1909 թ. դեկտեմբերի 5-ից մինչև 1910 թ. դեկտեմբերի 5-ը (առաջին տարում լույս է տեսել 1, իսկ երկրորդում՝ 35 համար)³: Լուսաբանելով Զանգեզուրի գավառի XX դարասկզբի հայ հասարակական-քաղաքական, հոգևոր ու մշակութային կյանքի մեծ ու փոքր իրադարձությունները՝ դարձավ մեր ժողովրդի պատմության մի հետաքրքիր շրջանի կարևոր սկզբնաղբյուրներից մեկը:

Ծուրջ մեկ տարի գործելուց հետո, երբ փակվում է շաբաթաթերթը, Ս. Տեր-Մինասյանը 1911 թ. օգոստոսի վերջերին հրավիրվում է Ծուշի՝ Արցախի թեմական կոնսիստորիայի կարգապահի (էկզեկուտոր) և հայոց Մարիամյան օրիորդաց դպրոցի նորաբաց 3-րդ դասարանի հայոց լեզվի և գրականության ուսուցչի պաշտոններով⁴:

Արցախում սկսվում է Ս. Տեր-Մինասյանի մանկավարժական, գրական ու լրագրական բեղմնավոր գործունեության երկրորդ բեղուն շրջանը: Ազգային առաջադիմության ոգով տոգորված Ս. Տեր-Մինասյանը կարճ ժամանակ անց Արցախում անմիջապես ներգրավվում է հասարակական կյանքին՝ գործունեալապես բերելով գրեթե բոլոր նշանակալից իրադարձություններին, բարեգործական, գրական, կրթության ու լրագրության ոլորտում տարվող աշխատանքներին: Գործակցելով առաջադիմական գաղափարներով տոգորված մտավարականների (Նիկ. Յարամիշյան, Գրիգոր Ներսիսյան, Խորեն Բոյանի (Լորենց) և ուրիշներ) հետ՝ նա անդամակցում է Ծուշիում 1910 թ. հիմնված «Մարդասիրական ընկերությանը»:

Ծուշիում հրատարակվող ՀՅԴ աշակերտական միության «Կռունկ» խմբաստիպ թերթի (հրատարակվել է 1898-1900 թթ.-ին) և «Шушинский листок» անվամբ թերթերի (հրատարակիչ խմբագիրն էր Ծ. Մելիք-Շահնազարյանը: Լույս է տեսել 1911 թ.-ի ամռանը և հրատարակվել է երեք ամիս) փակումից հետո քաղաքի առաջադեմ մտավորականները մտադրվում են հրատարակել մի նոր թերթ: Այդ գաղափարի ջատագովներից էր Արցախի թեմում կրթամշակութային և եկեղեցաշին լայնածավալ գործունեություն ծավալած Արցախի թեմի ժամանակավոր առաջնորդ Զավեն վրդ. Բաբայանը⁵: Թերթի հիմնադրման աշխատանքներին կազմակերպչական կարևոր դերակատարություն է ունենում նաև հրատարակչական-խմբագրական աշխատանքներում փորձառու Ս. Տեր-Մինասյանը, որ արդեն 1900-ական թվականների սկզբներից լրագրության բնագավառում ճանաչված անուն էր և ուներ բարեխիղճ խմբագրի համբավ: Նախաձեռնող խմբի կողմից 1911 թ.-ի աշնանը կազմակերպված հավաքություն որոշվում է հրատարակել «Ղարաբաղ» անվամբ գրական, հասարակական եռօրյա թերթ: Որոշվում է նաև խմբագրակազմը: Ս. Տեր-Մինասյանն ընտրվում է խմբագրության անդամ⁶: Թերթի արտոնատերն ու խմբագիր-հրատարակիչը շուշեցի առաջադեմ գործիչ, բժիշկ, թեմական դպրոցի 1910-1912 թթ. տնտույ Նիկողայոս Յարամիշյանն էր: Վերջինս թերթի հրատա-

¹ Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 312, ց. 2, գ. 1628, թ. 24, 34, տե՛ս նաև ֆ. 47, ց. 2, գ. 379, թ. 4-ի շրջերես:

² Տե՛ս **ԲԷԼ**, Սիմեոն Տեր-Մինասյան, «Ղարաբաղ», Ծուշի, 1912, յունիսի 28, N 46:

³ Տե՛ս Հայ պարբերական մամուլը: Լիակատար ցուցակ հայ լրագրության սկզբից մինչև մեր օրերը (1794-1934): Առաջաբանով, ներածությամբ, ծանոթություններով և աղյուսակներով կազմվեց **Գ. Լևոնյան**, Երևան, 1934, էջ 62:

⁴ Տե՛ս **ԲԷԼ**, Սիմեոն Տեր-Մինասյան, «Ղարաբաղ», Ծուշի, 1912, յունիսի 28, N 46, տե՛ս նաև **N.N.**, Մեր պատասխանը «Ղարաբաղի» խմբագրության (II), «Սուրհանդակ», Թիֆլիս, 1912, մարտի 1, N 521:

⁵ Տե՛ս **N.N.**, Մեր պատասխանը «Ղարաբաղի» խմբագրության (II), «Սուրհանդակ», Թիֆլիս, 1912, մարտի 1, N 521:

⁶ Տե՛ս **ԲԷԼ**, Սիմեոն Տեր-Մինասյան, «Ղարաբաղ», Ծուշի, 1912, յունիսի 28, N 46:

րական իրավունքը ստացել էր 1911 թ. սեպտեմբերի 13-ին¹: Կովկասի փոխարքայության մամուլի գործերի թիֆլիսի կոմիտեն հաստատել էր Ն. Յարամիշյանի ներկայացրած ծրագիրը, որում նախատեսվում էին հետևյալ բաժինները. «1) Հեռագրեր, 2) առաջնորդող հոդվածներ, ակնարկներ, հասարակական և տնտեսական հարցերի հետազոտություններ, 3) տեղական խորհրդեր, 4) հոդվածներ և թղթակցություններ երկրամասի կարիքների մասին, 5) ֆեյհետոններ, բանաստեղծություններ, արձակ, հոդվածներ և ակնարկներ՝ պատմությունից, աշխարհագրությունից, քաղաքականությունից և այլ բնագավառներից, 6) կովկասյան կյանք և մամուլ, կայսերական կյանք և մամուլ, արտասահմանյան կյանք և մամուլ, 7) մամուլի տեսություն, 8) թղթակցություններ, 9) քննադատություն և մատենագիտություն, 10) թատրոն, արվեստ և տարբեր տեսակի ներկայացումներ, 11) դատական խորհրդեր, 12) ոստիկանական խորհրդեր, 13) այլևայլ արտատպություններ, մանրություններ, փոստ, 14) նամակներ խմբագրությանը, 15) կողմնակի հաղորդումներ, 16) հայտարարություններ՝ հայերեն և ռուսերեն լեզուներով»²:

Նախքան «Ղարաբաղի» քննությանն անցնելը, պարզաբանենք մի կարևոր հարց ևս: Բանը նրանումն է, որ Արցախի հայ պարբերական մամուլի պատմությանն անդրադարձած հեղինակների մոտ անհասկանալի պատճառներով անտեսվել և ըստ ամենայնի չի արժևորվել «Ղարաբաղի» կայացման գործում, մասնավորապես խմբագրական աշխատանքներում Ս. Տեր-Մինասյանի ունեցած անուրանալի դերը: Գրեթե բոլոր աշխատություններում միաբերան նշվում են թե՛ իբր թերթի փաստացի խմբագիրն էր Նիկ. Յարամիշյանի մոտերիմ ընկեր, թե՛ մական դպրոցի ուսուցիչ, հայ գրականության կարկառուն ներկայացուցիչ, հասարակական-քաղաքական գործիչ Վրթանես Փափազյանը: Ինչպես օրինակ՝ հայ պարբերական մամուլի պատմության լավագիտակ Մանվել Բաբոյանը «Հայ պարբերական մամուլը: Մատենագիտական համահավաք ցուցակ (1794-1980)» աշխատությունում որպես փաստացի խմբագիր նշում է Վրթ. Փափազյանին³: Պրոֆ. Սմբատ Ավագյանը «Ղարաբաղի մամուլի պատմություն (1828-1920)» ստվարածավալ աշխատությունում բավարարվել է միայն հիշատակել, որ ««Ղարաբաղի» խմբագիրներից էր նաև Սիմոն Տեր-Մինասյանը, մի ճեմարանավարտ երիտասարդ, որ զբաղվել է ուսուցչությամբ և 1910 թվականին Գորիսում հրատարակել է «Գավառ» թերթը»⁴: Իսկ արցախցի բանաստեղծ, լրագրող Էմմեստ Եսայանի՝ Վրթ. Փափազյանին նվիրված ««Ղարաբաղ» թերթի վանեցի խմբագիրը» վերտառությամբ հոդվածում, որտեղ անուն առ անուն թվարկվում են թերթին աշխատակցած հեղինակները, խոսք անգամ չկա Ս. Տեր-Մինասյանի մասին⁵: Եվ դա այն դեպքում, երբ Ս. Տեր-Մինասյանը «Ղարաբաղում» հրատարակախոսական ու խմբագրական հոդվածներով մնայուն հետք է թողել և, նրա հանդեպ՝ որպես կայացած լրագրող-հրատարակախոսի, թերթը դրսևորել է լայնախոհ մոտեցում՝ մեծապես գնահատելով նրա տաղանդը:

Մեր ուսումնասիրությունների արդյունքները բերում են այն հետևության, որ չբացառելով հանդերձ Վրթ. Փափազյանի մասնակցությունը «Ղարաբաղի» խմբագրական աշխատանքներին, սակայն, իրականում խմբագրական հիմնական աշխատանքները սկզբից ևեթ կազմակերպել է թերթի գլխավոր աշխատակից Ս. Տեր-Մինասյանը⁶: Նա էր ապահովում պարբերականի անխախտ հրատարակությունը. «...որպես արդեն փորձած, հմուտ ու կարող խմբագիր-հրատարակախոս»⁷: Ընդսմին՝ Ս. Տեր-Մինասյանը եղել է թերթի շարժիչ ուժը, հոգին, ինչպիսի բնորոշում տվել է նրան «Հորիզոն» իր առաջնորդողում. «Եւ անա բժ. Եարամիշյանի խմբագրութեամբ լոյս տեսնել է սկսում «Ղարաբաղ» թերթը, որի հոգին դառնում է Տեր-Մինասյանը»⁸: Ինչպես իրավագիտորեն ասված է «Լրագրողական հանրագիտակ»-ում. «Տեր-Մինասյան Սիմոն: Խմբագրել ու աշխատակցել է Շուշիում լոյս տեսնող «Ղարաբաղ» թերթին (1911-1912)»⁹:

Մի պարզաբանում ևս: Թե՛ն առաջնորդող հոդվածներից շատերը առանց ստորագրության են, սակայն իրենց բառամթերքով և ռճագրական դարձվածներով ամենից ավելի սերտ ընդհանրություններ ունեն Ս. Տեր-Մինասյանի գրելատճի հետ:

Որ թերթի խմբագրական աշխատանքները հիմնականում կենտրոնացած են եղել Ս. Տեր-Մինասյանի ձեռքում, վկայում է հենց նրան մոտիկից ճանաչած Վրթ. Փափազյանը՝ Գարեգին Լևոնյանին հղած նամակում, որում մասնավորապես ասվում էր. «Սիրելի՛ պ.[արոն] Լևոնյան.

¹ Տե՛ս **Բալասթեկեան Գր.**, Սիմոն Տեր-Մինասյանի յիշատակին (Ղարաբաղի ու Զանգեզուրի պարձանքի յիշատակին), Գաւառի ձայն, Ալեքսանդրապոլ, 1914, ապրիլի 24, N 37: Նիկ. Յարամիշյանը գոհ է գնացել Խոսրով բեկ Սուլթանովի կողմից 1920 թ. մարտի 22-ի լույս 23-ի գիշերը Շուշիի հայկական թաղամասում կազմակերպված կոտորածին:

² Տե՛ս **Ավագյան Ս.**, Ղարաբաղի մամուլի պատմություն (1828-1920), Երևան, 1989, էջ 148-149:

³ Տե՛ս Հայ պարբերական մամուլը: Մատենագիտական համահավաք ցուցակ (1794-1980), կազմեց՝ **Մ. Բաբոյան**, Երևան, 1986, էջ 89:

⁴ **Ավագյան Ս.**, նշվ. աշխ., էջ 175-176:

⁵ Տե՛ս **Եսայան Է.**, «Ղարաբաղ» թերթի վանեցի խմբագիրը, «Դեմո», Ստեփանակերտ, 2006, ապրիլի 29, N 7, էջ 14:

⁶ Տե՛ս **Pessimist [Գյուտ վրդ. Տեր-Ղազարայան]**, 1912 թուի «Ռուսահայ կենանքի համառոտ տեղեկագիր» (XVIII), «Հովիտ», Թիֆլիս, 1913, մայիսի 26, N 20, էջ 310:

⁷ **Ն.Ն.**, Մեր պատասխանը «Ղարաբաղի» խմբագրութեան (II), «Սուրիանդակ», Թիֆլիս, 1912, մարտի 1, N 521:

⁸ Սիմոն Տեր-Մինասյանին, «Հորիզոն», Թիֆլիս, 1912, յունիսի 23, N 133:

⁹ Լրագրողական հանրագիտակ (կենսագրական տեղեկատու): Կազմեց՝ **Մ. Հարությունյանը**, Ստեփանակերտ, 2012, էջ 270:

Ձեզանից դեռևս ոչ ես եմ ստացել «Գեղարվեստի» 4-րդ գիրքը, ոչ էլ «Ղարաբաղի» խմբագրությունը: Եթե ուզում եք, որ ռեկլամ լինի գրքի մասին և տարածվի, ինձ թվում է, որ «Ղարաբաղին» էլ պիտի ուղարկեք:

Այս առիթով խնդրում եմ մի կարծիք, որ ես եմ խմբագրում թերթը (ընդգծումը մերն է – Գ. Ս.), ես և թերթը միևնույն ենք...¹: Այդ համոզումը խարսխվում է նաև ստորև բերվող աղբյուրների աներկբա վկայությամբ: Այսպես՝ Ս. Տեր-Մինասյանի մտերիմ աշակերտներից Գ. Բալասթեկյանն ուսուցչի հիշատակին նվիրված հոդվածում գրում է. «Թերթի (իմա՝ «Ղարաբաղի» - Գ. Ս.) խմբագրական ամբողջ աշխատանքը յանձնում է Ս. Տեր-Մինասյանին, որը նորից իր շուրջն է հաւաքում, թե՛ դադարած «Գաւառ»-ի աշխատակիցներին և թե՛ իր պաշտօնակից ուսուցիչներին ու մտերիմներին»²: Խնդրի առնչությամբ նույն փաստն է արձանագրում նաև Ատրպատականի՝ «Ղարաբաղի Աղաղան գյուղի հայրենակցական միության» ներկայացրած պաշտոնաթերթը «Աղաղանը». «Ինչպէս տեղեկանում ենք՝ «Ղարաբաղի» ամենահաստատուն սիրը Տեր-Մինասյանն էր, նա էր խմբագրում և տօն տալիս այդ թերթին, չնայած կային նաև Վ. Փափագեանի նման ուժեր»³:

Այսպիսով՝ վերոգրյալ փաստերը հաստատում են, որ հրատարակության համար «Ղարաբաղը» մեծապես պարտական էր Ս. Տեր-Մինասյանին: Իսկ պարբերականի հաջող կազմակերպման գործում հատկապես մեծ դեր խաղաց «Գաւառ» շաբաթաթերթի լրագրական ու խմբագրական փորձը: Ինչպես իրավամբ գրում է «Հորիզոն» օրաթերթը. «Թե՛ «Գաւառը» և թե՛ «Ղարաբաղը» Տեր-Մինասյանի եղանակով աշխատանքով շնորհիվ լրագիրներ էին, որոնք պատիվ կարող էին բերել նոյն իսկ ամսի խոշոր կենտրոններին. – աշխոյժ, բովանդակալից, իրանց շուրջը ժողոված տեղական երիտասարդ ուժերը»⁴:

Ինչևիցէ, թերթի շուրջն էին համախմբվել Արցախի գրական ընտանիքի գրեթե բոլոր կարող ուժերը՝ Զավեն վրդ. Բաբայանը, Հովակ Ստեփանյանը, Կոնստանդին Մելիք-Շահնազարյանը (Տմբլաչի խաչան)⁵, Ս. Տեր-Գրիգորյանը, Ս. Տեր-Գասպարյանը, Ի. Զոհրաբյանը, Գրիգոր Ներսիսյանը, Խորեն Լորենցը, Լևոն Աթաբեկյանը, Հակոբ Խանլարյանը և ուրիշներ: Ինչպես վկայում է Գ. Բալասթեկյանը. «Սիմեոնը ցանկանում էր ստեղծել գաւառում մի թարմ ուժ, որոնք թե՛ տեղական գործունեությանը պէտք է զարկ տալին և թե՛ միևնույն ժամանակ լսելի դարձնէին՝ իրենց ձայն նրանց, ովքեր հեռու, մոռացված՝ գաւառի տգիտությունն ու չարիքների մէջ խրամ ժողովրդի կենդանի գործը սիրում են յաճախ խօսել նրա անունից...»⁶:

«Ղարաբաղը» տպագրվել է Մ. Բաբաջանյանի նորաբաց տպարանում՝ 1911-1912 թթ.: Առաջին տարում թերթը տպագրեց 13, իսկ երկրորդում՝ 61 համար⁷: Առաջին համարը լույս է տեսել 1911 թ. նոյեմբերի 17-ին:

Անդրանիկ համարում «Մեր կոչումը» վերտառությամբ առաջնորդողում թերթն ազդարարում էր. ««Ղարաբաղ»-ը նպատակ է դնում նախ և առաջ ուսումնասիրության ենթարկել հայրենի երկրի ու ժողովրդի կրթական, կուլտուրական և տնտեսական դրությունը, ճանաչել այդ ժողովրդի կարիքն ու ցար և ապա նրա կենսի բարոյքման թարգմանն ու ջատագովը լինել: ...Իր շուրջը խմբելով բոլոր սրտացաւ հարազատ ժողովրդական տարրերին, «Ղարաբաղ»-ը լինելու է անաչառ իւր մտրակումների մէջ, հեռու թայֆայական նեղարտությունից: Ճշմարտությունն ու արդարությունն են լինելու նրան առաջնորդող և սկզբունք ունենալով «ամեն ինչ ժողովրդի համար» լայն նշանաբանը, լինելու է ազատ մտածող, առաջադիմական բոլոր մղումներով շահագրգռում և լայն ժողովրդական գաղափարներով տոգորած գաւառական օրգան»⁸:

«Ղարաբաղի» առաջատար թեմաներից էր Արցախի կրթական գործի և մշակութային կյանքի բազմակողմանի լուսաբանումը: «Կրթական գործը Ղարաբաղում», «Հայ ուսուցչությունը», «Դպրոցական կենսը» և այլ հոդվածներում քննվում էին Արցախի դպրոցների առջև ծառացած խնդիրները և այլն: Թերթը պարբերաբար տպագրում էր գրականագիտական հոդվածներ՝ հայ և ռուս ականավոր գրողների ու մտածողների մասին: Թերթը նաև պարբերաբար նյութեր էր հրապարակում Արցախի նորությունների, իրադարձությունների և բարեգործական աշխատանքների վերաբերյալ:

Պետք է նկատել, որ Ս. Տեր-Մինասյանի գրիչը «Ղարաբաղում» շատ ավելի փորձառու էր, համարձակ ու ազատամիտ: Ծարունակելով իր որդեգրած ընթացքը՝ այժմ արդեն «Ղարաբաղի» էջերում Ս. Տեր-Մինասյանը «Մին-եան», «Տ.-Մ.», «Հավիկեան», «Հ.-եան», «Հ.» ստորագրություններով հրապարակում է բազմազան հրապարակախոսական նյութեր (մի մասը անստորագիր)՝ նվիրված կրթության, մշակույթի, բանասիրության, պատմության ու տնտեսագիտության հարցերին:

¹ Հովակիմյան Բ., Վրթանես Փափագյանի անտիպ նամակները, ԲՀԱ, Երևան, 1964, N 3, էջ 35:

² Բալասթեկյան Գր., Սիմեոն Տեր-Մինասյանի յիշատակին (Ղարաբաղի ու Զանգեզուրի պարծանքի յիշատակին), Գաւառի ձայն, Ալեքսանդրապոլ, 1914, ապրիլի 24, N 37:

³ Սիմեոն Տեր-Մինասյան, «Աղաղան», Թարիգ, Ա տարի, 1912, յուլիս, N 4, էջ 35:

⁴ Սիմեոն Տեր-Մինասյանին, «Հորիզոն», Թիֆլիս, 1912, յունիսի 23, N 133:

⁵ Կ. Մելիք-Շահնազարյանի գործունեության մասին մանրամասն տես Հայրապետյան Թ., Կոնստանդին Մելիք-Շահնազարյան (Տմբլաչի խաչան). գրական, մանկավարժական և գյուղատնտեսական գործունեությունը, «Էջմիածին», Ս. Էջմիածին, 2016, N Ա, էջ 52-81:

⁶ Բալասթեկյան Գր., Սիմեոն Տեր-Մինասյանի յիշատակին (Ղարաբաղի ու Զանգեզուրի պարծանքի յիշատակին), Գաւառի ձայն, Ալեքսանդրապոլ, 1914, ապրիլի 24, N 37:

⁷ Տես Հայ պարբերական մամուլը: Լիակատար ցուցակ հայ լրագրության սկզբից մինչև մեր օրերը (1794-1934), էջ 68:

⁸ Մեր կոչումը, «Ղարաբաղ», Շուշի, 1911, նոյեմբերի 17, N 1:

Թերթի լրահոսում գգալի էին հատկապես Ս. Տեր-Մինասյանի քննադատական հոդվածները՝ օրվա հիմնահարցերի ուշագրավ ու խորամտ ընթերցումներով: Ինչպես վկայում է «Բէկ» ստորագրությամբ հեղինակը. «...թերթի կրակոտ առաջնորդող յոդաձևները նրա գրչին են պատկանում»¹:

Կարճ ժամանակում «Ղարաբաղ» թերթն իր հաստատուն տեղն է նվաճում արևելահայ լրագրության ընտանիքում: Թիֆլիսում լույս տեսնող «Մամուլ» գրական, քաղաքական և հասարակական թերթը «Գաւառական մամուլը» խորագրով առաջնորդականում գրում է. «Մեր առաջ է դրած երեք լրագիր, — «Նոր Ձայն», «Լեռն», և «Ղարաբաղ», — առաջին երկուսը հրատարակում են Երևանում, երկրորդը՝ Շուշիում: ...պետք է ընդունել՝ որ ներկայումս Երևանում և Շուշիում կատարող ձեռնարկությունները լրագրական ասպարեզում ընդհանրապես անյաջող չեն»²: Բովանդակալից հրապարակումներով ու հասարակական արդյունավետ գործունեությամբ Ս. Տեր-Մինասյանը կարճ ժամանակում Արցախում և նրա սահմաններից դուրս ձեռք է բերում հասարակական գործչի լայն համբավ: Դրա խոսուն վկայությունն այն իրողությունն է, որ նա Ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրության առիթով, որպես Եղեմիայի (Ուրֆա) Հայոց թեմից ընտրված աշխարհական պատգամավոր վճռական ձայնի իրավունքով ևս մասնակցում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում 1911 թ.-ի դեկտեմբերի 11-13-ը գումարված Համագային-եկեղեցական ժողովին³:

Հարկ է նշել, որ Ս. Տեր-Մինասյանը համեստ ներդրում ունի հայ ժողովրդի պատմության ուսումնասիրության բնագավառում: Այսպես, երբ Շուշիի թեմական դպրոցի հոգաբարձուների խորհուրդը նախապատրաստվում էր մեծ հանդիսավորությամբ 1913 թ.-ին նշելու դպրոցի հիմնադրման 60-ամյակը, Ս. Տեր-Մինասյանը հեղինակում է գիտական պատշաճ մակարդակով գրված «Շուշու թեմ. [ակադ.] դպրանոցի 75-ամեակը» խորագրով մի ամփոփ ու փաստագրական ուսումնասիրություն: Աշխատության գիտական նորույթը նախ և առաջ այն է, որ հեղինակը, խորակրկիտ ուսումնասիրելով Արցախի թեմի կոնսիստորիայի արխիվային վավերագրերը, փաստերի համոզիչ տրամաբանությամբ հայտնում է, որ թեմական դպրոցը հիմնադրվել է ոչ թե 1860 թ.-ին, ինչպես ընդունված էր մինչ այդ, այլ՝ 1838 թ.-ին: Այդ փաստագրումը, որ արդյունք էր նրա քրոնաչափ պրպտումների, ուղեմիջ դարձավ հարցով զբաղվող հետագա ուսումնասիրողների համար:

Մեծ հետաքրքրություն ներկայացնող բովանդակալից այդ ուսումնասիրությունը Ս. Տեր-Մինասյանի գիտական ժառանգության մեջ ուրույն տեղ է գրավում: Պատմագիտական ակնհայտ արժանիքներով ուսումնասիրությունը գրավում է ժամանակի գիտական մտքի ուշադրությունը: Այսպես՝ Շուշիի հայոց թեմական հոգևոր դպրոցի պատմության մասին նույն դպրոցի հոգաբարձության (նախագահ՝ Զավեն վրդ. Բաբայան) պատվերով մեծածավալ ու արժեքավոր աշխատություն է հեղինակել նաև Լեոն: Վերջինս վկայում է, որ աշխատությունը սկսել է շարադրել 1913 թ.-ի հունիսի վերջերին: Լեոն, հղում կատարելով Ս. Տեր-Մինասյանի՝ «Ղարաբաղ» թերթում դպրոցի հիմնադրման տարեթվի վերաբերյալ փաստարկին, գրում է. «Ղարաբաղի թեմի ժամանակաոր կառավարիչ Զաւէն վարդապետը որոնելով միջոցներ թէ ինչպես կարելի կը լինի ապահովել թեմական դպրոցը, ուշադրութիւն դարձրեց այն հանգամանքի վրայ, որ դպրոցը բոլորել է իր գոյութեան յիսնամյակը: Սա մի պատեհ առիթ էր հասարակութեան ուշադրութիւնը դպրոցի անվսիթար դրութեան վրայ դարձնելու համար: ...Մինչոյն ժամանակ պարզուեց, որ թեմական դպրոցը ոչ թէ 50-ամեայ յոբելեան պիտի տօնէ, այլ 75-ամեայ, քանի որ բացուել է 1838 թուին»⁴:

Թեմական դպրոցի հոգաբարձությունը, հիմք ընդունելով Ս. Տեր-Մինասյանի, ապա՝ Լեոնի՝ դպրոցի հիմնադրման տարեթվի վերաբերյալ ստուգաբանումները, 1913 թ.-ի օգոստոսի 4-ին մեծ շուքով նշում է դպրոցի ոչ թե 50, այլ՝ 75-ամյա տարեդարձը:

Ս. Տեր-Մինասյանի հրապարակումներում ուշագրավ է «Կիրակնօրեայ գրոյցներ» խորագիրը կրող հոդվածաշարը, որում հեղինակը ընթերցողներին հայեցական ազգասիրությունից դեպի ազգային զարթոնքի իրողություններն է բացատրում:

Ս. Տեր-Մինասյանը ուշագրավ հոդվածներ է հրապարակում նաև կոռուպցիայի սպառնալից ընկերությունների ստեղծման հարցերի շուրջ: Մեծ դեր վերագրելով տնտեսական այդ ընկերություններին՝ նա տնտեսագիտորեն հիմնավորում է, որ դրանց շնորհիվ ռեալ նյութական օգնություն կարող էր ստանալ աշխատավոր գյուղացին: Այդ առիթով նա կարդում է նաև մի շարք հրապարակային դասավիտություններ՝ նվիրված կոռուպցիայի ընկերությունների ստեղծման ու տարածման հարցերին: Նշենք, որ նրա ծանրակշիռ հոդվածներն ու ուսումնասիրությունները մինչև այսօր էլ չեն կորցրել իրենց թարմությունը և ունեն անգնահատելի արժեք: Դրանք մեզ արժանահավատ ու հավաստի տեղեկություններ են տալիս Արցախի այնօրյա սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական հարաբերությունների և կրթամշակութային կյանքի վերաբերյալ:

Հարկ է նշել, որ հեշտ չեն ընթացել «Ղարաբաղի» հրատարակման աշխատանքները. թերթը լույս էր տեսնում մեծ դժվարություններով: Ժամանակի ընթացքում տարբեր պատճառներով թերթից հեռացել են գործուն աշխատակիցները: Սակայն անկուն էր Ս. Տեր-Մինասյանը: Չնայած շրջապատի հարուցած խոչընդոտներին, բարոյական գրկանքներին և խարխալող առողջությանը՝ ազգային անխոնջ գործիչը պահպա-

¹ Բէկ, Սիմեօն Տեր-Մինասյան, «Ղարաբաղ», Շուշի, 1912, յունիսի 28, N 46:

² Գաւառական մամուլը, «Մամուլ», Թիֆլիս, 1911, դեկտեմբերի 5, N 6:

³ Զուսիկ Արքեպս., Ընտրութիւն Ամենայն Հայրապետի, «Արարատ», Վաղարշապատ, 1911, N ԺԲ, էջ 42:

⁴ Տես Լեո, Պատմութիւն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի (1838-1913), Թիֆլիզ, 1914, էջ 629:

նում էր կորովը, մտավոր ձիթերը, անմնացորդ նվիրումով շարունակեց խմբագրական աշխատանքը՝ համարելով այն իր կոչումը: Ուստի թերթը կրում էր նախ և առաջ Ս. Տեր-Մինասյանի անհատականության կնիքը:

Ս. Տեր-Մինասյանը կատարելապես տիրապետում էր հռետորական արվեստին: Նրա խոսքը համոզիչ էր, հագեցած առողջ դատողությամբ և ժողովրդական իմաստությամբ. նրան սիրով ունկնդրում էին: Կազմակերպչական կարևոր դերակատարություն ու գործուն մասնակցություն ունենալով Շուշիում կազմակերպված տարաբնույթ միջոցառումներին՝ Ս. Տեր-Մինասյանը շատ հաճախ ժողովրդական և հոգևոր տոներին հանդես է եկել ոգեշունչ ելույթներով: Այսպես՝ 1912 թ. փետրվարի 2-ին, երբ Հայաստանյայց Առաքելական եկեղեցու տոնացույցի ամենասիրված տոներից մեկի՝ «Սուրբ Վարդանանց զորավարների և 1036 վկաների» հիշատակության օրվա առթիվ թեմական դպրոցի դահլիճում մեծ շուքով կազմակերպվել էր տոնական հանդես, միջոցառման երկրորդ մասում Մարիամյան օրհորդաց դպրոցի ուսուցիչ Ս. Տեր-Ղուկասյանից հետո «Հայ կնոջ դերը անցյալում և ներկայում» թեմայով ելույթ է ունենում նաև Ս. Տեր-Մինասյանը: Տպավորված վերջիններիս ելույթներից՝ միջոցառմանը մասնակից «Ն.Ն.» ստորագրությամբ հեղինակը «Սուրհանդակ» օրաթերթին հղած թղթակցությունում գրում է. «Այդ երկուսն էլ կարծես մի տեսակ մրցելու էին դուրս եկել այդ օրը իրենց հռետորական ամբողջ ձիրքն ու կարողությունը Շուշու հասարակությանը ցույց տալու համար: ...Երկուսն էլ խօսեցին ոգևորած... երկու երիտասարդ հռետորներն էլ, նախ քան ճաշը սկսելը, արժանացան երկարատև և որոտընդոստ օվիացաների»¹:

Ս. Տեր-Մինասյանի հռետորական հմայքի, հոգևոր հանդարտ նկարագրի, հարուստ գիտելիքների ու հավասարակշիռ կեցվածքի մասին առանձին ջերմությամբ է վկայում միջոցառմանը մասնակից, թեմական դպրոցի ուսուցիչ Գ. Տեր-Պողոսյանը. «Գեղեցիկ, յաղթահարող, հմայող էր Սիմեոնը իբրև ճառասաց. ու՞ր էր նա ուսել բնմասացությունը, ես չը գիտեմ... Ի՞նչ խօսած ճաշը 1912 թ. Վարդանանց տոնի օրը հայ կանանց մասին այնքան ուժեղ էր, որ նոյնիսկ նրան չը համակրող, բայց միանգամայն կրթված և ինտելիգենտ անձինք գտնում էին այն ժամանակ գեղեցիկ...»²:

Յավոթ, Ս. Տեր-Մինասյանին վիճակված չէր երկար ապրելու, շարունակել ազգօգուտ գործունեությունը. սրտի կաթվածից հանկարծամահ է լինում 1912 թ. հունիսի 22-ին: Վերահաս մահը կտրեց նրա կյանքի թելը, և ձեռնարկած բազում գործերը մնացին կիսատ:

Մանկավարժ ու հրապարակախոս Ս. Տեր-Մինասյանը կյանքից հեռացավ որպես իսկական գրական գործիչ, կարելի է ասել՝ գրիչը ձեռքին: Մահից մեկ օր առաջ «Ղարաբաղում» տպագրած նրա կարապի երգը «Ողջոյն ձեզ» առաջնորդողն էր՝ գրված հունիսի 21-ին³:

Ս. Տեր-Մինասյանի մահվան առիթով «Ղարաբաղ» անհուն վշտով ազդարարեց տաղանդաշատ լրագրողի ու մանկավարժի անժամանակ մահը: Ազդագրում ասվում էր.

«Ամսոյս 22-ին Առաւօտեան ժամը 1-ին ակմբանցից վերադառնալով իր բնակարանում սրտի պայթիւնից յանկարծամահ եղաւ խմբագրութեան անդամ Սիմեոն Տէր-Մինասեանը:

Խմբագրութիւնս խորին վշտով յայտնելով ընթերցող հասարակութեան թերթիս տաղանդաւոր աշխատակից Տէր-Մինասեանի մահւան՝ մասին՝ յարակցում է, որ հանգուցեալի դին ազգականների յատուկ ցանկութեամբ տեղափոխուեց իր ծննդավայր Գորիս քաղաքը, ուր կկատարի և նրա թաղումը:

Ամսոյս 22-ին երեկոյեան 7 1/2 ժամին Թեմիս Կառավարիչ Զաւէն վարդապետի զխաւորութեամբ և քաղաքիս մի քանի քահանաների մասնակցութեամբ կատարուեց անբիծք հանգուցեալի յիշատակին»⁴:

«Ղարաբաղի» խմբագրությունն այդ օրերին Թիֆլիսից, Բաքվից, Երևանից, Էջմիածնից, Ալեքսանդրապոլից և այլ վայրերից ստանում էր ցավակցական բազմաթիվ հեռագրեր, որոնք նաև ձոն էին Ս. Տեր-Մինասյանի հիշատակին: Յավակցական հեռագրեր էին հղում հայ մտավորականության բոլոր խավերի ներկայացուցիչները Այսրկովկասի բոլոր ծայրերից: Երևանից Լ. Քալաշյանի ուղարկած հեռագրում ասվում էր. «Խմբագրութեանդ հասած անսպասելի կորստի պատճառով իմ անհուն վիշտս և ցավակցութիւնս եմ յայտնում: Կարդացել եմ Սիմեոնի յօդածները, լսել էի նրա գործունեութեան մասին գաւառական խոյ անկիւններում, բայց ծանօթ չէի հետը: Շուշի գալով ծանօթացայ. ես նկատում էի այդ վաղամեռ երիտասարդի մէջ փայլուն ասպագայ խոստացող գծեր»⁵: Երևանից գավառական թղթակից Պետրոսյանի հղած հեռագրում ասվում էր. «Լսորը ցնցւած եմք մեր երիտասարդ գործչի՝ Տէր-Մինասեանի անսպասելի մահւան առթիւ»⁶: Երևանից «Շարքարանի» ստորագրությամբ ստացված մեկ այլ հեռագրում ասվում էր. «Սրտիս խորքից բղխած իմ անկեղծ ցավակցութիւնն ու վիշտն եմ յայտնում յարգելի խմբագրութեանդ կրած ծանր կորստի առթիւ. յանձինս երիտասարդ գրական գործիչ Սիմեոն Տէր-Մինասեանի»⁷:

¹ Ն.Ն., Թղթակցություններ (մեր սեփական թղթակցից: Շուշի, 3 փետրվարի), «Սուրհանդակ», Թիֆլիս, 1912, փետրվարի 9, N 504:

² Տէր-Պողոսեան Գր., Յուշեր Սիմեոնի կեանքից, «Գաւառի ձայն», Ալեքսանդրապոլ, 1914, ապրիլի 24, N 37

³ Հեան [Սիմեոն Տէր-Մինասյան], Ողջոյն ձեզ, «Ղարաբաղ», Շուշի, 1912, յունիսի 21, N 44:

⁴ «Ղարաբաղ», Շուշի, 1912, յունիսի 24, N 45:

⁵ «Ղարաբաղ», Շուշի, 1912, յունիսի 1, N 47:

⁶ Նույն տեղում:

⁷ Նույն տեղում:

Հարազատների որոշմամբ՝ Ս. Տեր-Մինասյանի թաղումը պետք է կատարվեր ծննդավայրում՝ Գորիսում: Հունիսի 23-ին Արցախի թեմի առաջնորդ Ջավեն վրդ. Բաբայանի, մի քանի քահանաների, «Ղարաբաղի» խմբագրատան աշխատակիցների և մի խումբ ուսուցիչների մասնակցությամբ Շուշիում կազմակերպվում է սգո հանդես: Բազմահազար մարդիկ կսկիծը սրտում հավաքվել էին՝ վերջին հրաժեշտը տալու մասնակալարժույթան և լրագրության բազմաթյուն և շնորհաշատ մշակին:

Ս. Տեր-Մինասյանի կյանքի ու հասարակական գործունեության վերաբերյալ սրտառույզ դամբանականներ են կարդում Եղիշե քին. Թարխանյանը և Գ. Բալասթեկյանը, որոնք բարձր են գնահատում հանգուցյալի՝ կրթամշակութային ասպարեզում ունեցած մեծ վաստակը: Իսկ թեմականի աշակերտներից Գ. Ներսիսյանը կարդում է սիրելի ուսուցչի հիշատակին ձոնված «Վաղամեղիկ հրապարակախոս Ս. Տեր Մինասնանի անմահ յիշատակին» վերտառությամբ արձակ բանաստեղծությունը¹:

Խիստ հուզիչ է եղել հատկապես Ս. Տեր-Մինասյանի աշակերտ Գ. Բալասթեկյանի խոսքը, որում նա, բարձր գնահատելով իր ուսուցչի մանկավարժական գործունեությունը, հրապարակախոսական տաղանդն ու գրական կարողությունները, գործակից ընկերներին կոչ էր անում շարունակելու հանգուցյալի կիսատ թողած գործը. «Մենա Սիմեոն Տեր-Մինասնանը... յախտեան ընդմիշտ նա բաժանեց մեզնից...»:

Անցան սգի այն ծանր օրերը, եկան գործի օրերը, այն օրերը երբ Սիմեոնին սիրող ու յարգող բոլոր ընկերները պիտի նորից միանան, ձեռք-ձեռքի տան առաջ տանելու և բարձր պահելու այն դրօշը որի վրայ գրած է հասարակական գործ...»²:

Ելույթ է ունենում նաև Մեղրեցոց Աբ. Աստվածածին եկեղեցու երեց Արտակ Մանգասարյանը և հայտարարում, որ ի հիշատակ Ս. Տեր-Մինասյանի՝ եկեղեցու հոգաբարձությունը (անդամներ՝ Լյուստանդին Պետրոսյան, Նիկողայոս Զուրաբյան, Սամսոն Պարոնյան, Արտակ Մանգասարյան, քարտուղար՝ Ի. Տեր-Հովհաննիսյան)³ որոշել է «որդեգիր պահելով յաւերժացնել հանգուցեալի յիշատակը»⁴:

Ս. Տեր-Մինասյանի աճյունը ուսամբարձ մինչև Շուշիի վերին դարպասներ տանում են գործընկեր ուսուցիչներն ու աշակերտները: Հուղարկավորության հանձնաժողովի («Ղարաբաղ» թերթի խմբագիր, թեմական դպրոցի ուսուցիչ Վրթ. Փափագյան, Մարիամյան օրիորդաց դպրոցի ուսուցիչ Գ. Ղարազյուզյան, կոնսիստորիայի ներկայացուցիչ Տ. Բեկ-Յուզբաշյան) ուղեկցությամբ Ս. Տեր-Մինասյանի՝ պատկերով ու ծաղիկներով պատված աճյունը ժամը 12-ին կառքով տեղափոխվում է Գորիս:

Ս. Տեր-Մինասյանի մահն անդառնալի կորուստ էր բովանդակ հայ մշակույթի, հայ հասարակական-քաղաքական մտքի և հատկապես լրագրության համար: Ծանր էր կորուստը հատկապես «Ղարաբաղ» լրագրի աշխատակազմի և Մարիամյան օրիորդաց դպրոցի կուլեկտիվի համար, այլևս իրենց հետ չէր խորհրդատուն և ուսուցիչը, որի հեղինակությունը դասական արժեք էր ստացել:

Ս. Տեր-Մինասյանի մահից կարճ ժամանակ անց «Ղարաբաղի» խմբագրակազմում սկսված տարածայնությունների պատճառով ընդհատվում են տպագրական աշխատանքները: «Հովիտ» շաբաթաթերթը «Լուրերի» բաժնում ընթերցողներին տեղեկացնում էր. «Մեզ հաղորդում են Շուշուց, որ թեմական դպրոցի ուսուցչական կազմից հեռացում է Վրթանէս Փափագյանը: Նոյնպես «Ղարաբաղ» թերթի խմբագրական կազմի մեջ արմատական փոփոխություններ են տեղի ունեցել, հեռացել կամ հեռացում են բոլոր այն անձինք (Վրթ. Փափագյան և ուրիշներ), որոնք զուտ թայֆայական ձգտումներով տոգորում էին և դարձրել էին թերթը իրանց թայֆայական, նեղ կուսակցական շահերի օրգան»⁵:

Թերթի գոյության համար անբարենպաստ այդ մթնոլորտում լիովին դադարում է «Ղարաբաղի» հրատարակությունը (վերջին՝ 61-րդ համարը լույս է տեսնում 1912 թ. օգոստոսի 19-ին): Ակնհայտ է, որ «Ղարաբաղ» թերթն իր հեղինակությունն ու գոյությունը պահպանում էր շնորհիվ Ս. Տեր-Մինասյանի լրագրական տաղանդի, սկզբունքայնության, գործին անձնագոհ նվիրվածության ու կամքի շնորհիվ:

Ամփոփելով Ս. Տեր-Մինասյանի գործունեության արցախյան շրջանը՝ նշենք որ ժողովրդի լուսավորության ու զարթոնքի նախանձախնդիր գործիչն իր կարճատև գործունեության ընթացքում մեծ ջանքեր գործադրեց և իր հարուստ փորձն ու գիտելիքները նվիրաբերեց արցախահայության հասարակական, կրթամշակութային կյանքի առաջադիմության համար: Անգնահատելի է նրա ներդրումը հատկապես «Ղարաբաղ» թերթի հիմնադրման ու հրատարակման գործում: Թերթը, թեև ունեցավ կարճատև կյանք, սակայն Արցախի հասարակական, մշակութային կյանքի կարևոր իրադարձություններից էր, որ ներկա տարի ծառայեց իր կոչմանը, նպաստավոր պայմաններ ստեղծեց հայ ժողովրդի մի հատվածի մտավոր կյանքի աշխուժացման համար: Մանկավարժության ու լրագրության բնագավառում ծավալած արդյունավետ ու բեղմնավոր գործունեությամբ նա բացառիկ հետք է թողել գավառահայության կրթական գործի և հասարակական-քաղաքական մտքի զարգացման խորապատկերին:

¹ Տես Ներսեսյան Գր., Վաղամեղիկ հրապարակախոս Ս. Տեր Մինասնանի անմահ յիշատակին, «Ղարաբաղ», Շուշի, 1912, յունիսի 28, N 46:

² Բալասթեկյան Գր., Խոսքից դեպի գործ (Սիրելի Սիմեոնի յիշատակին...), «Ղարաբաղ», Շուշի, 1912, յունիսի 28, N 46:

³ Տես Նամակներ խմբագրություն, Շուշի 14 փետրվարի, «Սուրհանդակ», Թիֆլիս, 1912, փետրվարի 22, N 514:

⁴ «Ղարաբաղ», Շուշի, 1912, յունիսի 24, N 45:

⁵ «Հովիտ», Թիֆլիս, 1912, յուլիսի 8, N 26, էջ 415:

ՀՏԴ 94(323.1:479.243)

Պատմություն

Վահրամ Բալայան.

պ.գ.դ., պրոֆեսոր

ՇՈՒՇԻ ՏԵՂՆ ՈՒ ԴԵՐԸ ՀԱՅՈՑ ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Բանալի բառեր՝ Շուշի, հայ, բերդաքաղաք, ազատություն, պայքար, համագգային, քաղաքական, մշակութային, տնտեսական, հասարակական

Վահրամ Բալայան,

ժ.ս.ն., պրոֆեսոր

ШУШИ, РОЛЬ И МЕСТО В СИСТЕМЕ АРМЯНСКОЙ ЦИВИЛИЗАЦИИ

В истории армянского народа, трудно найти город, который сыграл бы такую противоречивую, судьбоносную во всех отношениях, роль в жизни своего создающего народа, как Шуши. С одной стороны, он явился стержнем многовекторной и многослойной судьбы армянского народа, предав новый импульс духу его творческой деятельности, а с другой стороны стал прецедентом потерь и борьбы.

На зигзагах многовековой истории Шуши вместе с приобретениями потерями впитывал в себя эволюционные процессы развития региона, и очищаясь занял свое решающее место и роль в общеармянской цивилизационной ценностной системе.

События прошлого сегодня нуждаются в переоценке для использования их в укреплении и усилении РА и НКР.

Общеармянскими усилиями возрожденная Шуши, силой благословений и трудов веками живших здесь армян, в сердце Арцаха взирает в светлое будущее, пробует вновь стать неиссякаемым источником веры и борьбы.

Ключевые слова: Шуши, армяне, крепость, свобода, борьба, национальный, политический, культурный, экономический, общественный

Vahram Balayan,

Doctor of History. Professor

THE PLACE AND ROLE OF SHUSHI IN THE ARMENIAN CIVILIZATIONAL SYSTEM

It's hard to find another city like Shushi in the centuries-old Armenian history that played such a contradictory, to be more exact rather fatal role in its people's life. On the one hand it became the axis of the complex and multilayered Armenian biography giving an impulse to the Armenian's creative spirit, on the other hand it became the precedent of losses and struggles.

With its centuries-old biography, with its achievements and losses Shushi was strengthened in the regional developments and all these had its crucial place and role in the Armenian civilization system.

Nowadays they need to be appreciated and used again to strengthen Armenia and the NKR.

Revived and reconstructed by the all-Armenian efforts, the force and blessings of the Armenians who has lived there for many centuries, Shushi again and again spares no effort to become an inexhaustible source of belief and struggle.

Keywords: Shushi, Armenian, fortress, freedom, struggle, national, political, cultural, economic, public

Շուշին Մեծ Հայքի այն քիչ բնակավայրերից է, որ բախտորոշ դերակատարություն է ունեցել հայոց պատմական ճակատագրում:

Շուշին բազմադարյան կենսագրության կենտրոններում ձեռքբերումներով ու կորուստներով հանդերձ, հունցվել է տարածաշրջանային զարգացումների հոլովույթում, և և այդ ամենը բյուրեղանալով՝ իր վճռորոշ տեղն ու դերն է ունեցել հայոց քաղաքակրթական արժեքահավաքում:

Դրանք այսօր կարիք ունեն նորից արժևորվելու և ՀՀ ու ԱՀ հզորացման գործին հավուր պատշաճի օգտագործվելու:

Շուշիի բազմադարյան կենսագրության մեջ հոգևոր, նյութական, հասարակական, պետական նշանակության արժեքների ստեղծման գործում առանցքային դերակատարություն է ունեցել քաղաքի բնաշխարհագրական միջավայրը:

Նախախնամության կամքով լեռնային կղզու նման ստեղծված Շուշիի սարահարթը, շրջակայքի հետ համեմատ ավելի քան տիրական էր և մարդու անվտանգ և ապահով կյանքի համար՝ հարմարավետ:

Շուշին արևելյան, արևմտյան և հարավային կողմերից շրջապատված է սառած լավայից կազմված ժայռագոտիով, որով ներս մտնելը մարդու համար փաստորեն անհնարին է: Ինչպես դիպուկ բնութագրել է Հակոն սարկավագ Շուշեցին. «... յԱստժոյ էր ամրացրել: Մնացած հյուսիսային մասը, նշում է նա, - շրջապատված էր 5000 կանգուն (2,5 կմ- Վ.Բ.) ընդհանուր երկարությամբ պարսպապատերով, որոնց մեջ կար 50 աշտարակ և 4 դարպաս»¹:

Ռազմական պատմագիր գեներալ Պոտտոն 1826 թ. լինելով Շուշիում գրել է. « Շուշիի բերդը կառուցված է անմատչելի ժայռերի արանքում, որոնք իրար հետ շաղկապված են ու մեկ միասնություն են կազմում և միայն նեղ մուտք ունի, որը ուժով գրավելը անհնարին է: Ով տիրում է այդ ամրոցին, նա իշխում է այդ երկրամասում»²:

Այդ ամենի գիտակցումով ք.ա. առաջին հազարամյակից սկսած հայ թագավորները, իշխանները տափաստանից դեպի հայկական լեռնաշխարհի խորքերը տանող առանցքային այդ կետում կառուցել են ամրոց-բնակավայրը:

Հյուսիսից և արևելքից դեպի հայկական լեռնաշխարհի սիրտ՝ Այրարատ թափանցել ձգտող հորդաները դեմ էին առնում բնության և մարդու կողմից ներդաշնակորեն ստեղծված ամրություններին ու ջարդուփշուր դառնում:

Տարեցտարի ահագնացող վտանգն Արցախի իշխաններին դրդում էր առավել անխոցելի դարձնել բերդավանը: Ժամանակի ոգուն համահունչ այս սովորական ամրոցից քայլ առ քայլ վերածվում էր պաշտպանական համակարգի: Հայկական զինական ուժը Շուշիի կիրճի երկայնքով տեղակայված ամրոցները դարձրել էր անխոցելի վահան: Այն առավել ընդգծված դերակատարություն ունեցավ սղոնական պայքարի տարիներին, որից մնացած ավանդություններով բազում սերունդներ դաստիարակվեցին և հուսալիորեն պաշտպանեցին հայրենի սահմանները:

Մյուս կողմից էլ ք.ա. 1-ին հազարամյակից մինչև 18-րդ դարի կեսերն առաջին անգամ Շուշիի պատմության մութ կողմերի լուսաբանումը հնարավորություն է տալիս բացահայտելու Փանահ խանի կողմից 18-րդ դարի երկրորդ կեսին բերդաքաղաքի հիմքերը դնելու մասին աղբյուրական պատմագիտության մեջ տեղ գտած կեղծ տեսակետն ու բուն նպատակը:

Վանի թագավորության գահակալների, այնուհետև Երվանդունիների, Արտաշեսյանների Արշակունիների և Բագրատունիների օրոք, Արցախը, բնականաբար, նաև նրա մի մասը կազմող Շուշին, ներգրավված են եղել հայկական թագավորությունների կազմում: 7-րդ դարում Շուշիի Շավշին ձևով գոյության մասին են պատմում արաբ մատենագիրները³:

Շուշիի սարահարթի տեղադրումն ու մասնակի ուսումնասիրությունները մեզ թույլ են տալիս ասել, որ վաղ միջնադարից մինչև 19-րդ դարի 20-ական թվականների վերջը, այսինքն՝ ռուսական գերիշխանության նախնական փուլը՝ հիմնական ամրոցի կառուցման ժամանակահատվածը, քննության նյութ հանդիսացող վերոհիշյալ բարձրավանդակում կային առանձին ամրոցներ: Պատահական չէ, որ Շուշիում և նրա անմիջական շրջապատում հայտնաբերվել է վաղ միջնադարյան ժամանակաշրջանի դամբարաններ, 10-13-րդ դարերի խաչքարեր, ինչպես նաև նույն ժամանակաշրջանին վերաբերող գերեզմանոց:

9-13-րդ դարերի ընթացքում հզորանում են Արցախի իշխանական տների ներկայացուցիչները: Ծաղկում են ապրում մշակույթն ու տնտեսական կյանքը: Այդ օրինաչափ և բնականոն զարգացումից դուրս չմնաց նաև Շուշին, որը այդ ժամանակներում ավելի շատ հայտնի էր Քար կամ Քարագլուխ, Շուշիքար, անուններով⁴: Շուշիի հարևան գյուղերի բնակիչները քաղաքի

¹ Բալայան Վ., XIX դարի և XX դարի սկզբների Շուշիի շինարարական կառուցողական արվեստի ձեռքբերումները և քաղաքի ազգային դիմագծի պահպանման արդի խնդիրները, Շուշին հայկական մշակույթի օջախ, հայկական գրապության 500-ամյակին նվիրված միջազգային գիտական կոնֆերանսի զեկուցումներ, «Կաճառ», 6 (71-82), 2012, Շուշի, 2014, էջ 80:

² Потто В., Первые добровольцы Карабага в эпоху водворения русского владычества (Мелик-Вани и Акопъ Юзбаши Атабековы), Тифлисъ, 1902, стр. 3-4.

³ Баладзори, Завоевания стран, пер. П. Жузе, Баку, 1927, стр. 13, Ибн-ал Факих, СМОМПК, XXXI, Тифлис, 1902, стр. 27.

⁴ Այս Քարագլուխը չպետք է շփոթել Խրամորթի մոտ գտնվող Քարագլուխ-Շիկաքարի հետ:

որոշ հատվածներ անվանում են «Քերծեն կըլօխ», որը կարելի է հասկանալ նաև բերդ, անմատչելի վայր ձևով: Պատահական չէ, որ 1724 թ. Իվան Կարապետը ռուսական արքունիքին գրել է. «Էս Քարայզլխին սղնախումն Թարխան և Բադի յուզբաշունց քշտին ամ»¹:

13-րդ դարի 20-ական թվականներին Ջալալ-ադ-Դին սուլթանի անձնական քարտուղար Շեխաբ-ադ-Դին ան-Նասավին, Շուշիի ամրոցներից մեկին «Կալադարա» անունն է տվել²: Նկատենք, որ նոր և նորագույն ժամանակներում արցախահայերը Շուշիի բերդը երբեմն անվանում էին դալա, իսկ նրա բնակիչներին՝ դլըցեք:

18-րդ դարի սկզբներին Շուշին հայության կյանքում առանձնակի դեր դերակատարություն ստանձնեց:

Արցախում Եսայի կաթողիկոսի եռանդուն կազմակերպական ձեռնարկները, արտաքին ճակատում ակտիվ դիվանագիտական փնտրտուքները, հոգևոր դասի, մելիքների ու ժողովրդի համախումբ ներդաշնակ գործողությունները համայն հայության համար Հայոց արևելից նահանգները տվյալ ժամանակահատվածում դարձին հավատի ու հույսի կերոններ: Ազատագրական պայքարի գործիչների համար Արցախը դարձավ յուրօրինակ հավաքատեղի:

Պատմական մի հիշատակություն հաղորդում է, որ 1717 թ. Ավան հարյուրապետի գլխավորությամբ «շիրվանցիները» հաստատվել էին Արցախում՝ Շուշին դարձնելով ազատագրական պայքարի օջախներից մեկը³: 1720-ական թթ. Ավան հարյուրապետը 700 քառ. մետր տարածությամբ չորս աշտարակներով ամրոց է կառուցում: 19-րդ դարի կեսերին ռուս հեղինակները նկատել են, որ մինչև Փանահի Շուշիում հայտնվելը, Ավան հարյուրապետի ժամանակ ամրոցը դարձել էր Արցախի մելիքների ամենաապահով նստավայրը⁴:

Նկատենք, որ այդ շրջանում եթե Գանձասարը Արցախի և շրջակա տարածքների համար հոգևոր կենտրոնի դերակատարություն էր ստանձնել, ապա Շուշին, քայլ առ քայլ դառնում էր նրա քաղաքական զարկերակը: Մինչև 1729 թ. Շուշիից էին սկիզբ առնում քաղաքական գործընթացներից բխող նորանոր զարգացումները:

18-րդ դարի առաջին կեսին առնչվող փաստաթղթերում մեզ հետաքրքրող բերդը ներկայացված է Շօշ, Շուշի, Քարագլուխ կամ Քարագլխի սղնախ անուններով:

1720-ական թթ. հայկական զինական ուժերը Շուշիի կիրճի երկայնքով տեղակայված ամրոցները դարձրել էին անխոցելի վահան և հյուսիսից ու արևելքից դեպի հայկական լեռնաշխարհի սիրտ՝ Այրարատ թափանցել ձգտող հորդանքները դեմ էին առնում բնության և մարդու կողմից ներդաշնակորեն ստեղծված ամրոցներին ու ջարդուփշուր դառնում:

18-րդ դարի երկրորդ կեսին Արցախում տեղի ունեցած քաղաքական նոր վեադասավորությունները՝ երկրամասում իշխանական տների միջև տեղի ունեցած հակամարտությունը, Փանահի Շուշիում հաստատվելը և այդ հողի վրա Ղարաբաղի խանության ասպարեզ գալը ու դրա հետևանքով ստեղծված հայ հանրության ծանր, անտանելի վիճակն ու մելիքների իրավունքների սահմանափակումը պատճառ են դառնում ազգային ազատագրական պայքարի աննախադեպ վերելքին և հայկական թագավորության վերակերտման գաղափարով վերակենդանացմանը:

Հայ մարդու ձեռով Արցախի սրտում կառուցված բերդավանը, շուրջ կես դար արհավիրքներ բերեց այդ նույն ժողովրդին: Արցախահայությունը նախկինում իրենց պաշտպան բերդավանին արդեն դիտում էր որպես թշնամական կենտրոնի:

18-րդ դարի վերջերին Արցախի մելիքները այդ թվում Վարանդայի Ջումշուդ Մելիք-Շահնազարյանը ուժերի գերլարումով ձգտում էին Ռուսաստանի աջակցությամբ ազատագրել Արցախը և Շուշիից արտաքսել անկոչ խաներին: Իրենց հերթին պարսկական իշխանություններն ու Իբրահիմ խանը, հանձին Արցախի մելիքների և Գանձասարի կաթողիկոսի, տեսնում էին դեպի Այսրկովկաս ռուսների մուտքն ապահովող ուժի, ուստի ամենադաժան և հետևողական ձևով փորձում էին վերացնել հայկական պետականության վերջին բեկորները:

¹ Հայ-ռուսական հարաբերությունները 18-րդ դարի առաջին երեսնամյակում, հ. 2, մասն 3, Երևան, 1967, էջ 186:

² Шихаб ад-Дин Мухаммад ан Насави, Жизнеописание султана Джалал ад-Дина Манкбурны, Баку, 1973, стр. 278.

³ Երկու վավերագրեր տ. Խաչիկ վարդապետի ձեռագրերի ժողովածուից, «Արարատ», հունիս, Վաղարշապատ, 1900, էջ 35:

⁴ «Северная пчела», но. 210, 18 сентября, С. Петербург, 1851.

Ցարական արքունիքը, Արցախի մելիքությունների մեջ տեսնելով կազմակերպված իրական կառույցների և հավատարիմ դաշնակիցների, նրանց հետ մշտական կապեր էր պահպանում: Երկիրն ազատագրելու և հայկական պետականությունը վերականգնելու խոստումներով՝ ռուսական կառավարությունն Արցախի մելիքներին մշտապես պահում էր իր ազդեցության ուղեծրում:

Ցարական արքունիքը, հմտորեն օգտագործելով հայության ակնկալիքները, իր արտաքին քաղաքական ծրագրերի իրագործման համար առավելագույնս նպատակաուղղելով մելիքների զինված ուժը, 19-րդ դարի սկզբներին տարածաշրջանում ապահովեց գերիշխող դիրք:

Հայ ժողովրդի ջանադիր մասնակցությամբ՝ ռուսական զենքի հաղթանակներն ամբողջականացվեցին 1813 թ. հոկտեմբերի 12-ի Գյուլիստանի հաշտության պայմանագրով:

Ճիշտ է, արցախահայությանը չհաջողվեց վերակերտել պետականությունը, բայց, այնուամենայնիվ, երկրամասը, հայտնվելով ռուսական կայսրության կազմում, զարգացման և ազգային միատարության պահպանման հնարավորություն ուրվագծեց: Երկրամասի կենտրոն Շուշին, լինելով Ռուսաստանը Պարսկաստանի հետ կապող առանցքային կետում, զարգացման նոր հեռանկարներ ստացավ:

1813 թ. Ղարաբաղի, Շաքիի և Շիրվանի խանությունների տարածքների վրա ստեղծվեց մի ռազմական շրջան՝ Ղարաբաղի մարզ անունով, որի կենտրոնը Շուշին էր:

1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի տարիներին Շուշիի և հարևան գյուղերի հայությունը իրենց քաջարի նախնիների ավանդներին հավատարիմ, հերոսաբար պաշտպանում էին հայրենի հողը: Շուշիի հայերը ոչ միայն կռվում էին ճակատի առաջին գծում, այլև միաժամանակ սննդամթերք հայթայթում, վառող պատրաստում, նորոգքում բերդի փլված պատերը, կանաչք և երեխաները փամփուշտ, հաց և ջուր էին մատակարարում զինվորներին, խնամում վիրավորներին: Շուշիի ռուսական կայազորի հրամանատար գնդապետ Ռեուտը գեներալ Երմոլովին ներկայացրած զեկույցում գրել է. «Բերդը պաշտպանող հայերի վերաբերյալ պարտքս եմ համարում բացատրել, որ նրանց ծառայությունը արժանի է ուշադրության, որովհետև նրանք բոլորը գործում էին գերազանց քաջությամբ, դիմացան բազմաթիվ զոհերի, ետ մղեցին թշնամուն խոշոր կորուստներով, արհամարհում էին պարենի պակասը և բնավ չէին մտածում բերդը հանձնելու մասին, թեև վրա էր հասել կատարյալ սովը»¹:

Ռուս-պարսկական հաղթական պատերազմից հետո Շուշին դառնում է հայոց աշխարհի ամենաապահով վայրերից մեկը: Շուշին դարձավ հայահավաք կենտրոն:

Շուշի տեղափոխվեցին Նախիջևանի, Ղազանչիի (Շահակերտ), Ագուլիսի, Մեղրիի հայության մի մեծ հատված:

Արցախի տարբեր գավառներից, մասնավորապես՝ Ջրաբերդից, նոր բնակիչներ համալրում են իրենց համերկրացիների շարքերը: Տարբեր գյուղերում, գավառներում արմատավորված սովորությունները Շուշիի միջավայրում փոխակերպվում կամ էլ այս կամ այն դրսևորումներով շարունակում են գոյատևել՝ դառնալով քաղաքային համակեցության նոր կանոններ:

Շուշի տեղափոխված հայերը, ենթարկվելով արցախյան միջավայրի ազդեցությանը, մի քանի տասնամյակների ընթացքում մոռացան իրենց բարբառներն ու սովորությունները մերվեցին տեղացիներին և արդեն հանդես էին գալիս որպես հայկական քաղաքամասի բնակիչներ:

1846 թ. Շուշի քաղաքի կարգավիճակ ստանալուց հետո, այն ոչ միայն Արցախի, այլ նաև հարևան գավառների՝ Շաքիի, Շիրվանի, Ջանգեզուրի հայության համար նույնպես մայրաքաղաքի դերակատարություն ուներ: Չնայած վարչական տեսանկյունից Շուշին նշված գավառների հետ առնչություն, առավելևս պարտականություն չունեց, այնուամենայնիվ, քաղաքային իշխանությունները, կուսակցությունները, հասարակական, բարեգործական առողջապահական, կրթական, մշակութային հաստատությունները, մտավորականները մտահոգ էին Շաքիի, Շիրվանի, Ջանգեզուրի հայության ճակատագրով և առօրյա հարցերով: Զարգացման ուղին բռնած բերդաքաղաքն օրեցօր դառնում էր տարածաշրջանի վարչական, քաղաքական, տնտեսական և մշակութային կենտրոն, և այդտեղ ապրելը դառնում էր հաճելի ու պատվաբեր:

¹ Потто В., Первые добровольцы Карабага...., стр. 62.

19-րդ դարում Շուշին առավել շատ հայտնի էր որպես արհեստագործական կենտրոն: Այս ժամանակահատվածում արհեստավորները ներառված էին համքարությունների մեջ և ղեկավարվում էին նախկին ավանդույթներով:

Քննարկվող ժամանակաշրջանում Շուշիում կային 41 արհեստավորական համքարություններ:

Արհեստագործությունը խթանեց առևտրի և գործարանային արտադրության զարգացմանը:

19-րդ դարի սկզբներից սկսած Շուշիում տնտեսության մեջ տեղի ունեցած դրական տեղաշարժերը նպաստեցին նաև մշակութային կյանքի աշխուժացմանը:

Օրեցօր փոփոխվող կյանքը նոր խնդիրներ էր դնում մշակութային գործիչների առջև:

Լուսավորության տարածումը, դժնդակ ժամանակներին դիմակայած ժողովրդին գրին ու գրականությանը հաղորդակից անելը դառնում էին հայ գործիչների առաջնահերթ խնդիրներից մեկը: Շուկայական հարաբերությունների վրա հենված տնտեսությանն անհրաժեշտ էին կրթված և բանիմաց գործիչներ: Մեկը մյուսի հետևից բացվեցին դպրոցներ, կրթական-լուսավորական հաստատություններ:

Նոր ժամանակները պահանջում էին աղջիկների կրթության և դաստիարակության գործին մեծ ուշադրություն դարձնել:

Աննախաղեպ վերելք ապրեց գրահրատարակչական գործը: 1874 թ. մինչև 1920 թ. մարտը Շուշիում լույս է տեսել 28 անուն թերթ և հանդես, որից 25-ը՝ հայերեն, 3-ը ռուսերեն¹:

Շուշիում բուռն զարգացում էր ապրում գիտական միտքը, մասնավորապես հայագիտությունը: Շուշիում հայագիտական մտքի կենտրոնի դերը ստանձնում է Ղարաբաղի Հայոց Թեմական հոգևոր դպրոցը, որտեղ տարբեր տարիների դասավանդել են հայագիտության ակնառու գործիչներ Պ. Պողոսյանը, Մ. Բարխուդարյանը, Ս. Մանդինյանը, Ստ. Դեմուրյանը, Վրթ. Փափազյանը, Հ. Աճառյանը, Ա. Չիլինգարյանը, Ն. Աբեղյանը, Ս. Մելիքյանը, Լ. Թախտաջյանը, Ա. Տեր-Պողոսյանը, Հ. Մուսայելյանը, Խ. Սամվելյանը և ուրշներ: Նրանց շնորհիվ դպրոցներում փոխվել են ուսուցման հին ձևերը, կազմվել են նոր ուսումնական ծրագրեր և դասագրքեր, նպաստելով նոր սերունդի հայագետների ձևավորմանը: Վերոնշյալ գործիչները ոչ միայն դասավանդել են, այլ նաև այդ տարիներին ստեղծել համահայկական, ինչպես նաև համամարդկային նշանակության ստեղծագործություններ:

Շուշիում ստեղծվել են բարձրարժեք գեղարվեստական գործեր: Գեղարվեստական ճաշակ ձևավորող բարձրարժեք խոսքի տպավորության տակ էր ապրում շուշեցի հայ մարդը: Իրավացի էր Սերգեյ Եսենինը. «Եթե նա բանաստեղծ չէ, նշանակում է շուշեցի չէ»²:

Շուշիի մշակութային եռուզեռի պայմաններում աշխույժ ու բեղմնավոր է եղել Շուշիի թատերական կյանքն ու երաժշտական արվեստը:

Հայ երաժշտագետ Վ. Կարազանովը իրավացիորեն գրել է. «Անդրկովկասին երաժիշտներ և երգիչներ է մատակարարում Շուշին, որը համարվում է պոեզիայի, երգի և երաժշտության աստվածաշնորհի հայրենիքը: Այն անդրկովկասի համար կոնսերվատորիայի դեր էր կատարում»³:

19-րդ դարի կեսերից սկսած Շուշին արագորեն կառուցապատվում է քաղաքաշինության կանոնավոր սկզբունքներով: Դա պայմանավորված էր ոչ միայն ստեղծված համեմատաբար բարենպաստ միջավայրով, այլ կառուցողական արվեստի, շինարարական գործի կատարելագործմամբ, հասարակության կողմից առաջադրված գործնական պահանջներով և իշխող գաղափարների ազդեցությամբ:

19-րդ դարում և 20-րդ դարի սկզբներին Արցախի սրտում՝ Շուշիում, աստիճանաբար ձևավորվում են հայության այդ հատվածի մշակութային նոր ավանդույթներ, որոնք համահայկական ծիրի մեջ բյուրեղանում և դառնում են համազգային արժեքներ:

Շուշեցի հայ գրողները, գիտնականները, մշակութային տարբեր ոլորտների գործիչները նախանձախնդրորեն փորձում էին նպաստել քաղաքում ապրող թուրքերի շրջանում նույնպես առաջացնել մտավոր շարժում:

¹ Բալայան Վ., Շուշիի տեղն ու դերը հայոց քաղաքակրթական համակարգում, Երևան, 2017, էջ 235:

² Есенин С., Собрание сочинений, Москва, 1962, стр. 205.

³ Караганов В., Кавказская музыка, Тифлис, 1908, стр. 28.

Այսրկովկասում Թիֆլիսից հետո Շուշին երկրորդ քաղաքն էր, որտեղ եվրոպական առաջադեմ գաղափարները ոչ միայն ընկալվում, այլ նաև կենսակերպ են դառնում:

19-րդ դարի երկրորդ կեսից սկսած Շուշին դարձավ սահմանադրական շարժման, ազատամիտ, առաջադեմ ազգային գաղափարների ձևավորման, արժարժման և տարածման կենտրոն: Նմանօրինակ միջավայրը մագնիսի նման դեպի իրեն էր ձգում հայոց երկրի տարբեր հատվածներում ապրող լուսավոր գավակներին, որոնք տեղացիների հետ միասին, նոր որակ հաղորդեցին այդ ամենին: Շուշիից ճառագած նոր գաղափարները տարածվեցին նաև Հայաստանի մյուս նահանգներում:

Արևմտյան Հայաստանի ազատագրման և պետականության վերականգնման գաղափարաբանությունը, ծնունդ առնելով Շուշիում, այդ քաղաքում ծնված ու դաստիարակված գործիչների շնորհիվ համահայկական երանգավորում ստացավ: Հեղափոխական քուրայում իմաստացած այդ գործիչները կարողացան արցախահայության՝ բազում դարերի ընթացքում ազատագրական պայքարի և պետականաշինության ասպարեզում կուտակված հարուստ կենսափորձը համամարդկային արժեքներին համադրելով՝ գտնել այդ ամենի ռացիոնալ հատիկը, ըստ այդմ, չհեռանալով հայության քաղաքակրթական ավանդույթներից, դա տարածել արևմտահայ իրականության մեջ:

Հայ ազատագրական շարժումների պատմության մեջ սուլթանական բռնատիրության դեմ հայդուկային կռիվները և ապստամբական բռնկումները, ինքնապաշտպանական մարտերը թեև չհանգեցրին ժողովրդի ազատագրությանն օսմանյան լծից, բայց և այնպես, հայությունը համոզվեց, որ առանց այդ պայքարի և ոչ մի ժողովուրդ չի հասել իր ազատությանը: Այդ պայքարը թույլ չտվեց, որ հայերի իրավագույրվ վիճակը հանգեցվի ստրկամիտ հնազանդության, և ժողովրդի մեջ միշտ վառ պահեց ազատաբաղձ ոգին: 20-րդ դարում այդ նոր կուտակումները հանգեցրին ազգային պետականության վերակերտմանը:

1917 թ. դեկտեմբերին, մի քանի ամիս առաջ, դեռևս մինչև Անդրկովկասյան ազգային երեք հանրապետությունների ծնունդը, Շուշիում դրվեց պետական մի միավորի հիմքը, որը վերջնական տեսք ստացավ 1918թ. հուլիսին:

Շուշիում ծնված, դաստիարակված և կրթություն ստացած գործիչները առանցքային դերակատարություն ունեցան ՀՀ կազմավորման և զարգացման գործում:

Հայ ժողովրդի այդ կենարար երակը իսպառ ոչնչացնելու նպատակով 1920 թ. մարտի 23-ին թուրքերը հրի մատնեցին և թալանեցին հայկական թաղամասը: Խաղաղ բնակչության սարսափելի սպանող կազմակերպվեց: Հազարավոր հայեր զոհվեցին, հրի մատնվեց քաղաքի հայկական թաղամասը, հրո ճարակից փրկված գույքն ու կայքը բաժին հասավ թուրքերին:

Թուրքերն այս եղեռնագործությունը կազմակերպեցին՝ արդեն ունենալով համապատասխան փորձառություն և, օգտվելով իրենց համար նպաստավոր պայմաններից ու անպատժելիության մթնոլորտից, փորձում էին Արևելյան Հայաստանը նույնպես արժանացնել Արևմտյան Հայաստանի ճակատագրին:

Այդ եղեռնագործությունը շարունակվեց նաև խորհրդային տարիներին: Աղբյուրների ղեկավարությունն ամեն կերպ ձգտում էր Շուշիից ջնջել հայկական հետքը, սպանել հայոց բերդաքաղաքի ֆենոմենը, այնուամենայնիվ աշխարհով մեկ սփռված շուշեցիները հավատով առնեցուն սպասում էին հայրենի քաղաքի պայծառ օրվան: Արցախյան շարժումը Շուշին ազատագրեց դժոխային գերությունից:

Համայն հայության ջանքերով վերընձյուղված Շուշին բազում դարերի ընթացքում այստեղ ապրած հայ մարդկանց օրհնանքի ու արարումի ուժով Արցախի սրտում՝ հայացքը լուսավոր ապագային, փորձում է նորից ու նորից դառնալ հավատի ու մաքառումի անսպառ աղբյուր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Աբրահամյան Հրանտ ՇՈՒՇԻԻ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ	3
Լարիսա Ալավերդյան ՇՈՒՇԻԻ ԱԶՍԱԳՐՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ. ԵՐԵՎ, ԱՅՍՈՐ, ՎԱՂԸ	7
Մարինա Ալեքյան ԱՊՐԻԼՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ ՂԱՐԱՔԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ ԼՈՒՍԱՔԱՆԵԼՈՒ ՈՐՈՇ ԱՌԱՅՔՆԵՐ. ՇՈՒՇԻԻ ԱԶՍԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԻ ԸՆԲՈՆՈՒՄԸ	14
Հովիկ Ավանեսով ԱՐՑԱԽՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱԶՍԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԼՈՒՍԱՔԱՆՈՒՄԸ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ	19
Արսեն Առաքելյան ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՐՊԵՍ ԳՈՅԱՏԵՄԱՆ ՄԻՋՈՑ ԱՐՑԱԽԻ ՕՐԻՆԱԿՈՎ	27
Նելլի Բաղդասարյան ՇՈՒՇԻՆ 19-Դ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՄԻ ՂԱՐԱՔԱՂԻ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԵՎ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ	31
Մելանյա Բալայան ՇՈՒՇԻՆ ՈՐՊԵՍ ԳՈՐԳԱԳՈՐԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԵՎ ՆՐԱ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	38
Միկե Հարությունյան ՎԵՐՍՏԻՆ ՇՈՒՇԻԻ ԱԶՍԱԳՐՄԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՁ	42
Մարինե Հարությունյան ՇՈՒՇԻԻ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ XIX Դ. ԵՐԿՐՈՐԴ ԿԵՄԻՆ	49
Աշոտ Հարությունյան ՇՈՒՇԻ ՔԱՂԱՔԻ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ	56
Մարիամ Հովսեփյան ՇՈՒՇԻԻ ԱՌԱՆՁԻՆ ՀՐԱՋԳԱՅԻՆ ԳՈՒՄԱՐՏԱԿԻ ՄԱՐՏԱԿԱՆ ՈՒՂԻՆ (1991-1994 թթ.)	62
Թեհմինա Մարությունյան ՄԵՐՈ ԽԱՆԶԱՐՅԱՆԻ «ՇՈՒՇԻ» ՎԵՊԻ ՊԱՏՄԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ	68
Էդիկ Մինասյան ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՊԱՐԲԵՐԱՅՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ	75
Գայանե Պետրոսյան ԱԶՍԱԳՐՎԱԾ ՇՈՒՇԻՆ ՈՐՊԵՍ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏ	80
Արմեն Մարգարյան ԱՐՑԱԽԻ ԺՈՂՈՎՐԴԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ «СМОМПК (СБОРНИК МАТЕРИАЛОВ ДЛЯ ОПИСАНИЯ МЕСТНОСТЕЙ И ПЛЕМЕН КАВКАЗА)» ՀԱՆԴԵՄԻ ԷԶԵՐՈՒՄ	86
Նունե Մարումյան ՇՈՒՇԻԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ	91
Գևորգ Ստեփանյան ՄԱՆԿԱՎԱՐԺ-ՀՐԱՊԱՐԱԿԱՆՈՍ ՄԻՄԵՈՆ ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱՆՈՒՄ	96
Վահրամ Բալայան ՇՈՒՇԻԻ ՏԵՂՆ ՈՒ ԴԵՐԸ ՀԱՅՈՑ ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ	103

СОДЕРЖАНИЕ

Грант Абраамян К ВОПРОСУ ОБ АВТОНОМИИ ШУШИ	3
Лариса Алавердян, ПОЛИТИЧЕСКИЕ ПОСЛЕДСТВИЯ ОСВОБОЖДЕНИЯ ШУШИ: ВЧЕРА, СЕГОДНЯ, ЗАВТРА	7
Марина Алесян НЕКОТОРЫЕ КЛЮЧЕВЫЕ КЕЙСЫ В ОСВЕЩЕНИИ ПРОЦЕССА КАРАБАХСКОГО УРЕГУЛИРОВАНИЯ ПОСЛЕ АПРЕЛЬСКОЙ ВОЙНЫ: ОСМЫСЛЕНИЕ ФАКТА ОСВОБОЖДЕНИЯ ШУШИ	14
Овик Аванесов ОСВЕЩЕНИЕ АРЦАХСКОЙ НАЦИОНАЛЬНОЙ ОСВОБОДИТЕЛЬНОЙ БОРЬБЫ В ИСТОРИОГРАФИИ	19
Арсен Аракелян КУЛЬТУРА КАК СРЕДСТВО ВЫЖИВАНИЯ	27
Нелли Багдасарян ШУШИ - АДМИНИСТРАТИВНО-ТЕРРИТОРИАЛЬНЫЙ И ТОРГОВЫЙ ЦЕНТР КАРАБАХА В ПЕРВОЙ ПОЛОВИНЕ 19-ГО ВЕКА	31
Балаян Мелаян ШУШИ КАК ЦЕНТР КОВРОДЕЛИЯ И ЕГО ОСОБЕННОСТИ	38
Мгер Арутюнян И ВНОВЬ ОБ ОСНОВНЫХ ВОПРОСАХ ИСТОРИОГРАФИИ ОСВОБОЖДЕНИЯ ШУШИ	42
Марине Арутюнян КУЛЬТУРНАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ БЛАГОТВОРИТЕЛЬНЫХ ОБЩЕСТВ ШУШИ ВО ВТОРОЙ ПОЛОВИНЕ XIX ВЕКА	49
Ашот Арутюнян ТЕНДЕНЦИИ ИСТОРИОГРАФИИ ГОРОДА ШУШИ	56
Мариам Овсепян БОЕВОЙ ПУТЬ ШУШИНСКОГО ОТДЕЛЬНОГО МОТОСТРЕЛКОВОГО БАТАЛЬОНА (1991-1994 гг.)	62
Теймина Марутян К ВОПРОСУ ОБ ИСТОРИЧНОСТИ В РОМАНЕ СЕРО ХАНЗАДЯНА „ШУШИ,,	68
Эдик Минасян К ВОПРОСУ О ПЕРИОДИЗАЦИИ ИСТОРИИ ТРЕТЬЕЙ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ	75
Гаяне Петросян ОСВОБОЖДЕННЫЙ ШУШИ – ТУРИСТИЧЕСКАЯ ЖЕМЧУЖИНА РЕСПУБЛИКИ АРЦАХ	80
Армен Саргсян НАРОДОВЕДЕНИЕ АРЦАХА ОПУБЛИКОВАННОЕ НА СТРАНИЦАХ ЖУРНАЛА «СМОМПК» (СБОРНИК МАТЕРИАЛОВ ДЛЯ ОПИСАНИЯ МЕСТНОСТЕЙ И ПЛЕМЕН КАВКАЗА)	86
Нуне Сарумян К ВОПРОСУ ОСНОВАНИЯ ШУШИ	91
Геворг Степанян ДЕЯТЕЛЬНОСТЬ ПЕДАГОГА - ПУБЛИЦИСТА СИМЕОНА ТЕР-МИНАСЯНА В АРЦАХЕ	96
Ваграм Балаян ШУШИ, РОЛЬ И МЕСТО В СИСТЕМЕ АРМЯНСКОЙ ЦИВИЛИЗАЦИИ	103

CONTENTS

Abrahamyan Hrant ON THE ISSUE OF AUTONOMY OF SHUSHI	3
Larisa Alaverdyan POLITICAL CONSEQUENCES OF THE LIBERATION OF SHUSHI: YESTERDAY, TODAY, TOMORROW	7
Marina Aleqyan SOME KEY CASES IN COVERING THE KARABAKH CONFLICT SETTLEMENT PROCESS AFTER THE APRIL WAR: REFLECTING THE FACT OF LIBERATION OF SHUSHI	14
Hovik Avanesov THE COVERAGE OF ARTSAKH NATIONAL LIBERATION MOVEMENT IN HISTORIOGRAPHY	19
Arsen Araqueyan CULTURE AS A MEANS OF SURVIVAL	27
Nelli Baghdasaryan SHUSHI - THE ADMINISTRATIVE-TERRITORIAL AND THE TRADE CENTER IN KARABAKH IN THE FIRST HALF OF THE 19TH CENTURY	31
Melanya Balayan SHUSHI AS A CARPET WEAVING CENTER AND ITS PECULIARITIES	38
Mher Harutyunyan ROUND AGAIN THE MAIN ISSUES OF SHUSHI LIBERATION HISTORIOGRAPHY	42
Marine Harutyunyan THE CULTURAL ACTIVITY OF THE CHARITY SOCIETIES OF SHUSHI IN THE SECOND HALF OF THE XIX CENTURY	49
Ashot Harutyunyan TRENDS OF HISTORIOGRAPHY OF THE CITY OF SHUSHI	56
Mariam Hovsepyan THE MILITARY PATH OF THE SEPARATE INFANTRY BATTALION OF SHUSHI (1991- 1994)	62
Tehmina Maroutyan SOME ISSUES OF THE HISTORICAL ESSENCE OF THE NOVEL 'SHUSHI' BY SERO KHANZADYAN	68
Edik Minasyan ON THE PERIODIZATION ISSUE OF THE THIRD REPUBLIC OF ARMENIA	75
Gayane Petrosyan LIBERATED SHUSHI – TOURIST PEARL OF ARTSAKH REPUBLIC	80
Armen Sargsyan ARTSAKH DEMOGRAPHICS IN THE PAGES OF THE MAGAZINE <<СМОМІК (СБОРНИК МАТЕРІАЛІВ ДЛЯ ОПИСАНИЯ МЕСТНОСТЕЙ И ПЛЕМЕН КАВКАЗА)>>	86
Noune Sarumyan ON THE FOUNDATION OF THE SHUSHI CASTLE	91
Gevorg Stepanyan THE ACTIVITY OF THE PETAGOG - PUBLICIST SIMEON TER-MINASYAN IN ARTSAKH	96
Vahram Balayan THE PLACE AND ROLE OF SHUSHI IN THE ARMENIAN CIVILIZATIONAL SYSTEM	103

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ (հոդվածների ժողովածու)

SCIENTIFIC READINGS (collection of articles)

НАУЧНЫЕ ЧТЕНИЯ (сборник статей)

Տեխնիկական խմբագիր՝ Ռ. Հովսեփյան

Հանձնված է շարվածքի՝ 13.09.2017 թ.: Ստորագրված է տպագրության՝ 17.11.2017թ.

Թուղթը՝ օֆսեթ, տպագրությունը՝ օֆսեթ; Ծավալը, 14 տպ. մամուլ: Տպաքանակը՝ 100:

Հիմնադիր՝ Արցախի պետական համալսարան, Ստեփանակերտ, Մ. Գոշի փ. 5

հեռ. (047) 94-04-91, ֆաքս (047) 97-12-14

E-mail: rector@asu.am

ԱրՊՀ հրատարակչություն՝ հեռ. (097) 34-01-86,

e-mail printery.asu@mail.ru

Основатель – Арцахский государственный университет г. Степанакерт, ул.Мхитара Гюша 5,

тел. (047) 94-04-91, факс (0479) 7-12-14

Издательство АргУ: тел. (097) 34-01-86

Founder - Artsakh State University, 5 Mkhitar Gosh st., Stepanakert

Tel.: (047) 94-04-91, Fax: (0479) 7-12-14

ASU Publishing house: Tel. (097) 34-01-86